

ԷԶՄԻԱՅԻՆ



ՀԱՅԿԵՆ



ՌԵԹ
ԺԶ ՏԱՐԻ

Յուրա

ԷԶՄԻԱԾԻՆ

ПА-1015

ՊԱՀՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Է-ժ

1959



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Վասն խաղաղության ամենայն աշխարհի	էջ 3
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնգակը Դուրյան եղիշե պատրիարքի ծննդյան հարյուրամյակը նշելու մասին	6
Հայկական ՍՍՌ Միեկստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գոր- ծերի խորհրդի նախագահ Կր. Ս. Գասպարյանի շնորհավորական հեռագիրը Վեհափառ Հայրապետին	8
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ճառը Մոսկվայում կայացած Խաղաղու- թյան պաշտպանության Սովետական կոմիտեի համագումա- րում	9
ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ— Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վագ- գեն Ա Հայրապետի մասնակցությունը Մոսկվայում կայացած Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի համա- գումարին	12
Պաշտոնական հաղորդագրություն Ս. Էջմիածնի Մայր Տաճարի և Ս. Հոփսիմեի տաճարի պեղումների մասին	20
Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ ՈՒ Մ	22
Ամավերջի հանդիսությունները Հոգևոր Ճեմարանում	25
ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՀՐՈՒԴՅԱՆ— Հայաստանյայց եկեղեցին որպես հայրենասիրության օջախ	32
ՆՈՒՊԱՐ ՊԱՅԱՆ— Դ ե պ ի ա Ր և	35
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ— Արշակ Ալպոյանյան	37
Ա. ԱՊՈՅԱՃՅԱՆ— Բրուսայի շրջանի հայերը	39
ՌԻԶԱՐԴ ԲՈՒՐԴՈՆ, ԶՈՆ ԴՈՆԱՏ, ՊՈՒ ԿՈՐԱԼԵԿ— Ա ղ թ ա մ ա Ր	45
Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ— Նոր Գետկա վանք կամ Գոշավանք	50
ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՀՐՈՒԴՅԱՆ— Սուրբ Էջմիածնի Գևորգյան ճե- մարանի հիմնադրման իննսուհամյակի առթիվ	56
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ— Յո՞ երբաս Անթիլիաս	63
Հանգիստ արժ. Տ. Հովհաննես ավագ ֆահանա Հովհաննեսյանի	67

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“
Redaction of the magazin „Etchmiadzin“, Etchmiadzin, Armenia, USSR

հոկտ. 1959 թ.



ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՆՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԺԵՄԱՐԱՆԸ

ՀԱՅՏՏՐԱՐՈՒՄ Է ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

1959—1960 ՈՒՍՈՒՄՆԵԿԱՆ ՏԱՐԵԹՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը գիշերօթիկ դպրոց է վեց դասարաններով—երեկո՝ դասարանական, երեկո՝ լսարանական: Նրա նպատակն է պատրաստել զարգացած և ազգանվեր հոգևորականներ: Ճեմարանը տալիս է բարձրագույն հոգևոր կրթություն: Ուսանողներին ձեռնարկ տրամադրվում են հանրակացարան բոլոր հարմարություններով, հանդերձեղեն, սնունդ, գրեական պիտույքներ և այլն:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան կարող են ընդունվել Հայաստանյայց Առաքելական եկեղեցու գավակ եղող 18-ից 25 տարեկան ամուրի անձինք, որոնք չեն պատկանում որևէ կուսակցության, զբոժ են ֆիզիկական թերությունից և հիվանդությունից, չեն դատված և ունեն անվազն 7-ամյա կրթություն:

Դիմողները բնություն պիտի հանձնեն հայոց լեզվից ու գրականությունից, հայ ժողովրդի պատմությունից և երգեցողությունից: Բարձր կրթություն ունեցող թեկնածուները կտեղավորվեն համապատասխան դասարաններում:

Դիմողները պիտի ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Ինքնագիր դիմում այն մասին, որ իրենք Ճեմարանն ավարտելուց հետո ցանկություն ունեն հոգևորական դառնալու:
2. Բարի վարուց վկայական՝ ստորագրված եկեղեցական իշխանության կողմից:
3. Բժշկական վկայական՝ առողջության մասին:
4. Ծննդյան և մկրտության վկայական:
5. Կրթության վկայական կամ համապատասխան տեղեկանք:
6. Նրեք լուսանկար (լուսանկարված դիմումի օրերին):

Արտասահմանյան երկրների թեկնածուները պետք է իրենց դիմումն ու հարակից փաստաթղթերը ներկայացնեն իրենց թեմերի հոգևորական առաջնորդներին ոչ ուշ քան սույն թվականի օգոստոսի 1-ը, իսկ ներքին թեմերի թեկնածուները՝ մինչև օգոստոսի 15-ը՝ Հոգևոր Ճեմարան, Հայկական ՍՍՌ, Էջմիածին:

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԲԱՀԱՄՅԱՆ

(Վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի)

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԴՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

114-102



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՎԱՍՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ



ամաշխարհային երկրորդ պատերազմի արյունոտ ողբերգությունը ապրած և տեսած բարի կամքի տեր միլիոնավոր մարդիկ, կրոնական ու ֆաղաֆական տարբեր հայացքների տեր բազմաթիվ անձնավորություններ, գիտության, արվեստի ականավոր գործիչներ, ծնողներ և ընտանիքի հարազատներ, մոտ 10 տարի առաջ, ինքնարյուծ կերպով իրենց միանամուտ ձայնը բարձրացրին հանուն խաղաղության, ընդդեմ նոր պատերազմի սպառնալիքի: Երկրագնդի բոլոր մասերում կազմակերպվեցին խաղաղության պաշտպանության տեղական մարմիններ, և ապու 1948 թվականին ստեղծվեց Խաղաղության Պաշտպանության Համաշխարհային մեյայուն Խորհուրդ, որի վրա պարտականություն դրվեց պայքարել հանուն խաղաղության, ընդդեմ պատերազմի:

Օրերի հետ միասին անեց, կազմակերպվեց խաղաղության պաշտպանության համաժողովրդական շարժումը և դարձավ անխորտակելի ուժ աշխարհում, որպես ամբողջական արտահայտությունը բարի կամքի տեր միլիոնավոր աշխատավոր, խաղաղասեր ժողովուրդների ձգտումների:

Խաղաղության պաշտպանության համաշխարհային շարժման իր գործուն և անմիջական մասնակցությունը բերեց նաև Քրիստոնեական եկեղեցին, որպես խաղաղության վրա խորհրդավոր աստվածաբան մի հաստատություն:

Քրիստոնեությունը խաղաղության կրոն է և Քրիստոս՝ «իշխան խաղաղության», որ եկավ խաղաղացնելու համար ինքն իր մեջ այնպիսի, բաժան-բաժան դարձած ան-

խաղաղ աշխարհը և հաշտեցնելու Աստուծուց հեռացած, շարացած, ապականված և խռոված մարդկությունը Արարչի հետ: Քրիստոնեական կրոնը խաղաղությունը սիրողներին, այն պաշտպանողներին և խաղաղության համար պայքարողներին համարում է «Աստուծոյ որդիք»:

«Երանի՜ խաղաղարարաց, զի նո՛ւա որդիք Աստուծոյ կոչեցցին»:

Քրիստոնեական եկեղեցին, այդ քվում մանավանդ Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, ամեն օր աղոթում է «վասն խաղաղության ամենայն աշխարհի»: Մեր կրոնական-հոգևոր բանաստեղծության ամենասիրված և ժողովրդական բեմաներից մեկն է եղել խաղաղության բեման: Մեր եկեղեցու կամարների տակ, ամեն օր, առավոտ և երեկոյան ժամասացության պահին հնչում են խաղաղության օրհներգերն ու աղոթքները, փարգներն ու պատգամները: Մեր նախնիները դարեր շարունակ մեր տանաբներում աղոթել են և այսօր էլ մեր հավատացյալ ժողովուրդը աղոթում է «ամենայն աշխարհի խաղաղության» համար: Նա այդ խաղաղությունը ցանկանում է երկրի բոլոր ժողովուրդներին ու ազգերին, կրոններին ու լեզուներին, այն ցանկանում է «ամենեցուն», բոլոր նրանց, որոնք կարիք ունեն խաղաղության և խաղաղ, ստեղծագործ աշխատանքի:

Շատ խոր և անկեղծ են եղել մեր ժողովրդի և եկեղեցու հայացքները խաղաղ աշխատանքի և խաղաղության մասին: Մեր ժողովուրդը իր կյանքի փորձով շատ բարձր է գնահատել և՛ աշխատանքը և՛ խաղաղությունը, որովհետև նա ապրել է միշտ իր դարձվապատկով, իր նակատի փոխհով, նա ստեղծագործել է իր հանճարով և երբեք աշխ-

չի ունեցել օտարի հողին, ինչի՞ն ու վաստակին:

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ: Անա՛րայր ժողովուրդների անկողնայտելի հրամայական իրավունք, մանավանդ այսօր, համաշխարհային երկրորդ պատերազմի արհաճիվներին հետո, երբ երկրի վրա խաղաղության և ժողովուրդների միջև խաղաղ համագործակցության վրա նորից իր մոռյալ ձեռքն է փորձում երկարել ստոմային և ջրածնային զենքերի սառածափը: Ո՛չ մի ծանանակ աշխարհը չի տեսել այնքան արյուն ու արցունք, այնքան մահ և ավերածություն, որքան առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմներում: Մարդկությունը երբեք չի ապրել այնքան տառապանք ու վիշտ, որքան մեր օրերի սերունդը այս վերջին հիսնամյակում: Իսկ է՛լ ավելի անավար, կործանարար, բնաջնջող կլինի երրորդ համաշխարհային պատերազմը, եթե հնարավոր չլինի կասեցնել այն՝ բարի կամքի տեր, խաղաղության ծառավի միլիոնավոր մարդկանց վճռական, համարձակ և հետևողական պայմարով:

Մնայուն խաղաղությունը միշտ հույսն է եղել մարդկության: Սակայն այսօր, ատոմական դարում մանավանդ, հանապազօրյա հացի, ջրի, կյանքի շափ խաղաղությունը անհրաժեշտ է աշխարհին, մարդկության: Անհա թե ինչ՝ խաղաղության պաշտպանության գործը, կրոնների, ազգերի, փաղափական տարբեր սիստեմների համագործակցության և խաղաղ գոյակցության սկզբունքը արդար և նվիրական գործ է և բոլոր ժողովուրդները, քրիստոնյա և ոչ քրիստոնյա աշխարհը, իրենց սեփական կյանքով և արյունով, պատրաստ են փակելու ընդմիշտ նոր պատերազմի արյունոտ ճանապարհը: ՊԱՏԵՐԱԶՄԸ ՈՃԻՐ է ԱՍՏՈՒԾՈՒԹՅԱՆ, ՈՃԻՐ է ՄԱՐԿԱՆՏԻՆՔԱՆ ՎԵՋ ՈՒ ՆՎԻՐԱԿԱՆ ԻԴԵԱԼՆԵՐԻ ԴԵՄ, ՈՃԻՐ է ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՊՐՈԳՐԵՍԻ ԴԵՄ: Այսօր այնքան մխիթարական ու ոգևորիչ է տեսնել, որ աշխարհի ողջ մարդկությունը վճռաբար դեմ է պատերազմին և իր ջանքերը միավորել է ազնիվ պայքարում հանուն խաղաղության և աշխատում է չեզոքացնել «ուժի փաղափականությունը» և հռչակելու իրավունքի, արդարության, ժողովուրդների ազգային-կրոնական վեճերավարության, իրավանականության սկզբունքը:

Այսպիսի մարդասիրական, սրտագին զգացմունքով, քրիստոնեական լավատեսությամբ և վառ հավատով է, որ Վեհափառ Հայրապետը մայիսի 14-ին, հանուն Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և հայ հավատացյալ ժողովրդի, Մոսկվայում մասնակցեց խաղաղության պաշտպանության

Սովետական կոմիտեի համագումարին և հանդես եկավ խաղաղության նվիրված բովանդակալից ելույթ:

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռից, «սուրբ ցրական Արարատի հայոց աշխարհից և քրիստոնեական հավատի բազմադարյան կենտրոն Ս. Էջմիածնից» խաղաղության ողջույն տարավ Մոսկվային, ՍՍՄՄ խաղաղության կողմնակիցների համագումարին և կարգաց խաղաղության նվիրված Իր հայրապետական խոսքը՝ «Ի ՍՍՐ ԱՍՏՈՒԾՈՒ, Ի ՍՍՐ ՄԱՐԿԱՆՏԻՆ, Ի ՍՍՐ ԿՅԱՆՔԻ ԵՎ Ի ՍՍՐ ՔԱՂԱՔԱԿՐՈՒԹՅԱՆ: ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔԻ ՈՒԺՆԵՐԻ, ԱՌՈՂՋ ԵՎ ՇԻՆԱՐԱՐ ՈՒԺՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԳՈՅԱՎԻՃԱԿՆ Է՝ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ:

«Մենք Մեր խոսքը մասնավորելով մեր փոքր Ազգին, հայ ժողովրդին, պետք է դառնալով հաստատենք, որ նա վերջին հարյուրամյակների ընթացքում, և մանավանդ 1915—1916-ի սև տարիներին, անելի կերպով տուժեց, կտորվեց և գրեթե բնաջնջ եղավ ազգովին ամբողջապես առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում՝ իր իսկ պատմական Հայրենի հողի վրա:

Մահվան անդունդից փրկված հայ ժողովրդի մի մասը, այսօր անկողնաված արևոտ և խաղաղ Սովետական Հայկական Հանրապետության մեջ, իսկ մյուս մասը, ավելի քան մեկ միլիոն, դժբախտ նահատակների հարվածով ցրված ի սփյուռս աշխարհի բոլոր հինգ մայր ցամաքների վրա, գուցե ավելի քան ուրիշ ժողովուրդներ մի տարբեր իդեոլոգիայի, այն է՝ տեսնել աշխարհում տեսկալի խաղաղ գոյակցական և երկրների միջև բնական հարաբերություններ և բարեկամություն, որպեսզի խաղաղությամբ ապրի ու զարգանա նաև իրենց Մայր երկիրը՝ Սովետական Հայաստանը, որ անա շուրջ քառասուն տարի բուծում է իր դարավոր վերերը, վերաշինվում է, առաջադիմում կյանքի բոլոր բնագավառներում ու ծաղկում է երջանիկ:

ԱՀԱ ԹԵ ԻՆՉՈՒՆ ԶԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՄԵՐ ՀԱՎԱՏԱՅՑԱԼ ԺՈՂՈՎՈՐԴԸ, Ս. ԷԶՄԻԱՍԵՆԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ, ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ ԵՎ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ ԿԱՆԳԵԱԾ Է ԵՂԵՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԿԱՆԳԵԱԾ ՄՆԱԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԻԴԵԱԼԻ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ:

Մեր ժողովուրդը իր ժամանակակից պատմության վերջին 40-ամյակին միայն կարողացավ ձեռք բերել այն իրական, մնայուն խաղաղությունը, որի համար նա պայքարել է, երազել, աշխատել և աղոթել: Այդ նույն վաճառ խաղաղության պայմաններում աճել է մեր ժողովրդի կենսունակությունը և նա տեսել է, իր կյանքի փորձով հասկացել

խաղաղության արժեքը և հետևաբար կանգնել է խաղաղասեր ժողովուրդների ընտանիքի մեջ, խաղաղության համար մղվող պայքարի առաջին շարժում: Ո՛չ մի ժողովուրդ, Բելառուսական ո՛չ մի եկեղեցի այնքան չի տառապել, չի շարշարվել ինչքան մեր ժողովուրդն ու եկեղեցին: Դարերի ընթացքում բռնակալ ուժերը միշտ սուր են բարձրացրել մեր ազատության և անկախության վրա: Վիրավորել են մեր ազգային արժանապատվությունը, արհամարհել են մեր լեզուն ու եկեղեցին, ավերել, ոչնչացրել մեր ստեղծագործ հոգևոր և նյութական մշակույթի հուշարձանները: Բայց մենք ոչ ոքի դեմ ատելության ու փոխվրեժի զգացումով տոգորված չենք եղել: Սիրել ենք միշտ ազատությանը ու խաղաղությանը ապրել: Ու նորից ստեղծագործել ենք, շենացրել մեր խաղաղ աշխատանքով, մեր խաղաղասիրությամբ: Մեր հոգում երբեք չի մարել խաղաղության ձգտումը և վերջնական արդարության և հաղթանակի նկատմամբ պայծառ հույսն ու անկտրում հավատը:

Խաղաղությունը, որ եղել է շարունակ բաղձանքը բոլոր տանջված և իրավազրկված


ժողովուրդների, սիրելի է ողջ մարդկության: Խաղաղություն են ցանկանում բոլոր նրանք, որոնց համար բանկազին է իրենց հայրենիքի բարգավաճումը, ստեղծագործ աշխատանքը, իրենց ժողովրդի ազատությունն ու ապագան, իրենց ծնողների, հարազատների, երեխաների կյանքը: Բայց քիչ է խաղաղություն ցանկանալը, խաղաղության համար միայն աղոթելը: ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ է ՆՎԱՃՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ, ՊԱՏՔԱՐՈՎ, ԱՂՈՒԹՔՈՎ, ՄԻԱՀԱՄՈՒՌ ԿԱՄՔՈՎ, «Բոլորն յափշտակեցին զնա» (Մատթ. ԺԱ 12):

Խաղաղության պաշտպանության գործը արդար ու նվիրական գործ է, որովհետև այն աստվածահանո գործ է:

Հայ եկեղեցին ջերմագին աղոթել է միշտ և պայքարել խաղաղության համար, որպեսզի «լուսցին պատերազմումն, դադարեցին յարձակումն բշտամեաց, տեկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի»:

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԿՀԱՂԹԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ: Այս է խորունկ հավատը բարի կամքի տեք, խաղաղության ծառավի միլիոնավոր մարդկանց:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԴՈՒՐԹԱՆ ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐԺԻ ԾՆՆԴՅԱՆ
ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԸ ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՎԱԶԳԻՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ԳՐԻՍՏՈՍԻ
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՄՏՈՒԾՈՑ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԵՄՅԵՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԲՈՒՌՈՑ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ՍՐՈՑ ԿԱԲՈՒՂԻԿԻ ԷԶՄԻԱՇՆԻ**

ՈՂՋՈ՛ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԵԿԵՂԵՑԻՈՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,
ՔԱՀԱՆԱՅԻՑ, ՍԱՐԿԱՒԱԳԱՅ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՅՅԱԼ ԺՈՂՈՎՐԻԵԱՆ

Ուրախ է մեր Ս. Եկեղեցին, ուրախ է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որ Կոստանդնուպոլսոյ Ամենապատիւ Պատրիարք Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի գլխավորությամբ, հոբելյանական հանդիսություններով կնշվի Արմաշի դպրեվանոց նախկին վանահայր և վերատեսուչ, Կոստանդնուպոլսոյ և Նրուսադեմի պատրիարք երջանկահիշատակ Տ. Նղիշե արքեպիսկոպոս Դուրյանի ծննդյան հարյուրամյակը:

Հոգեւոյս Դուրյան Սրբազան իր առաքինազարդ հոգիով, իր բովանդակ կյանքով ու վաստակով, Հայ Եկեղեցիի և հայ ժողովուրդի հանդեպ ունեցած իր խորունկ սիրով և մեծ նվիրումով, աներեւ կանգնած է մեր շնորհներով լեցուն հայրապետներու յուսափաղանգին մեջ և հավետ կենդանի պիտի մնա անոր փառքի հիշատակը՝ որպէս Աստուծոյ շունչը կրող ընտիր անոթ, որպէս փառազիշ, բանաստեղծ և լեզվագետ, որպէս տեսլապաշտ մտածող և մեծ բարոյախոս. «ՄԱՀԿԱՆԱՑՈՒ ԾՆԵԱԼ՝ ԱՆՄԱՀ ԶԻՒՐՆ ՅԻՇԱՏԱԿ ԵԹՈՂ, ՊԱՏՈՒԵԱՅ ԶՊԱՏԿԵՐՆ, ՊԱՏԿԱՌԵԱՅ Ի ԿՈԶՆԱԿԱՆԷՆ, ՓՈԽԱՆՈՐԴԵԱՅ ԶԿԵԱՆՍ» (Խորեանցի):

Սկյուտարցի, համեստ արհեստավորի ընտանիքի մը ծոցին մեջ ծնած, ան հոգիով անեցավ և բարձրացավ ու զիտցավ իր կյանքը վերածել վսեմ առաքելություն մը, դառնալով ժԹ դարու մեր ազգային-եկեղեցական զարթոնքի ինքնատիպ և անկրկնելի մեծություններէն մին:

Դուրյան Սրբազան ավելի քան կես դար ուսավ և ուսույց, աղոթեց ու գրեց, դասախոսեց, դաստիարակեց և փառազեց ու իր պաշտոնը փառավորեց սրտեռանդ նվիրումի մը բարձր արդյունավորությամբ. «ԳԵՐԱԶԱՆՅԵԱԼ ՔԱՆ ԶԱՍՆԱՅՆ, ՈՅՔ ԶԱՅՆՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԷՆ ԱՌԱՔԻՆԻՔ» (հորեկնացի):

Դուրյան Սրբազան մեծ էր նաև որպէս հոգևոր-քառայական բարձր նկարագիր: Անոր մաքրամաքուր անձնավորության հմայքը, սրտի փաղցրությունը և ջերմությունը քանի-քանի սերունդներու համար եղան հոգեկան սնունդի շտեմարան և լույսի աղբյուր:

Եղիշե արհեստիպետու Դուրյան մեր օրերու Շնորհալին եղավ, սիրված, հարգված բոլորէն:

Աստվածաշէն Ս. Էջմիածնէն և Մեր սրտեն օրհնություն, օրհնություն և լույս իր պայծառ հիշատակին: Թող անթառամ մնա իր դասնական պայծառ և միշտ, և բոլ Տերը արժանավոր հաջորդներ պարգևե մեր Ս. եկեղեցիին, ի փառս հավատավոր Հայոց Ազգին:

Արդ, սիրելի՛ Մեր, «ԽՈՍՏՈՎԱՆ ԵՂԵՐՈՒՔ ՅԻՇԱՏԱԿԻ ՍՐՐՈՒԹԵԱՆ ՆՈՐԱ» (Սաղմ. ՂԶ 12) և «ԱՍՏՈՒԱՄ ՅՈՒՍՈՅ ԼԻ ԱՐԱՍՅԷ ԶԶԵԶ ԱՄԵՆԱՅՆ ԽՆԴՈՒԹԵԱՄ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄ, ԱՌԱԽԵԼՈՒԼ ԶԵԶ ՅՈՒՍՈՎ ԶՕՐՈՒԹԵԱՄ ԼՈՒՅՆ ՍՐՐՈՅ» (Հոռմ. ԺԵ 13):

Վաչագհ Ս.


ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԻԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կռեղակս ի 10-ն յուլիսի

1959 Փրկչական ամի.

և ի տումարիս Հայոց ՌնԹ,

ի վառս Սրբոյ Էջմիածնի:



**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊՐ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀՆՈՒԱԳԻՐԸ
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

ՎԱՋԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Մ Ո Ս Կ Վ Ա

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առնթրել Հայ եկեղեցու գործերի խորհուրդը շնորհավորում է Ձեզ խաղաղության պաշտպանության շքանշանով պարգևատրվելու առթիվ: Ցանկանում ենք Ձեզ հետագա հաջողություններ ամբողջ աշխարհի խաղաղության պաշտպանության գործում:

Ս: ԳԱՍՊԱՐՅԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ե Ր Ե Վ Ա Ն





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՃԱՌԷ ՄԱՍԿՎԱՅՈՒՄ ԿԱՅԱՑԱՆ ԻԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ



Ուրբգրական Արարատի Հայոց աշխարհից և Բրիտանական հավատի բազմադարյան կենտրոն Ս. Էջմիածնից ողջունում ենք Ձեզ բոլորիդ՝ Սովետական խաղաղ Հայրենիքի խաղաղասեր Բաղաճացիներ, սիրելի եղբայրներ և քույրեր Մեր:

Համայն մարդկության, անխտիր բոլոր ժողովուրդների՝ խաղաղ ապրելու իղծը, և բոլոր երկինքների տակ խաղաղությունը պաշտպանելու և ամրապնդված տեսնելու մեր հայրենի ժողովուրդների ազնիվ կամեցողությունը զմեզ համախմբել է այստեղ, մի անգամ ևս ասելու համար մեր նրտերից բխած խոսքը ի սեր Աստուծո, ի սեր մարդու, ի սեր կյանքի և ի սեր Բաղաճակրության:

Մեր օրերի ամենամեծ խնդիրը անտարակույս որ խաղաղության և պատերազմի հարցն է: Բարիքն և չարիքն, շինելու և քանդելու կամեցողությանց միջև հին պայքարն է, որ մեր օրերում ներկայանում է նոր ձևերի, նոր պայմանների մեջ, սպառնալի անավոր չափեր ստացած:

Մենք, մանավանդ մենք հոգեւորականներս, երկյուղի և անստուգության մեջ տանջվող այսօրվա մարդկության պարտինք ցույց տալ բարիքն անապարհը, խաղաղության անապարհը: Այդ է փառքը մարդուն: Այդ լինելու է փառքը եկեղեցիների և ժողովուրդների ու պետությունների ղեկավարների, որոնց ձեռնում գտնվում է ամբողջ աշխարհի հակառակորդը, մարդկության և մարդկային մշակույթի լինել շինելու հարցը:

«ՆՐԱՆԻ՝ ԽԱՂԱՂԱՐԱՐԱՅ, ԶԻ ՆՈՔԱ ՈՐԴԻՔ ԱՍՏՈՒԾՈՅ ԿՈՉԵՍՑԻՆ»:

Պատմութեան ողբերգական փորձը և մեր գիտակցությունն այլևս բույլ չեն տալիս այլ կերպ մտածել և այլ կերպ գործել:

Հետևաբար մեր ողորքը՝ «վասն խաղաղութեան ամենայն աշխարհի», պետք է հզոր հնչել: Եվ մեր աղորթին պետք է միանա կենդանի գործը, կազմակերպված աշխատանքը, որ ի մի ձուլե բոլոր մարդկանց և բոլոր ժողովուրդներին մի ընդհանուր և սրբազան դաշինքով, ապահովելու համար աշխարհի տևական խաղաղ և բարօր կյանքը և արգելելու համար ամեն տեսակի բնաջնջման գեների շինությունը և փորձարկումները և խաղաղության աստվածային պատվիրանը դարձնելու համար միջազգային կյանքի փոխհարաբերությունների գերագույն կանոն:

Խաղաղությունը կյանքի ուժերի, առողջ և շինարար ուժերի ներդաշնակ գոյավիճակն է՝ արդարության բարոյական օրենքի լույսի տակ:

Եվ Մենք լավատես ենք: Լավատես ենք նախ, որովհետև հավատում ենք աստվածային նախախնամության, որ ամեն բանից առաջ մարդասիրության և

խաղաղության մի տնօրինություն է: Քրիստոսի Ավետարանը՝ տեւական լսեմ մի կոչ է սիրո և խաղաղության: Մեր Եկեղեցու հիմնադիրը և գլուխը «ԱՒԵՏԱՐԱՆՆԱՑ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՁԵԶ, ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՀՆՈՒՄՈՐԱՑ, ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՄԵՐԶԱՒՈՐԱՑ», — ասում է մեծ առաքյալը (Յփես. Բ 17):

Մեր լավատեսության մեջ Մենք գործում ենք նաև այն իրողությամբ, որ խաղաղության սյուներ հանդիսանում են կրոնների բոլոր հիմնադիրները, բոլոր Եկեղեցիները, բոլոր ժամանակների մարդասեր մտածողները և գործիչները, գիտությունների և արվեստների նշամարիտ մեծերը, մեկ խոսքով համայն մարդկության խիղճը: Խաղաղության հետ մեզ հետ են կյանքի բոլոր գաղութները, աշխարհի բոլոր մայրերը, բոլոր երեխաները:

Խաղաղություն են տեսնում այսօր բոլոր ազնիվ մարդիկ և բոլոր ժողովուրդները անխտիր, թե՛ մեծ թե՛ փոքր ժողովուրդները հավասարապես: Բայց թող բայլ տրվի Մեզ ընդգծել՝ մա՛նավանդ փոքր ժողովուրդները: Վասնզի հաճախ, պատերազմների հետևանքով, նրանք առավել են տուժել:

Մենք Մեր խոսքը մասնավորելով մեր փոքր Ազգին, հայ ժողովրդին, պետք է դառնությամբ հաստատենք, որ նա վերջին հարյուրամյակների ընթացքում, և մանավանդ 1915—1916-ի սև տարիներին, անուխի կերպով տուժեց, կոտորվեց և գրեթե բնաջինջ եղավ ազգովին ամբողջապես առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում՝ իր իսկ պատմական Հայրենի հողի վրա:

Մահվան անդունդից փրկված հայ ժողովրդի մի մասը, այսօր մեկտեղված արևոտ և խաղաղ Սովետական Հայկական Հանրապետության մեջ, իսկ մյուս մասը, ավելի քան մեկ միլիոն, դժբախտ հակատագրի հարվածով ցրված ի սփյուռս աշխարհի բոլոր հինգ մայր ցամաքների վրա, գուցե ավելի քան ուրիշ ժողովուրդներ մի սուրբ իդո ունեն, այն է՝ տեսնել աշխարհում տեական խաղաղ գոյակիման և երկրների միջև բնականոն հարաբերություններ և բարեկամություն, որպեսզի խաղաղությամբ ապրի ու զարգանա նաև իրենց Մայր երկիրը՝ Սովետական Հայաստանը, որ անա շուրջ քառասուն տարի բուժում է իր դարավոր վերքերը, վերաշինվում է, առաջադիմում կյանքի բոլոր բնագավառներում ու ծաղկում է երջանիկ:

Ահա թե ինչո՞ւ Հայ Եկեղեցին և մեր հավատացյալ ժողովուրդը, Ս. Էջմիածնի գլխավորությամբ, Հայրենիքում և Սփյուռքում կանգնած է եղել և շարունակում է կանգնած մնալ հայ ժողովրդի և Հայրենիքի գերագույն իդեալի՝ խաղաղության պաշտպանության դիրքերում:

Եվ ինչպես վերջին Հայրենական պատերազմի ընթացքում, Հայ Եկեղեցին, հանգուցյալ Գևորգ Զ Կաթողիկոսի ղեկավարությամբ, ողջ հայ հավատացյալ ժողովուրդը Հայրենիքից ներս և արտասահմանի մեջ ստփի հանեց վտանգի պահին, ի պաշտպանություն Մայր Հայրենիքի, այնպես էլ այսօր Մենք, մեր հայ հավատացյալ ժողովրդով, նույն վճռականությամբ կանգնած ենք մնում աշխարհի խաղաղության պաշտպանության և ժողովուրդների բարեկամության ամրապնդման դիրքերում:

Մեր հայրենի կառավարության եռանդուն ղեկավար, ՍՍՌՄ Մինիստրների Սովետի նախագահ Նոբին Գերագանցություն Ն. Խուլշչովը մայիսի 16-ին արտասանած իր հառում, ի միջի այլոց ասաց հավատացյալների և հոգևորականների մասին. «Մենք ցանկանում ենք, որ բոլոր հավատացյալները և ոչ հավատացյալները միացնեն իրենց ուժերը ամենագլխավոր հարցում, այսինքն խաղաղության պայքարում, հանուն այն բանի, որ բոլոր ժողովուրդները ապրեն եղբայրների պես, որ պատերազմներ չմղեն և ապրեն բարեկամության և խաղաղության մեջ»:

Մենք մեծ գոհունակությամբ ողջունում ենք այս իմաստուն մտքերը, որոնք մեր Մեծ Հայրենիքի ժողովուրդների միասնության առողջ գիտակցությունից են բխում: Մենք, Հայ Եկեղեցու ղեկավարներս, պիտի կամենայինք վստահեցնել Ձեզ բոլորիդ, որ Հայ Եկեղեցու սպասավորները և հավատացյալները, ինչպես մոտիկ անցյալում, նաև այսօր, միշտ ամուր կանգնած պիտի մնան այդ հայրենական միասնության գրանիտյա գիտակցության վեմի վրա:

Մենք մեր հույսը դրել ենք Աստուծո և մարդկային հոգու բարի ուժերի վրա, և իբրև ամբողջ աշխարհի մեջ տարածված նկեղեցի, մեր գործունեությունը հիմնում ենք այն հավատի վրա, որ պետությունների և ազգությունների միջև բարեկամության և փոխըմբռնման մթնոլորտ ստեղծվելով, պիտի խաղաղի նաև արտասահմանի հայ ժողովրդի կյանքը, որ այնքան վշտեր է կրում այսօր մանավանդ Միջին Արևելքի մի շարք երկրներում, միջազգային լարվածության ներկա անբնական պայմանների բերումով:

Մենք հավատում ենք, որ Արևմուտքը և Արևելքը կարող են խաղաղ ու արդար կերպով լուծել բոլոր տեսակի վիճելի հարցերը և ուրախ ենք, որ մեծ պետությունների ներկայացուցիչները այս պահուս կողմ-կողմի նստած մտածում են և ծրագրում գտնել խաղաղության ուղին: Պետք է միշտ լավատեսորեն հուսալ, որ նման բանակցություններ ուշ կամ կանուխ իրենց բարի և շինարար պտուղները կտան:

Մենք ի սրտե մաղթում ենք մանավանդ, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները և մեր Սովետական Հայրենիքը, առաջնորդված երկուսն էլ համամարդկային վեճ իդեալներով, իրենց միացյալ նիզերի շնորհիվ, կարողանան ի վերջո դառնալ այն երկու ամուր սյուները, որոնց վրա ապահով պիտի հենվի մեր աշխարհի խաղաղության հաղթական կամարը՝ ի փառս Աստուծո և ի փառս մարդու:

Հայ նկեղեցին, քե՛ր՝ Մեր Հայրենիքում քե՛ր արտասահմանում, խաղաղություն պիտի փառզե և խաղաղության համար պիտի գործե:

Արդ, այս հանդիսավոր առթիվ վերանորոգելով Մեր խաղաղության ուխտը, մի անգամ ևս կոչ ենք անում բոլորին, մանավանդ մեծ պետությունների բոլոր մեծահարգ ղեկավարներին, որ կանգ առնեն պատերազմ շղթայագերծելու իրենց սրտումների մեջ և գտնեն խաղաղության նախապահները՝ համբերությամբ ու լավատեսությամբ, որ դադարեցնեն ամեն տեսակ առումային զենքերի վաճառքները և փորձեն իրար հասկանալ փոխադարձ զիջումներով՝ նշմարողության և արդարության բարի զենքերով, որ շտեմանեն ատելություն մարդկանց և ժողովուրդների միջև, այլ իրար նաեաչեն, իրար գնահատեն ու իրար օգնեն այս աշխարհի վրա, որ իր բազում բարիքներով բոլորին է պատկանում հավասարապես, այս արևի տակ, որ բոլորին է լուսավորում ու ջերմացնում հավասարապես, միևնույն Աստուծո օրհնության ներքև, որ բոլորին է բաշխում հավասարապես:

«ՆԵՂԵՑԻՆ ԳՈՐԾՔ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ. ՆԻ ԿԱՆՑԻ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԶՀԱՆԳԻՍՏ. ՆԻ ՅՈՒՍՍՅԵԱԼՔՆ ՆԵՂԵՑԻՆ ՄԻՆՉՆԻ ՅԱԻՏԵԱՆ» (Եսայի 18 17):





ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԺՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՋԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԵՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԿՆՅԱՅԱԺ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԳՆՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Սույն թվականի մայիսի 24-ին, կիրակի օրը, խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի պաշտոնական հրավերով, Ազգիս Սրբազնագույն Հայրապետը ուղևորվեց Մոսկվա՝ մասնակցելու խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի ընդլայնված նիստին, որ նվիրված էր վերջերս Ստոկհոլմում գումարված հորեկյանական սեսիայի արդյունքներին և ՍՍՌՄ խաղաղության կողմնակիցների խնդիրներին:

Մայիսի 24-ն է, Հայաստան աշխարհի արևոտ օրերից մեկը: Այսօր Մայր Աթոռ իր ողջ անձնակազմով սովորականից շուտ է արթնացել և պատրաստության մեջ է՝ բարի ճանապարհ մաղթելու իր շատ սիրելի Հայրապետին:

Երևանի օդանավակայանում նորին Սրբությանը ճանապարհում է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առնթքեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյան: Օդանավակայանում են նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Երևանի քահանայական դասը և Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը, թեմական ու եկեղեցական խորհուրդների անդամները՝ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետի գլխավորությամբ, և բավական մեծ թվով հավատացյալներ: Տեղական ժամանակով ժամը 8.15-ին ինքնաթիռը կտր-

վում է Մայր Հողից և ուղղություն վերցնում դեպի հյուսիս-արևմուտք՝ դեպի Մոսկվա: Երեկոյան ժամը 5-ին վայրէջք ենք կատարում մեծ մայրաքաղաքի օդանավակայանում:

Մայիսի 26-ին, երեքշաբթի օրը, առավոտյան պաշտոնական այցով Վեհափառ Հայրապետին է այցելում խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի գլխավոր քարտուղար պր. Կոտովը և հայտնում նորին Սրբությանը ժողովի ծրագրերի մասին: Նույն օրը, հետ ճաշու ժամը 3-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի և հոգեշնորհ Տ. Նիկիտ վարդապետ Սարգսյանի, առաջնորդվում է դեպի Արվեստի աշխատողների տունը, որտեղ բացվում է խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի ընդլայնված նիստը: Նախագահության սեղանի շուրջը, նախագահի աջ կողմում, տեղ է հատկացվում Ազգիս Սրբազնագույն Հայրապետին և Ռուս Պապովսկի Եկեղեցու Պետ նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքին, գիտության գործիչների, գրողների, հասարակական գործիչների և արտասահմանյան պատգամավորության ղեկավարների: Հսկա դահլիճի բոլոր աթոռները զբաղված են: Սովետական անծայր Հայրենիքի լավագույն ուսուրերն ու դուստրերը այդ գեղեցիկ դահլիճի կամարների տակ են հավաքվել՝ իրենց և իրենց ժողո-

վերջների ձայնը լսելի դարձնելու համար, հանուն խաղաղության: Սովետական ժողովրդի ընտրյալ պատգամավորների շարքին դահլիճում նստած են նաև Ամերիկայի, Խաղաղության կողմնակիցների խորհրդի, Անգլիայի, Կանադայի, Վիետնամի, Ծապոնիայի, Իրաքի և այլ երկրների պատգամավորներ: Միևնույն դահլիճում և միևնույն սեղանի շուրջը քով-քովի են եկել տարբեր դավանությունների, համոզմունքների տեր տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներ՝ միահամուռ կերպով պաշտպանելու համար աշխարհի և մարդկանց կյանքի խաղաղությունը: Նախագահող հայտնի գրող Տիխոնովի կարճ բացման խոսքից հետո, խոսքը տրվում է խաղաղության Համաշխարհային Խորհրդի Նախագահության անդամ, խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի նախագահի տեղակալ ակադեմիկոս Ա. Ե. Կորնեյչուկին: Նա մանրամասն ծանրանում է խաղաղության կողմնակիցների տասը տարվա գործունեության վրա և խոսում այն մասին, որ խաղաղության կողմնակիցների շարժումը էֆեկտիվ կերպով սկսվել է տասը տարի առաջ և այս անցած տարիների ընթացքում խաղաղության կողմնակիցները ունեցել են իրենց զոհերը, բայց և այնպես խաղաղության կողմնակիցների անպարտելի բանակը ավելացել է խաղաղության նոր մարտիկներով:

Հանդիսավոր նիստում իրենց հեղինակավոր խոսքն են ասում խաղաղության Համաշխարհային Խորհրդի գլխավոր պրեզիդենտ, անգլիացի ականավոր գիտնական պրոֆ. Ջոն Բեռնարդ, ՀԱՄԿԽ-ի քարտուղար Լ. Ն. Սոլովյովը, Սովետական գիտնականների անունից՝ Նոբելյան մրցանակի լաուրեատ Ն. Ն. Սեմյոնովը, Ռուս Պրավդայի Եկեղեցու Պետ Նորին Սրբությունը, Ալեքսի Պատրիարքը, Վիետնամի և Ծապոնիայի խաղաղության կողմնակիցների պատվիրակությունների ղեկավարներ Լե-Դին-Տամը, Տոգո Կապայասին և շատ ուրիշներ:

Նիստի երկրորդ մասում խոսքը տրվում է Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբությունը, հանուն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու, հավատացյալ հայ ժողովրդի և Ս. Էջմիածնի, ռուսաց լեզվով սկսում է իր ողջույնի խոսքը և ապա հայերենով շարունակում իր ելույթը: Նորին Սրբության միջոցով ներկաների առջև ներկայանում է խաղաղության տենչացող ինքը հայ ժողովուրդը: Նա, հայ ժողովուրդը, ամենից ավելի սիրելի ու փայփայել է խաղաղությունը, որովհետև ամենից շատ է տուժել պատերազմների արհավիրքներից: Փոքրիկ, անպաշտպան մի ժողովուրդ, որ դարերի ըն-

թացքում միշտ հռչակվել է: Ու՜մ հայտնի չէ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում միլիոնավոր անմեղ հայ բնակչության սրախողող լինելը Արևմտյան Հայաստանում, ո՞վ կարող է մոռանալ երկրորդ համաշխարհային պատերազմը, երբ հարյուրավոր քաղաքներ ու գրախտանման գյուղեր հողին հավասարվեցին, մշակույթի անկրկնելի կոթողներ կործանվեցին, անթաղ ու անշիրիմ մնացին միլիոնավոր դիակներ, բանականություն ունեցող ո՞ր մահկանացուն կարող է մոռանալ, որ երկրորդ համաշխարհային պատերազմը միլիարդների հասնող նյութական վնասներից բացի, մարդկությանը զրկեց աշխարհում ամենաթանկագինից՝ ծաղիկ երիտասարդությունից: Դեռ մինչև այսօր մայրերը ողբում են իրենց մատաղ որդիների կորուստը, որոնք մեռան, որպեսզի է՛լ երբեք ու երբե՛ք աշխարհի մայրերը այլևս առիթ չունենան արտասուք թափելու: Նորին Սրբությունն իր խոսքը վերջացնում է կոչ անելով աշխարհի երկու մեծ պետությունների՝ Սովետական Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ ղեկավարներին՝ հանդիպման և բանակցությունների միջոցով լավագույն կերպով լուծում տալու խաղաղության վերաբերյալ հարցերին:

Նիստի վերջում խոսքը տրվում է Սովետական Միության խաղաղության կողմնակիցների պատասխանատու քարտուղար Մ. Ի. Կոտովին, որը շնորհակալություն է հայտնում ելույթ ունեցողներին և բուռն ծափահարությունների տակ հայտարարում է, որ Ստոկհոլմի խաղաղության Համաշխարհային Խորհուրդն իր վերջին հոբելյանական սեսիայում պարգևատրել է շքանշաններով մի խումբ սովետական խաղաղության կողմնակիցների, որոնք առավել աչքի են ընկել որպես խաղաղության և ժողովուրդների բարեկամության ճշմարիտ կողմնակիցներ, և որոնք իրենց զրշով, խոսքով ու գործերով նպաստել են խաղաղության դատին: Պարգևատրվողների թվումն է նաև Ամենայն Հայոց խաղաղասեր Հայրապետը, որն առաջին դիրքերում է գտնվել խաղաղության պաշտպանության պայքարը սկսվելու առաջին իսկ օրերից, երբ դեռ առաջնորդն էր ռուսինահայ թեմի Վեհափառ Հայրապետից բացի, մեր ժողովրդի տաղանդավոր զավակներից երկուսը՝ կոմպոզիտոր Արամ խաչատրյանն ու Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը ևս արժանացել են այդ բարձր պարգևին: Դահլիճում ներկաները բուռն օվացիայով են ընդունում մեր ժողովրդի լավագույն զավակների անունները, որոնց

քրտնաջան աշխատանքը զնահատվել է խաղաղության Պաշտպանության Համաշխարհային մշտական կոմիտեի կողմից և այսօր նրանց կրծքերը զարդարվում են շքանշաններով, որպես լավագույն բարեկամները ողջ աշխարհի խաղաղասեր ժողովուրդների Պր. Մ. Ի. Կոտովը ջերմորեն շնորհավորում է պարգևատրվողներին և ցանկանում, որ նրանք է՛լ ապելի պայքարեն խաղաղության համար, որից և կախված է աշխարհի ժողովուրդների կյանքը և երջանկությունը։

Խորհրդակցությունը մոտենում է իր ավարտին։ Ընդունվում է համապատասխան որոշում՝ բարձր մակարդակով խորհրդակ-

յի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիին։ Երկու Հայրապետները՝ գրկախառնվում ու համբուրվում են։ Ապա տեղի է ունենում եղբայրական ու սիրալիր զրույց։ Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքը խոսում է այն մասին, թե ինքը տեղյակ է Նորին Վեհափառություն Վազգեն Հայրապետի շինարարական ու դաստիարակչական ծրագրերի և գործունեության մասին և հայտնում է իր խնդակցությունը և բարեմաղթությունները։ Սիրալիր մթնոլորտում տեղի ունեցած զրույցը վերջանում է Նորին Վեհափառության հրաժեշտի խոսքերով, քաջառողջություն և հաջողու-



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԱՐԴՈՒՄ Է ԻՐ ԶԱՌԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ցություն հրավիրելու՝ «սառը պատերազմ»-ի վերացման համար։ Խորհրդակցությունից հետո տրվում է ճոխ համեմդ մայրաքաղաքի արվեստի աշխատողների լավագույն ուժերով։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻ ՊԱՏՐԻԱՐԷԻՆ

Հինգշաբթի, մայիսի 28-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպի և հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետի, պաշտոնական այցելություն տվեց Մոսկվա-

թյուն մաղթելով Պրավոսլավ եկեղեցու Պետին և կրկին ողջագուրվելով հրաժեշտ անում նրանից։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՍՍՈՒ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԵՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐ. Ա. Ա. ՊՈՒՋԻՆԻՆ

Ուրբաթ, մայիսի 29-ին, ցերեկվա ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Մոսկվայի հոգևոր հովիվ հոգեշնորհ

Տ. Պարզե վարդապետ Գևորգյանի և հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանի, պաշտոնական այցելություն տվեց ՍՍՍՄ Մինիստրների Սովետին առընթեր կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ պր. Ա. Ա. Պուզինին: Խորհրդի շենքի շքամուտքի մոտ Վեհափառ Հայրապետին դիմավորում է նույն խորհրդի պատասխանատու աշխատակից պր. Սոլովովը: Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է ընդունելության պաշտոնական սրահ, որտեղ խորհրդի նախագահ պր. Ա. Ա. Պուզինը բարի գալուստ է մաղթում Վեհափառ Հայրապետին: Նորին Ս. Օծուխյան և պր. նախագահի միջև տեղի ունեցավ զրույց, որից հետո նորին Ս. Օծուխյանը հայտնեց իր շնորհակալությունը և հրաժեշտ առավ պր. նախագահից:

**ՇՎԵԴԱԿԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ
ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ**

Ուրբաթ, մայիսի 29-ի երեկոյան ժամը 20.30-ին, Մոսկվայի «Ուկրաինա» հյուրանոցի սրահներից մեկում, տեղի ունեցավ ընդունելություն ի պատիվ Վեհափառ Հայրապետի և շվեդական բողոքական եկեղեցականների պատգամավորության: Ընդունելությունը կազմակերպել էր Ռիգայի և համայն կառավարչի արքեպիսկոպոս Գուստավ Տուրսը: Ընդունելությանը ներկա էին նաև Ռուս Պրավոսլավ եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչներ և Պատրիարքարանին կից արտաքին հարաբերությունների պաշտոնյաները: Ընդունելությունից տասնըհինգ րոպե առաջ, Ռիգայի և համայն կառավարչի արքեպիսկոպոս Գուստավ Տուրսը այցելում է նորին Ս. Օծուխյան Վեհափառ Հայրապետին և առաջնորդում նրան ընդունելության սրահ: Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը: Ռիգայի արքեպիսկոպոս Գուստավ Տուրսը հյուրերին ներկայացնում է Վեհափառ Հայրապետին և սկսվում է սիրալիր խոսակցություն Հայոց եկեղեցու Պետի և ներկաների միջև գերմաներեն լեզվով: Կարճատև զրույցից հետո, ներկաները հրավիրվում են ճոխ բարիքներով բեռնավորված սեղանի շուրջ: Առաջին կենացը առաջարկվում է Հայոց եկեղեցու և նորին Ս. Օծուխյան Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կենացը: Երկար ժամանակ ամբողջ սեղանի շուրջ խոսակցության առարկան է Հայաստանյայց Առաքելական եկեղեցին և Ս. Էջմիածինը: Ներ-

կաները խորին շնորհակալություն են հայտնում կառավարչի արքեպիսկոպոս գերաշնորհ Գուստավ Տուրսին, որ աչքաքան սիրալիր կերպով կարգադրել էր այս հանդիպումը Ամենայն Հայոց Հայրապետի հետ: Ապա առաջարկվում են բաժակներ Ռուս Պրավոսլավ եկեղեցու Պետի, Ռիգայի արքեպիսկոպոս Գուստավ Տուրսի և հյուրերի կենաց: Վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և իր գոհունակությունն ու ուրախությունն է հայտնում արքեպիսկոպոս Գուստավ Տուրսին՝ իր կազմակերպած այս ընդունելության համար: Ապա Վեհափառ Հայրապետը հյուրերին նվիրում է Ս. Էջմիածնի պատկերով արծաթյա ասիսներ և իր մակագրությամբ Մայր Տաճարի պատկերներ: Ներկաները խորին շնորհակալություն են հայտնում Հայոց Հայրապետին թանկագին նվերների համար: Վերջում Վեհափառ Հայրապետը արքեպիսկոպոս Գուստավ Տուրսին և շվեդացի բարձրաստիճան եկեղեցականներին հրավիրում է այցելել Մոսկվայի Հայաստան և Ս. Էջմիածին: Գիշերվա ժամը 12-ին ընդունելությունը վերջանում է և ներկաները հրաժեշտ են առնում Վեհափառ Հայրապետից անմոռանալի տպավորություններով:

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ
ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵԿԵՂԵՑՈՒՄ**


Մայիսի 31-ի, կիրակի, Մոսկվայի հայ գաղութի համար հիշատակելի օր է, որովհետև մայրաքաղաքի հայկական գաղութը ապրեցավ այն երջանիկ օրը, որին շատ վաղուց էր սպասում: Մոսկվայի Հայոց եկեղեցին լեփ-լեցուն էր հայերով, որոնք մայրաքաղաքի տարբեր ծայրերից շտապել էին հայոց եկեղեցի՝ դիմավորելու Վեհափառ Հայրապետին և համբուրելու նրա Ս. Աչքը:

Առավոտյան ժամը 12-ն է: Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով առաջնորդվում է Մոսկվայի Հայոց Ս. Հարություն եկեղեցին: Եկեղեցական թափորը անցնում է ժողովրդական հսկա զանգվածի միջով: Վեհափառ Հայրապետին մատուցվում են թարմ ծաղկեփնջեր: Եկեղեցական թափորը, մարդկային հոսանքը ճեղքելով, անցնում է առաջ, իր շուրջը թողնելով քույա-քույա բարձրացող խնկի անուշ բուրմունքը: Նորին Սրբությունը տաճարում «Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս» սաղմոսը կարդալուց, աղոթելուց ու ժողովրդին օրհնելուց հետո առաջնորդվում է ավանդատուն:

Սուրբ պատարագի հոգեպարար ժամն է: Եկեղեցին և բակը լեփ-լեցուն են. ինչպես ասում են՝ «ասեղ գցելու տեղ չկա», ամեն

որ աշխատում է միայն երկու ոտի տեղ ունենալ տաճարի ներսում, մասնակից լինելու Վեհափառ Հայրապետի մատուցած պատարագին և սիրեցյալ Հայրապետի հետ միասին աղոթելու աշխարհի խաղաղության, հայ ժողովրդի երջանկության և մեր Հայրենիքի ու մեր Ս. Եկեղեցու անսասանության համար: Սեղանին սպասարկում են գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և հոգեշնորհ Տ. Պարգև ու Տ. Եղիշե վարդապետները: Ամեն ոք աղոթում է, հնչում են սուրբ պատարագի հոգեգմայլերգերը, որոնց մեջ հայ հոգին է ղրված:

մեջ բարոյական, ազգային և գաղափարական կյանքը, բաց անում նրանց սրտերում կրոնա-ավանդական հիշատակները: Այսօր Մոսկվայի հավատացյալ հայութունը այս սուրբ տաճարն է եկել Ձերդ Վեհափառության առաջ սփռելու իր լավագույն զգացմունքներին՝ ջերմ հավատի, սիրո և եղբայրական ուխտի խնկաբույր ծաղիկները: Դուք, Վեհափառ Տե՛ր, եկե՛լ եք Մայր Աթոռից, հայոց Լուսո Մայր, հայ ժողովրդի հոգևոր կյանքի հաղթանակի հուշարձան Ս. Էջմիածնից, այնտեղից մեզ համար ողջուն եք բերել: Ի՞նչը կարող է քրիստոնյա հայի հա-



ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ պատարագը շարունակվում է մինչև «Հայր մեր»: Հանուն Մոսկվայի հայ գաղութի, ողջունի և բարի գալստյան սրտագին խոսք է ասում Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գեփորգյանը:

«Թույլ տվեք, հանուն Մոսկվայի հայ գաղութի, սրտագին ողջունելու Ձեր շնորհաբեր գալուստը մեր մեծ Հայրենիքի մայրաքաղաք Մոսկվա, Ձեր ժողովրդի, Ձեր զավակների մեջ: Ձերդ Վեհափառության այս այցելությունը հրճվանքով է լցնում մեր բոլորի սրտերը և մի է համախմբում Մոսկվայի հավատացյալ ժողովրդին, արժարժում նրանց

մար ավելի Թանկագին լինել, քան այն ողջունները, որ բերել է Ձերդ Սրբությունը հայ ժողովրդի Սրբություն Սրբոց Մայր Տաճարից: Այստեղ, այս սրբազան կամարների տակ հավաքված, ավանդապահ և հավատավոր հայությունը եկել է ընդունելու Ձերդ Վեհափառության բերած ողջունները, լսելու Ձեր մխիթարիչ և հավատի կոշիղ խոսքերը: Հայ հավատացյալ ժողովրդի համար միշտ էլ նվիրական են եղել Ս. Էջմիածնի անունը և նրա հետ կապված խորհուրդները, ինչպես նաև Ամենայն Հայոց Հայրապետի անձնավորությունն ու հեղինակությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսի անձ-

նախորդության և հեղինակության հանդեպ ցույց տրված որդիական սերն ու նվիրվածությունը իմաստ են ստացել հայ մարդու համար: Ահա այդ է պատճառը, որ մեր ժողովրդի թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր ներկայացուցիչները մշտական անդամներն են խաղաղության համագումարների՝ որպես խաղաղության ջերմ կողմնակիցների և պաշտպանների: Վեհափառ Տե՛ր, Դուք, որպես հայ ժողովրդի հայրենասիր զավակի, մեր Հայրենիքի վերածնության, ծաղկման և բարօրության գործին նվիրված անձնավորություն, միշտ էլ եղել եք խաղաղության պաշտպանության մարտիկների առաջավոր շարքերում: Այսօր բովանդակ հայությունը սրտի անհուն բերկրանք է զգում իմանալով, որ խաղաղության Համաշխարհային հորհրդի մշտական կոմիտեն, վերջերս կայացած Ստոկհոլմի իր որոշման մեջ, Ձերդ վեհափառությանը պարգևատրել է խաղաղության պաշտպանության շքանշանով: Ձերդ Սրբության այդ մեծ պարգևատրումը ավելի մեծ իրավունք է տալիս Ձեզ որպես հայ մարդ, որպես մեր Ազգի Հովվապետը, խաղաղության և եղբայրսիրության հրավիրելու Սփյուռքում ցրված մեր քույրերին և եղբայրներին, հիշեցնելով նրանց հայրենասեր մեծ բանաստեղծի հետևյալ պատգամը՝

«Տուր ինձ քո ձեռքդ, եղբայր եմք միք,
Որ մորկավ էինք զատված,
Բախտին ամեն ոխ շարանենգ,
Ի մի համբույր ցրվին ի բաց»:

Ձեր՝ Մոսկվա շնորհաբեր զալստյան առթիվ արտահայտելով մեր արտաբուխ երախտագիտական խոսքը, մաղթում ենք Ձերդ Ս. Օծուխյան արևշատություն, հոգու արիություն, ուժ ու եռանդ՝ որպեսզի իրականություն դառնան Ձեր ազգանվեր ծրագրերը՝ ի փառս Ս. Նկեղեցու և հուրախություն մեր հավատացյալ ժողովրդի. ամեն»:

Ապա ընդհանուր լուծության և վեհության մեջ խոսում է Վեհափառ Հայրապետը, նախ իր հայրապետական ողջույններն ու օրհնությունը բաշխելով բոլոր ներկաներին.

«Ողջո՛ւյն և օրհնություն ենք բերում ձեզ, սիրելի՛ հավատացյալներ, ամենայն հայոց Ս. Էջմիածնից և մեր հարազատ Մայր Հայրենիքից, մեր Արարտյան չքնաղ աշխարհից: Վերջին օրերում էջմիածնում և Երևանում՝ նույնպես երկինքը ծածկված էր անձրև-վաթեռ ամպերով, բայց այն օրը երբ պիտի բաժանվենք Ս. Էջմիածնից և Երևանից, երկինքը պայծառացել էր և Արարատը իր հրաշալի գեղեցկությամբ մեր առջև էր

գտնվում ամբողջովին: Եվ անա, վեհ Արարտի գմայելի տեսարանը Մեր աչքերում՝ եկանք Մոսկվա, այս գեղեցիկ քաղաք, եկանք սակայն Արարտի տեսիլով և նրա գեղեցկության և փառքի զգացումով: Ողջո՛ւյն հավերժական Արարտից, որը սիմվոլն է մեր Հայրենիքի հավիտենականության: Վստահ ենք, որ դուք բոլորդ, որ հավաված եք այստեղ, Բրիտանյա հավատացյալներ եք և լավ հայեր, և ձեր կրթի տակ հայի սիրտ է բարխում, չնայած հեռու եք Հայաստանից: Ուրախ ենք, որ եկել ենք այս փոքրիկ եկեղեցին, որպեսզի միասին աղոթենք մեր հոգիների փրկության, մեր բարի գործերի հաջողության և մեր մեծ հորհրդային Հայրենիքի վերելի, բարօրության և համայն աշխարհի խաղաղության համար:

Հոգեշնորհ Ս. Պարզև վարդապետից գտնենք, որ գեղեցիկ խոսքերով բարգմանելով ձեր բոլորիդ: Վստահ ենք, որ այդ խոսքերը բխում էին նաև ձեր սրտերից: Թող Աստված միշտ պահպանի և օգնի, որպեսզի այս անցավոր աշխարհում մեր խղճի պարտքը կատարենք ղեպի մեր Ազգը, ղեպի մեր եկեղեցին, ղեպի մեր Հայրենիքը, որը շատ դժբախտ օրեր է ունեցել մեր անցյալ պատմության շրջաններում, բայց այսօր, մոտ քառասուն տարի է արդեն, որ նա հասել է ապահովության և բարօրության ափին, վերածնվել է և վերակառուցվում ու կերպարանափոխվում է ամեն օր:

Նրե ուրիշ ֆաղափներից ու երկրներից այցելության եկողը մեկ կամ երկու տարի վերջ կրկին գալու լինի, կտեսնի, քե ուրեմ է ծաղկել ու անհանաչելի դարձել մեր Հայրենիքը և հայ ժողովրդի ծաղիկ ֆաղափ սիրուն Երևանը, շնորհիվ հորհրդային կառավարության անընդ ջանքերի: Մենք բոլորս հպարտանում ենք զրանով: Մենք էլ՝ հոգեվարականերս, մեր աշխատանքի բաժինն ենք բերում, որպեսզի անցյալի կործանված և ավերակ մեր Հայրենիքը վերաշինվի ավելի շուտ, ավելի կատարյալ: Նույն ոգևորությամբ Մենք աշխատում ենք նաև Մայր Աթոռում՝ վերաշինելու և ծաղկեցնելու համար Հայաստանյայց եկեղեցին և Ս. Էջմիածինը, որը 1600 և ավելի տարիներ հայ ժողովրդի Սրբություն Սրբոցն է: Մենք մեր սրբազան պարտքն ենք համարում նորոգել ու շենացնել մեր հոյակապ տաճարները: Մոտ երկու միլիոն հայեր այսօր ապրում են Հայաստանում, իսկ մոտ երեք միլիոն հայեր ապրում են Հայաստանից դուրս, հորհրդային երկրի զանազան ռեսպուբլիկաներում և արտասահմանի հեռավոր հորիզոնների տակ, մինչև Ատլանտյան և Խաղաղական



օվկիանոսների ավերին և Աֆրիկայում: Սփյուռքի այդ ավելի քան մեկ և կես միլիոն հայ ժողովուրդը միանում է իր սուրբ հավատով և պահպանում է իր մայրենի լեզուն և հայրենասիրությունը: Էջմիածինը հայ ժողովրդի հայրենասիրության կովանն է երեկ, այսօր, միշտ և հավիտյան: Երեք անգամ ենք եղել այստեղ: Առաջին անգամ փակ էր այս եկեղեցին ու կիսավեր վիճակում, երկրորդ անգամ նոր էր բացվել: Դա 1956 թվականին էր, երբ նոր էին վերադարձել արտասահմանյան Մեր ուղևորությունից: Այս երրորդ անգամն է, որ այցելում ենք և շատ ուրախացանք, որովհետև շատ բան կտեսնենք փոխված եկեղեցու և գերեզմանատան մեջ, շնորհիվ հայր Պարգևի, Խաչատուր ավագ քահանայի և եկեղեցական խորհրդի ժաջան աշխատանքի և մանավանդ ձեր բոլորի անմիջական օժանդակության:

Սիրելի՛ ժողովուրդ, եկեղեցին ժողովրդով է եկեղեցի, նրանով է պայծառանում: Վստահ ենք, որ այսուհետև ևս յուրաքանչյուր իր պարտքը կկատարի եկեղեցու նկատմամբ և եկեղեցական խորհուրդը, հայր Պարգևի գլխավորությամբ, հնարավորություն պիտի ունենա ավելի բարեկարգելու թե՛ եկեղեցին թե՛ գերեզմանատունը: Վստահ ենք, թե Մոսկվայի մեր հայ եղբայրներն ու բույրերը մոտ են կանգնած եկեղեցուն և կօգնեն այս սուրբ գործին: Հեռու տեղերից գալիս են Մոսկվա և այցելում ձեր եկեղեցին, գերեզմանատունը, որտեղ կան հիշատակության արժանի հայտնի հայ մտավորականների և հասարակական գործիչների շիրիմներ: Մոսկվայի հայերի պատիվն է, որ այս սուրբ հաստատությունը պահվի ավելի ծաղկյալ և բարգավաճ վիճակում:

Սիրելի՛ ժողովուրդ, ինչպես հայր Պարգևը իր խոսքի մեջ անդրադարձավ, մենք ուրախությամբ մասնակցեցինք Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի համագումարին և մեր խոսքը բերեցինք հաճուն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու, հանուն Ս. Էջմիածնի և հաճուն հայ ժողովրդի: Հայ ժողովուրդը Խաղաղության սուրբ գործում, ինչպես աշխարհի բոլոր ժողովուրդները, պետք է կանգնի պայքարի առաջին գծի վրա, որովհետև հայ ժողովուրդը ավելի կարիք ունի Խաղաղության և Խաղաղ կյանքի, քան այլ ժողովուրդներ: Արտասահմանի մեր բոլոր եղբայրներն ու բույրերը, մեր եկեղեցին և մեր բոլոր հագվորակները Մեր գլխավորությամբ ոգեվորված են Խաղաղության իդեալներով, որ Բիստոնեությունն է համամարդկային իդեալն է: Յուրաքանչյուր մարդ, մանավանդ հայ մարդ, որտեղ էլ որ գտնվի, իր

տեղից պիտի պաշտպանի Խաղաղության դիրքերը:

Սիրելի՛ ժողովուրդ, Մենք վերադառնում ենք Մեր խոսքը, կրկին հայտնելով Մեր ջերմ ողջույններն ու օրհնությունները: Թող Աստված ձեր բոլոր պահն պահպանե քաղաքում, երկար և Խաղաղ օրերով, որպեսզի դուք բոլորդ տեսնեք ձեր բարի նպատակների ու ծրագրերի լիակատար իրականացումը և միշտ երջանիկ ապրեք: Ճիշտ է՝ Էջմիածինը ձեզանից հեռու է, մոտ երեք հազար կիլոմետր: Եթե ոչ ամեն տարի, գոնե մի քանի տարին մեկ անգամ եկեք Ս. Էջմիածին և Հայաստան, որպեսզի միասին ուրախանաք մեր վերածաղկած Մայր Հայրենիքով՝ հավերժական Արարատի փեշերին:

Ողջ լեռնալ բոլորդ, այժմ և միշտ և հավիտյան հավիտենից, ամենա:

Հայրենասիրական ու կրոնաշունչ խոսքի կարոտ այս ժողովուրդը գերազույն լարումով լսում է իր մեծ Հովնապետի պատգամները:

Սուրբ պատարագի վերջավորությամբ, աջահամբույրի պահին, Նորին Ս. Օծուխյունը Ս. Էջմիածնից բերած Խաչիկներ բաժանեց ներկաներին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄՈՍԿՎԱՅԻ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
ՊՐ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ

Երեքշաբթի, հունիսի 2-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ հոգեշնորհ Տ. Նղիշե վարդապետ Սարգսյանի, այցելություն տվեց Հայաստանի կառավարության Մոսկվայի մշտական ներկայացուցիչ պր. Մելքոնյանին: Ցերեկվա ժամը 12-ին պր. ներկայացուցիչը ընդունում է Վեհափառ Հայրապետին: 45 րոպե տևող սիրալիր խոսակցությունից հետո, հրաժեշտ ենք առնում ու բաժանվում Հայաստանի կառավարության ներկայացուցիչ լավագույն տպավորություններով:

ՀՐԱԺԵՇՏԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱՍ
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԵԿՆՄԱՆ ԱՌԹԻՎ

Զորքշաբթի, հունիսի 3-ին, Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցու եկեղեցական խորհուրդը հրաժեշտի երեկո էր կազմակերպել ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Նույն օրը, երեկոյան ժամը 5-ին, Նորին Սրբությունը բարեհաճեց ընդունել Մոսկվայի հայոց եկեղեցական խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի պատվարժան անդամներին և նախագահել եկեղեցական խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի համախառն նիստին: Վեհափառ Հայրապետը մանրա-

մասն լսելով եկեղեցական խորհրդի և վերըստուգիչ հանձնաժողովի գործունեության մասին, տվեց իր օրհնությունը խորհրդի այնքան նվիրված և շինարար աշխատանքի համար և համոզմունք հայտնեց, որ առաջիկային է՛լ ավելի կազմակերպված պիտի տեսնի Մոսկվայի հայ գաղութը, որն այնքան փայլուն եկեղեցական և ազգային անցյալ է ունեցել:

Նույն երեկոյան, Նորին Վեհափառության ի պատիվ, ընդունելություն էր կազմակերպել եկեղեցական խորհուրդը: Սեղանի շուրջը եկեղեցական խորհրդի անդամներից, հոգեվորականներից, հավատացյալների ներկայացուցիչներից զատ կային նաև հրավիրյալներ, Մոսկվայի հայ գաղութի մտավորական ներկայացուցիչներ: Սեղանին նախագահում է ինքը՝ Նորին Ս. Օծուխյունը: Մոսկվայի հոգևոր հովիվ Ս. Պարզե վարդապետը կրկին բարի գալուստ է մաղթում Վեհափառ Հայրապետին և առաջարկում է բաժակ բարձրացնել Վեհափառ Հայրապետի թանկագին կենացը: Ապա առաջարկվում են կենացներ Մայր Հայրենիքի բարգավաճման և Ս. էջմիածնի ու Հայոց Հայրապետության անսասանության համար: Խոսք են առնում Մոսկվայում հայ անվանի բժիշկ Հովհաննես Մնացականյանը, եկեղեցական խորհրդի անդամներ Ռուբեն Սաֆարյանը, Գրիգոր Բախրյանը, հոգեշնորհ Ս. Նիշի վարդապետ Սարգսյանը և շատ ուրիշներ: Վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և շնորհակալություն հայտնում եկեղեցական խորհրդի անդամներին և ներկաներին, օրհնում բոլորին և հորդորում է՛լ ավելի համախմբվել մեր Ս. եկեղեցու շուրջը: Նորին Վեհափառությունը, ի հիշատակ այդ հանդիպման, ներկաներին նվիրում է Ս. էջմիածնի պատկերը: Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով փակվում է սեղանը:

ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԵԿԵՆՈՒՄԸ
ՄՈՍԿՎԱՅԻՑ

Երեքշաբթի, հունիսի 3-ին, գիշերվա ժամը 10-ին, Մոսկվայի օդանավակայանում ենք: Վեհափառ Հայրապետին ճանապարհելու համար այնտեղ են եկել եկեղեցական խորհրդի անդամները, հավատացյալների ներ-

կայացուցիչներ՝ հոգեշնորհ Ս. Պարզե վարդապետի գլխավորությամբ: Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս շնորհակալություն է հայտնում ներկաներին և օրհնում բոլորին: Գիշերվա ժամը 11.55-ին օդանավը կտրվում է գետնից: Հակառակ որ ընդամենը տաս օր է ինչ բացակայում ենք Հայաստանից, բայց և այնպես հարազատ վայրերի կարոտն ենք բաշում և ցանկանում ժամ առաջ տեղ հասնել և վերադառնալ տուն:

Յոթը ժամ հսկա թռչունի թևերով թռչելուց հետո, մեր օդանավը արդեն սավառնում է մեր չքնաղ Հայրենիքի՝ Հայաստանի սրբազան հողի վրա: Ահա զմուխտ Սեանը իր մենաստաններով, մեր բարձրաբերձ լեռները ավաիական մարգագետիններով: Նորին Սրբությունը դիմավորելու համար օդանավակայանում են Մայր Աթոռի միաբանությունը, Երևանի ողջ հոգևոր դասը՝ գլխավորությամբ Հոգևոր Ծննդաբանի վերատեսուչ գերաշնորհ Ս. Հայկազուն եպիսկոպոսի:


Վեհափառ Հայրապետին դիմավորելու է եկել նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը:

Ավտոմեքենաները սուրում են դեպի Ս. էջմիածին: Մայր Տաճարի գլխավոր մուտքի առջև Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ» և «Ուրախ լին սուրբ եկեղեցի» շարականներով առաջնորդվում է Մայր Տաճար:

Հանուն Մայր Աթոռի միաբանության և պաշտոնեության, գերաշնորհ Ս. Հայկազուն եպիսկոպոսը բարի գալուստյան խոսք է ասում Վեհափառ Հայրապետին և սրտագին շնորհավորում է Նորին Սուրբ Օծուխյանը՝ Խաղաղության Համաշխարհային Մշտական Կոմիտեի կողմից խաղաղության շքանշանով պարգևատրվելու ուրախ առթիվ: Վեհափառ Հայրապետը, պատասխանելով սրբազան հոր խոսքերին, օրհնում է միաբանությունը և ժողովրդին ու նույն թափորով առաջնորդվում Վեհաբան:

ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ





ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԵՎ Ս. ՀՈՒՓՍԻՄԵՒ ՏԱՃԱՐԻ
ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Ավագ Սեղանի վերականգնման, ինչպես և Ս. Հոփսիմեի վանքի վերանորոգման առթիվ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի կողմից Ս. Սեղանի տակ և Ս. Հոփսիմեի վանքում կատարվող պեղումները ներկայիս լրիվ ավարտված են:

Սույն թվականի հունիսի 10-ին Մայր Աթոռում հրավիրված հնագետների և նարտարապետների հանձնաժողովը, տեղում ֆենելով պեղման արդյունքները, այլև պեղման աշխատանքները ղեկավարող նարտարապետ Ալ. Սահինյանի զեկուցումը, լրացուցիչ կերպով հաստատեց՝

1. Ե դարում Վահան Մամիկոնյանի կողմից կառուցված Ավագ Սեղանի կենտրոնում հայտնաբերվեց թոնրածև մի կրակարան, մեջը մոխիր: Հատկանշական է, որ Ե դարի վեմֆարը դրված է եղել ուղիղ կրակարանի վրա, որպիսի հանգամանք, հավանաբար, հանդիսացել է հեթանոսական պաշտամունքի նկատմամբ ֆրիստոնեական կրոնի հաղթանակի խորհրդանշումը:

Պեղումների արդյունքների հետագա առավել հանգամանորեն մշակման ընթացքում կարգվի, թե երբ է կառուցվել հիշյալ կրակարանը, ֆրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց առաջ, թե Ե դարի կեսերին, պարսկական կրոնը բռնի կերպով Հայաստանում մտցնելու փորձերի ժամանակ:

Վեհափառ Հայրապետի քարեհան համաձայնությամբ որոշվեց կրակարանը, Ե դարի Ս. Սեղանի ամբողջ կառուցվածքի հետ միասին, պահպանել ընդհանուր դիտման համար, իբրև պատմական հուշարձան:

2. Ս. Հոփսիմեի տաճարի նորոգման առթիվ Գիտությունների ակադեմիայի կողմից տաճարի ներսում կատարված մասնակի պեղումները պարզեցին հետևյալը.

ա) Կոմիտաս կաթողիկոսի կողմից 618 թվականին կառուցված տաճարի գմբեթակիր ռոմանություններից երեքի տակ հայտնաբերվեցին առավել հնագույն

շենքի զարդաֆանդակված ֆիվի բեկորները ($130 \times 80 \times 32$ սմ.), որոնք հար և նման են Գառնիի հեքանոսական տաճարի (Ա դար) համանման մանրամասների մշակմանը և, անկասկած, պատկանել են հեքանոսական (հելլենիստական) շրջանում ստեղծված մի խոշորագույն (հավանաբար պաշտամունեային) շենքի, որը գտնվելիս է եղել Ս. Հոփսիմեի տաճարի շրջապատում:

Այսպիսով Ս. Հոփսիմեի տաճարում հայտնաբերված այդ ֆաբերը, Գառնի ամրոցի նարտարապետական նշանավոր հուշարձաններից հետո, Հայաստանի հելլենիստական շրջանի նարտարապետության մի նոր օճախի գոյության իրեղեն վկայություններն են:

բ) Տաճարի այժմյան հատակից 40 սմ. ցած հայտնաբերվեց շենքի սկզբնական հատակը:

գ) Հայտնաբերվեց Ս. Հոփսիմե կույսի դամբարանի սկզբնական մուտքի ֆարաշեն աստիճանը, որը դամբարանի հետ մեկտեղ, ամենայն հավանականությամբ, հանդիսանում է Ս. Գրիգոր Լուսավորչի ժամանակաշրջանի (301 թ.) գործ:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ համաձայնությամբ, որոշվեց, ինչպես հեքանոսական շրջանի նարտարապետական բեկորները, այնպես էլ Ս. Հոփսիմե կույսի դամբարանի սկզբնական մուտքի աստիճանը առնել ապակեպատ հատուկ հարմարանքի տակ:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

12 հունիսի 1959 թ.

Ս. ԷՋՄԻԱՄԻՆ





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

ՀՈՒՆԻՍԻ 1-ին, ԵՐԵՎԱՆԻ, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանը դաշխճում, կատարվեց բացումը Հոգևոր Ճեմարանի 1958—1959 ուսումնական տարվա ամսվերջի քննությունների: Հանդիսության ներկա էին վերատեսուչ սրբազանը, փոխ-տեսուչ հայր սուրբը, բոլոր ուսուցիչներն ու ուսանողները: Օրհնելով ուսանողներին, վերատեսուչ սրբազանը քննությունների մեջ հաջողություն մաղթեց բոլորին:

Ժամը 10-ին սկսվեցին գրավոր և բանավոր քննությունները:



ՀՈՒՆԻՍԻ 6-ին, ԵՐԱԿ, Մայր Աթոռ Վերադարձավ լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, որն արձակուրդով գտնվում էր Մոսկվայում: Հանգստանալով մեկտեղ սրբազանը երկու անգամ պատարագեց և քարոզեց Մոսկվայի հայկական եկեղեցում: Վերադարձին սրբազանը այցելեց նաև Ռոստովի հայկական եկեղեցիներն ու Ս. Խաչ վանքը:



ՀՈՒՆԻՍԻ 6-ին, ԵՐԱԿ, երեկոյան ժամը 4-ին, Վեհարանում տեղի ունեցավ ճաշկերույթ, որտեղ ներկա էին Վեհափառ Հայրապետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը և վանքի պաշտոնեականության ղեկավար անդամները:

Ճաշկերույթը կազմակերպել էր Գերագույն Հոգևոր Խորհուրդը ի պատիվ Վեհափառ Հայրապետի, որ հունիսի 4-ին վերադարձել էր Մոսկվայում կայացած խաղաղության կոնֆերանսից:



ՀՈՒՆԻՍԻ 7-ին, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում, իշման Ս. Սեղանի առաջ պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ

Անթարյանը: Քարոզի նյութն էր էջմիածնի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում: Պատարագին ներկա էին ամերիկահայ մի խումբ տուրիստներ:

Պատարագից հետո ամերիկահայ տուրիստներին Վեհարանում ընդունեց Վեհափառ Հայրապետը: Ընդունելությունը տևեց մոտ մեկուկես ժամ և անցավ սրտագին ջերմ մթնոլորտում: Վերջում Վեհափառ Հայրապետը օրհնեց և բարի ճանապարհ մաղթեց բոլորին:



ՀՈՒՆԻՍԻ 7-ին, ԿԻՐԱԿԻ, Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում պատարագեց և քահանայական ձեռնադրություն կատարեց գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արարահամյանը: Քահանա ձեռնադրվեց Հարություն սարկավազ Գյուլջանը՝ վերանվանվելով Տ. Հայկազուն: Նորած Տ. Հայկազուն քահանան, որն իր քառասունքը անց է կացնում Մայր Աթոռում, երիտասարդ և պարտաճանաչ հոգևորական է:



ՀՈՒՆԻՍԻ 9-ին, ԵՐԵՎԱՆԻ, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արարահամյանի և հոգեշնորհ Տ. Նղիշե վարդապետ Սարգսյանի, այցելեց հունիսի 7-ին Երևանի Պետական պատկերասրահում բացված քանդակագործ Հակոբ Գյուլջանի ցուցահանդեսը և դիտեց քանդակագործի մոտ 500 աշխատանքները:

Նույն օրը Երևանում Վեհափառ Հայրապետը այցելեց նաև Նկարիչ Գրիգոր Խանջյանի ցուցահանդեսը, ուր ցուցադրված էին հեղինակի տարբեր ժանրերի 80 գործերը:



ՀՈՒՆԻՍԻ 13-ին, ԵՐԱԿ, ռեդիո նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսավորչին մերոյն, Օրվա տոնի առթիվ պատարագեց հոգեշնորհ Տ. Նղիշե վարդապետ Սարգսյանը:

ՀՈՒՆԻՍԻ 14-ին, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Նղիշե վարդապետ Սարգսյանը և քարոզեց, բնաբան ունենալով «Ի վերայ Աշոց և Ս. էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան»: Պատարագին ներկա էին ամերիկահայ և սիրիահայ տուրիստներ: Պատարագի վերջում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց հոգեհանգիստ սիրիահայ տուրիստների հանգուցյալների համար: Սուրբ պատարագից հետո տուրիստները եղան Վեհափառ Հայրապետի մոտ, արժանանալով նորին Վեհափառության օրհնության:

ՀՈՒՆԻՍԻ 15-ին, ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, որը մոտ վեց ամիս հովվական այցելությամբ գտնվում էր Ռումինիայում և Բուլղարիայում: Նույն օրը Վեհափառ Հայրապետը ընդունեց սրբազանին և լսեց նրա զեկուցումը հովվական առաքելության մասին:

ՀՈՒՆԻՍԻ 16-ին, ԵՐԵՎԱՆԻ, Մայր Աթոռ ժամանեցին Աղբբեջանի առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիրոսյանը և Շիրակի թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը թեմական գործերով և ներկա լինելու Հոգևոր Ճեմարանի ամսվերջի հանդեսին:

ՀՈՒՆԻՍԻ 17-ին, ԶՈՐԵՔՇԱՐԹԻ, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել թեմակալ առաջնորդներին Վեհարանում:

ՀՈՒՆԻՍԻ 18-ին, ՀԻՆԳՇԱՐԹԻ, տոն «Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ»: Այսօր սուրբ պատարագ մատուցվեց Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցում: Օշականի մեծ Սուրբի գերեզմանին ուխտի էին գնացել ամբողջ միաբանությունը, թեմակալ առաջնորդները և Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը: Օրվա ազգային մեծ տոնի առթիվ

պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը: Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ իշխան Վահան Ամատունու շիրիմի վրա:

ՀՈՒՆԻՍԻ 19-ին, ՈՒՐԱԿԻ, Երեկոյան ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Վեհարանում տեղի ունեցավ թեմակալ առաջնորդների խորհրդակցություն, որին ներկա էին նաև Մայր Աթոռի ավագ միաբաններ:

ՀՈՒՆԻՍԻ 21-ին, ԿԻՐԱԿԻ, «Գիւտ տփոյ Սրբունայ Աստուածածնի»: Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա պատարագեց Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և քարոզեց հետևյալ բնաբանով. «Թէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռացի զիս աջ իմ: Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ, թէ ոչ յիշեցից զքեզ, թէ ոչ նախ նուագեցից զքեզ, Երուսաղէմ, սկիզբն ուրախութեան իմոյ»: (Սաղմ. ԺԼԶ):

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Վեհարանում գումարվեց միաբանական ժողով, որին մասնակցում էին նաև Մայր Աթոռի սարկավագները:

ՀՈՒՆԻՍԻ 22-ին, ԵՐԵՎԱՆԻ, Հոգևոր Ճեմարանի ամբողջ ուսանողությունը, զխավորությամբ վերատեսուչ Գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոսի և փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետի, հինգ օրով մեկնեցին Հաղարծնի վանքը ուխտի և հանգրստանալու: Հունիսի 26-ին, կազդուրված և առողջ, ուսանողները վերադարձան Մայր Աթոռ, լավագույն տպավորություններով:

ՀՈՒՆԻՍԻ 25-ին, ՀԻՆԳՇԱՐԹԻ, Հալեպից Մայր Աթոռ ժամանեց Ս. էջմիածնի միաբան բարեշնորհ վարդապետ սարկավագ Շամլյանը, որն արձակուրդով 1958 թվականի դեկտեմբերի 21-ին մեկնել էր տուն՝ Հալեպ, իր ծնողների մոտ:

ՀՈՒՆԻՍԻ 28-ին, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղա Սանթրոյանը և քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Տ. Աբրահամյանը՝ «ես եմ հացն կենաց» բնաբանով: Սրբազանը խոսեց նյութական և հոգեկոր հացի օգտակարության և անհրաժեշտության մասին և շեշտեց մանավանդ «կենաց հաց»-ի անհրաժեշտությունը հավատացյալի հոգեկոր կյանքի աճման գործում:

Սուրբ պատարագին ներկա էին մի խումբ ուխտավորներ Ամերիկայից և Պարսկաստանից:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը, որը վեհարանում ընդունեց ուխտավորներին, զրույց ունեցավ նրանց հետ, ապա օրհնեց բոլորին և հորդորեց միշտ սիրել Մայր Հայրենիքը ու կապված մնալ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ:

ՀՈՒՆԻՍԻ 20-ին, ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, փակվեց Հոգեկոր Ճեմարանի 1958—1959 ուսումնա-

կան տարվա շրջանը: Առավոտյան ժամերգությունից հետո, ամբողջ ուսանողությունը, վերատեսուչ սրբազանի և փոխ-տեսուչ հայր սուրբի գլխավորությամբ, բարձրացան Վեհարան՝ ստանալու համար նորին Ս. Օծություն օրհնությունը:

Վեհափառ Հայրապետը հայրաբար ընդունեց բոլորին, քաջալերեց, խրատեց լավ անցկացնել ամառային հանգիստը իրենց ծնողների մոտ և սեպտեմբերին վերադառնալ Մայր Աթոռ կազդուրված, նոր եռանդով ու հավատով շարունակելու համար իրենց ուսանողական կյանքը Մայր Աթոռի հովանու տակ, Հոգեկոր Ճեմարանի սրբազան կամարների ներքո:

Ուսանողությունը աջահամբույրով՝ հրաժեշտ առավ Վեհափառ Հայրապետից:

Գլխավորների ամբողջ կուրսը, ինչպես նաև Ալսարանի ուսանողները կմնան Մայր Աթոռում, իսկ Բլսարանի, Ալսարանի և Գղասարանի մի խումբ ուսանողներ կմեկնեն ներքին թեմերը և վանքերը՝ հոգեկոր ծառայության համար: Մնացած ուսանողները կվերադառնան տուն իրենց ծնողների մոտ հանգստանալու:

ԱՅՑՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈՒՆԻՍԻ 3-ին, ՉՈՐԵՔՇԱՐԹԻ, Մայր Տաճար այցելեցին Բուլղարիայի սեղանի թենիսի հավաքական թիմի անդամները, ընկերակցությամբ Հայաստանի սեղանի թենիսի վարպետները:


Հյուրերի թվումն էր Բուլղարիայի չեմպիոն, սպորտի վարպետ Աննա Բոյաչևան: Նրանք եղան եկեղեցա-հնագիտական թանգարանում և դիտեցին Մայր Տաճարի պեղումները:

ՀՈՒՆԻՍԻ 5-ին, ՈՒՐԱԼԹ, Մայր Տաճար այցելեց ամերիկահայ հայտնի միկրոբիոլոգ, պրոֆ. Արծրուն Փախչանյանը՝ Հարգելի պրո-

ֆեսորը դիտեց Մայր Տաճարը, պեղումները, եղավ եկեղեցա-հնագիտական թանգարանում և լավագույն տպավորություններով հրաժեշտ առավ Մայր Աթոռից:

ՀՈՒՆԻՍԻ 23-ին, ԵՐԵՔՇԱՐԹԻ, Մայր Տաճար այցելեց Յուլ-Յորքի ժամանակակից արվեստի թանգարանի դիրեկտոր Ալֆրեստ Բարրան՝ կնոջ հետ: Հարգելի հյուրը Մայր Տաճարի նոր պեղումները դիտելուց հետո եղավ եկեղեցա-հնագիտական թանգարանում և մեծ հետաքրքրությամբ ծանոթացավ թանգարանի իրերի հետ: Ամերիկացի հյուրը լավագույն տպավորություններով վերադարձավ Նրևան:





Հ Ո Ք Ե Վ Ո Ր Ճ Ե Մ Ա Ր Ա Ն ՈՒ Մ

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՔԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հոգևոր ձեմարանի 1958—1959 ուսումնական տարվա ամառվա շաբաթների հանդիսությունները տեղի ունեցան հունիսի 19-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ:

Հանդիսություններին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր ձեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և հատուկ հրավիրյալներ:

Հոգևոր ձեմարանի ամառվա շաբաթների հանդիսությունը ներկա էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը:

Հանդեսն սկսվեց Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի նվազով և երգչախմբի կատարած «Որք զարդարեցին» շարականով: Ապա Հոգևոր ձեմարանի փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը հանդես եկավ բացման ճառով:

Ամառվա շաբաթների հանդիսությունը բաղկանում էր երկու մասից: Առաջին բաժնում կատարվեցին իմացական ազատ մրցանքների ատենաբանություն, շարադրություն, երգ, ինքնագիր բանաստեղծություն և արտասանություն, իսկ Կերկրորդ բաժնում Հոգևոր ձեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը կարդաց ձեմարանի 1959—1960 ուսումնական տար-

վա գործունեության տեղեկագիրը, և ապա տեղի ունեցան մրցանակաբաշխություններ: Իմացական ազատ մրցությունները կատարվեցին լարված պայքարում: Մրցող ուսանողները աշխատում էին միմյանցից խել հաղթության պսակը:

Ատենաբանության համար վերատեսուչության կողմից տրված էր «Հայ Եկեղեցին հայրենասիրության օջախ» թեման: Այդ թեմայի պաշտպանությամբ հանդես եկան Գ. լսարանի ուսանող բարեշնորհ Սանդրո սարկավազ Բեհբությանը և Ա. լսարանի ուսանող Կարապետ Սուրիասյանը: Երկուսն էլ շատ լավ էին տիրապետել նյութին և համառոտ պայքարում էին առաջնության համար:

Իմացական ազատ մրցությունների արդյունքները քննող հանձնաժողովը (գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազան, պրոֆ. Պոկտ. Ա. Առաքելյան, դասախոսներ Ա. Հատիտյան և Պ. Շահբազյան) երկու մրցակիցներին ևս արժանի գտավ առաջին կարգի մրցանակի:

Ազատ թեմայով գրված շարադրության մեջ առաջնությունը շահեց Գ. դասարանի ուսանող Խաչիկ Աբրահամյանը («Երաժիշտը»), երկրորդ տեղը գրավեց նույն դասարանի ուսանող Արամայիս Սահակյանը («Ծովը»):

Երգի մրցման մեջ (պարտադիր շարական) «Ի գերեզման յարուցելոյն» և մի այլ երգ երգողի ազատ ընտրությամբ լավագույն կատարման համար առաջին մրցանակի արժա-

նացան Բ լսարանի ուսանող բարեշնորհ Պետրոս սարկավազ Պերաբերյանը և Հակոբ սարկավազ Պողապալյանը, հատկապես առաջինը «Հով արեք» և երկրորդը «Մոկաց Միրզեն» Կոմիտասյան երգերի հարազատ կատարման համար:

1958—1959 թվականի ձմեռանի բանաստեղծի դափնեպսակը խլեց Գ դասարանի ուսանող Նուպար Պալյանը՝ «Դեպի արև» բանաստեղծության համար:

Արտասանության առաջին մրցանակը շահեց Բ դասարանի ուսանող Հովհաննես Աշխանը, որը խորունկ ապրումով արտասանեց Հովհաննես Թումանյանի «Լուսավորչի կանթեղը» պարտադիր քերթվածը և ապա Վարուժանի «Կարոտի նամակ»-ը՝ իր ազատ ընտրությամբ: Երկրորդ տեղը զբաղեց Գ դասարանի ուսանող Կարպիս Սերայտարյանը:

Իմացական ազատ մրցությունների մեջ ուշագրավ էր Հոգևոր ձմեռանի ուսանողության և մասնավորաբար մրցություններին մասնակցող ուսանողների հոգեկան-իմացական աճը, կատարելագործումը, կատարման տեխնիկայի տիրապետումը և հասկացողությունը, որը ուրախության և գոհունակության անխառն զգացմունքով էր տոգորում Վեհափառ Հայրապետի, վերատեսչության և դասախոսական կազմի սրտերը այն պայծառ հավատով, որ օրերի հետ աճում, կազմակերպվում են Հոգևոր ձմեռանի ուսանողները հոգեպես, իմացապես ու ֆիզիկապես:

Հանդեսի երկրորդ բաժնում վերատեսչության գերաշնորհ Տ. Հայկազուն արքայազանը վարդաց ձմեռանի 1958—1959 ուսումնական տարվա ընդհանուր պատկերը ներկայացնող և խնամքով պատրաստված հետևյալ զեկուցագիրը:

«Ձերդ Ս. Օծություն.

Աստուծո ողորմությամբ և Ձեր օրհնությամբ Ս. Էջմիածնի Հոգևոր ձմեռանը այս տարի ևս բոլորեց իր 1958—1959 ուսումնական տարեշրջանը խաղաղ և լավագույն պայմաններում մեջ և արդյունավոր աշխատանքով:

Նախ թույլ տվեք, Վեհափառ Տեմ, հանդիսավոր սա պահուն, հայտնել Հոգևոր ձմեռանի վերատեսչության սրտագին շնորհակալությունները Ձերդ Ս. Օծության և Գերագույն Հոգևոր Խորհրդի գերաշնորհ և հարգելի անդամներուն, մասնավոր Ձեզ, Վեհափառ Տեմ, որ զոհելով Ձեր հանգիստը, Ձեր մտահոգության առաջին առարկան դարձուցած եք Հոգևոր ձմեռանը, ամեն կերպ զայն հաջող և վերելքի ճամբուն վրա տեսնելու ազնիվ մտահոգությամբ:

Հատկապես նաև մեր շնորհակալությունը և խորունկ հարգանքը մեր սիրելի

հայրենի կառավարության, որու ներկայացուցիչը՝ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առնթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը իր բարի կամեցողությունը և ազնիվ օժանդակությունը ոչ մեկ ատեն չէ խնայած մեր Հոգևոր ձմեռանի ամեն տեսակ կարիքներու հաջողությամբ գործին մեջ: Մոռնալ այս ամենը՝ քաջ լիցի այդ տեսակ մտածում մը՝ Վեհափառ Տեմ:

Տասր ամիս առաջ, 1958 տարվան սեպտեմբերի առաջին օրերուն, երբ վերաբացումը կկատարեինք մեր կրթական տարեշրջանին, մեր խոսքերուն մեջ լավագույն փափագներ վհայտնեինք, որպեսզի մեր նոր ուսումնական տարին հաջող անցնի և մեր ջանքերը պսակվին բարի արդյունքով: Այսօր ուրախ եմ հայտարարելու, որ հաջողությամբ պսակվեցան մեր իղձերը և մասնավոր Հոգևոր ձմեռանի ստուգաթյունները, բանավոր ու գրավոր քննությունները անցան հաջողությամբ, ուրախությամբ պատճառելով Ձեզ և մեզ բոլորիս:

Ես անձնապես համոզված եմ, որ մեր ուսանողները, որոնք կդաստիարակվին Ս. Էջմիածնի Հոգևոր միջնոլորտին մեջ, անկարելի է որ չշաղախվին այն մեծ հոգիներուն հետ, որոնք իրենց արյունն ու քրտինքը թափած են այստեղ մեր ժողովուրդի և մեր մշակութի համար, և որոնց սրտերը միշտ բաբախած են ջերմ հայրենասիրությամբ, լավագույն օրերու ակնկալություններով:

Մեր ուսանողությունը ծանոթ է մեր ժողովուրդի պատմության: Անոնք լավ գիտեն, որ իրենց նախնիները դժվարին ժամանակներու մեջ, հաճախ զուրկ նյութական ամենատարրական կարիքների, (պիպացող կանթեղի մը լույսին տակ, աղ ու հացով և բաժակ մը ջուրով կերտեցին մեր հազարավոր մազադաթները, զարգացուցին մեր մշակութի, ավանդ թողուցին հաջորդ սերունդներուն: Ինչո՞ւ համար մեր ուսանողները այսօրվան լայն պայմաններուն մեջ պիտի չկարողանան շարունակել անոնց մեծ վաստակը, երբ այսօր ունինք պետություն, Հայրենիք, ապահովություն կյանքի, և ուսումնական ամեն տեսակ դյուրություններ: Վեհափառ Տեմ:

Այժմ կփափագեմ ներկայացնել Հոգևոր ձմեռանի ներքին-կյանքի առօրյան:

Ա) Շրջանավառ դասաժամ.—Ուրախությամբ կհայտնեմ Ձերդ Ս. Օծության, թե այս տարի Հոգևոր ձմեռանի վեցամյա շրջանը կավարտեն Գ լսարանի հինգ դաս:

նողները՝ Սանդրո սարկավազ Բեհրոթյան, Կարապետ սարկավազ Բենլիյան, Ժիրայր սարկավազ Զերեճյան, ուրարակիր Յուլակ Աղաջանյան և ուրարակիր Իշխան Մեկընյան: Այս դասարանի ուսանողները ապրիլի վերջերս տվին իրենց կուրսային քննությունները լավագույն արդյունքներով: Այս ամսվան մեջ կուտան իրենց ավարտական քննությունները հայ ժողովրդի պատմության, հայ մատենագրության, աստվածաբանության և Ս. Գրոց մեկնության: Այս ամսվան վերջերս շրջանավարտ դասարանի այս ուսանողներուն պիտի տրվի դիպլոմային աշխատանք, զոր պիտի հանձնեն հոկտեմբերի 1-ին, և որու բանավոր պաշտպանությունը տեղի պիտի ունենա հոկտեմբերի կեսերուն: Դիպլոմային այս աշխատանքներու հաջող պաշտպանությունն վերջն է, որ իրենց համար պիտի տնօրինվի պարտն ու պատշաճը՝ Ձերդ վեհափառության փափազին համաձայն:

Բ) Կրոնական և եկեղեցական կյանք.— Այս տարվան ընթացքին Հոգևոր Ճեմարանի մեր ուսանողներուն մեջ չպակսեցավ երբեք հոգևոր կյանքի հուրը: Դասերեն դուրս մենք ամեն կերպով, մեր բարոյական դասախոսություններով և հոգևոր խրատներով աշխատեցանք անոնց հոգիին մեջ կյանքի վերածել մեր սուրբ կրոնի սկզբունքները, ճշմարտությունները, և զանոնք առաջնորդեցինք դեպի Գեղեցիկը, Վսեմը և Բարին: Եկեղեցական պաշտամանց իրենց ամենօրյա մասնակցությունը արդեն մեծագույն վարժարանն է կրոնական կյանքի աճման և կազմակերպման:

Գ) Կրթական կյանք.— Ուրախ եմ հայտարարելու թե այս տարվան կրթական մեր գործը ևս ընթացավ շատ կանոնավոր կերպով և պսակվեցավ լավագույն արդյունքներով, ինչպես ցույց տվին ամսվերջի քննությունները: Իբրև նորություն մը մեր նախորդ ծրագրին, այս տարվան ծրագրին մեջ մտցուցինք նաև անգլիերեն լեզվի դասավանդությունը, որով Ճեմարանին մեջ կդասավանդվին չորս լեզուներ՝ հայերեն (գրաբար և աշխարհաբար), ռուսերեն, ֆրանսերեն և անգլիերեն:

Այս հանդիսավոր առթիվ Հոգևոր Ճեմարանի վերատեսչությունը իր սրտագին շնորհակալությունը կհայտնե նախ Ձերդ Սրբությանը, որ հակառակ Ձեր բազմազգադ վիճակին, գլխավորեցիք նորեն մեր ուսուցչական կազմը, դասավանդելով քարոզախո-

սություն և փրկիսոփայություն Ճեմարանի բարձրագույն լսարաններուն մեջ:

Սրտագին շնորհակալություններս նաև իմ բոլոր ուսուցիչներուն, որոնք ամենանախանձախնդիր ոգիով լծված են ուսուցչական իրենց սուրբ ասպարեզին: Այս տարվան մեր պաշտոնակից հոգևորական և աշխարհական ուսուցիչներուն ընդհանուր թիվն է 18 հոգի:

Դ) Մշակութային կյանք.— Մշակութային կյանքը բավական բազմաճյուղ է Հոգևոր Ճեմարանին ներս: Գրեթե ամեն հինգշաբթի օրերը ունեցած ենք մեր հերթական դասախոսությունները: Անցնող ուսումնական տարվա շրջանին ունեցած ենք 23 դասախոսություններ, որոնց ամփոփ արձանագրությունները պահված են մասնավոր տոմարի մը մեջ: Մշակութային հանդեսներու մեջ պետք է հիշատակել նաև այն ուրախադիմ պատահությունը, որ տրվեցավ Հոգևոր Ճեմարանիս, Ձերդ Ս. Օծություն ծննդյան հիսնամյակի առթիվ, երբ մեր տղաները իրենց երգերով և արտասանություններով հայտնեցին իրենց սերն ու հարգանքը: Հանդիպ իրենց Հորը և Ուսուցչապետին: Հանդիսավոր նիստեր տեղի ունեցան նաև Կոմիտաս վարդապետի ծննդյան 90-ամյակի, պրոֆ.-դոկտ. Արարատ Դարիբյանի ծննդյան 60-ամյակի, Դանիել Վարուժանի ծննդյան 75-ամյակի, Շիրվանզադեի ծննդյան 100-ամյակի, Վարդանանց հիշատակին և պետական տոներու առթիվ: Այս բոլոր հանդիսությանց մեջ մեր սաները ամենայն խանդավառությամբ բերին իրենց գործոն մասնակցությունը: Ճեմարանի կրթական կյանքին մեջ կմտնեն նաև շաբաթ երեկոներու մեր հավաքույթները, ուր կրթիչ ժապավեններ կցուցադրվին Ճեմարանի ոգիին համապատասխան: Հիշատակության արժանի են շաբաթ օրվան այդ երեկույթներուն մեջ Ձեր երկու դասախոսությունները, զորս կարդացիք «Նավատավոր, լուսամիտ և ճայրեմասեր» հոգևորականներ ունենալու անհրաժեշտության մասին, թե՛ Հայ եկեղեցիին և թե՛ Մայր Աթոռն ենք:

Այստեղ զոհունակությամբ պետք է նշենք, որ այս ուսումնական տարվան ընթացքին Ճեմարանին ներս չենք ունեցած լուրջ և մտահոգություն պատճառող հիվանդություններ: Այդ բանին նպաստեց նաև Ճեմարանին ներս շարք մը առողջապահական միջոցառումներու հետ նաև մարզական կյանքի, խաղերու և ընդհանրապես սպորտի կազմակերպությունը:

Ե) Էֆսկուրսիաներ.— 1957—1958 ուսումնական տարին փակվեցին անմիջապես հետո, շուրջ 60 հոգի ուսուցիչ և ուսանող, 4—5 օր-

րու զբոսարշավ մը կազմակերպեցինք դեպի Սևանի ավազանը, մեր պատմական վանքերը, այցելեցինք Ղարաբաղ և վերադարձանք լավագույն տպավորություններով: Իսկ այս ուսումնական տարվան ընթացքին կազմակերպեցինք երկու ուխտագնացություններ Գեպի Գեղարդ: Այս տարի, այս հանդեսին վերջ, Վեհափառ Տեր, Ձեր ցուցմունքով ուսանողությունը մեկ շաբաթ ժամանակով կմեկնի Հաղարծինի վանքը՝ հանգստանալու և կազդուրվելու համար, և ապա մեկ որոշ մասը կվերադառնա տուն, իսկ ուսանող սարկավազներն ու լսարանավարտները պաշտոնի կկոչվին ժամանակավորապես Մայր Աթոռին և ներքին թեմերին ներս:

Այստեղ առանձին գոհունակությամբ պետք է արձանագրենք, որ ուսանողները սիրով կկատարեն շատ մը առտոնին աշխատանքներ, որոնք կապ ունին ձեմարանի ներքին կյանքին հետ: Այսպես օրինակ հիվանդապահություն, հանդերձապահություն, դասարաններու և խաղերու վերահսկողություն, ձեմարանի բակին մեջ տնկված ծառերու ջրատվություն և այլն:

2) Գրադարան-ընթերցարան Հոգևոր ձեմարանի.— Հոգևոր ձեմարանը ունի նաև իր գրադարան-ընթերցարանը, որու գրքերու ֆոնդը տարվե-տարի կհարստանա թե՛ նվիրատվություններով և թե՛ գրենական գնումներով: Գրադարանը կգտնվի ձեմարանի վերատեսչության հսկողության տակ: Գրադարանապետն է Սանդրո սարկավազ Բեհբուդյանը, իսկ գրադարանավարը՝ պր. Արշակ Խաչատրյանը, որոնք խղճմտորեն լծված են գրադարանի գործին: Այժմ մեր գրադարանը ունի շուրջ 12000 հատոր գիրք, առավելաբար սուրբգրական, հայագիտական, պատմաբանասիրական բաժիններով: Այժմյան գրադարանին կից շուտով պետք է սարքվի հատուկ գրապահարան մը, իսկ այժմյան գրադարանը կծառայի որպես ընթերցարան:

Վեհափառ Տեր.

Ահա համառոտ պատկերը Հոգևոր ձեմարանի տարեկան գործունեության, զոր կներկայացնեմ Ձեզ և Գերագույն Հոգևոր Խորհուրդին:

Այս ուրախ պահուն չեմ կարող իմ սրտի խորունկ շնորհակալությունը չհայտնել իմ սիրելի փոխ-տեսչի՝ հայր Մեսրոպին, որ իր անձնվեր գործունեությամբ և բարի նախանձախնդրությամբ միշտ արթուն պահակի մը պես կհսկե ձեմարանի կարգ ու կանոնին, կարգապահության վրա, որպես ինձի գործակից և մանավանդ սրտակից՝ ձեմարանին

վերաբերյալ բոլոր հարցերուն մեջ: Շնորհակալություններս նաև ձեմարանիս ավագ վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանին, որ հակառակ վերակացուի իր սպառնալի պարտականությանց, չի թեղանար նաև հոգևորականի իր պարտականությանց մեջ: Շնորհակալություն նաև սիրելի Կարապետ սարկավազ Բենիյանին, որ ավագ վերակացուի բացակայության ժամանակ զայն կփոխարիներ:

Այս հանդիսավոր առթիվ չեմ կարող մոռնալ Մայր Աթոռի իմ պատվական միաբանակից բոլոր եղբայրները և բոլոր աշխարհական պաշտոնյաները, որոնք իրենց բարի խորհուրդներովը և սիրալիրություններով հասցուցին մեր գործը այս տարվան իր փայլուն ավարտին: Շնորհակալություն բոլորին:

Շնորհակալությանց այս արտահայտություններուն մեջ չեմ կարող մոռնալ մանավանդ արտասահմանի քսանե ավելի Հոգևոր ձեմարանի այն պատվական բարերարները, որոնք նյութապես կօգնեն ձեմարանի մեր սուրբ գործին և հեռվին մեզ հետ են, Վեհափառ Հայրապետի հետ, Մայր Աթոռի հետ, Հոգևոր ձեմարանի հետ և Մայր Հայրենիքի հետ:

Լո՛ւյս և օրհնություն բոլոր բարի և ազնիվ հավատացյալ և հայրենասեր հոգիներուն, որոնք հոգեպես, բարոյապես և նյութապես կօգնեն Հոգևոր ձեմարանին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Վերատեսչի տեղեկագրի լսնեցումից հետո, հրապարակվեցին անունները այն ուսանողների, որոնք իրենց ջանասիրությամբ և վարքով ու բարքով արժանացել էին մրցանակի:

Ուսման մեջ առաջնության համար պարգևատրվեցին Խորեն Մեյիանաշյանը (Բ լսարան), Հակոբ Գյուկչյանը (Ա լսարան), Խաչիկ Աբրահամյանը (Գ դասարան), Վոսմաշյանի Ժիհանյանը (Բ դասարան), Կարապետ Քիլիճյանը (Ա դասարան):

Ուսման մեջ երկրորդ կարգի մրցանակի արժանացան բարեշնորհ Հակոբ սարկավազ Պողապալյանը (Բ լսարան), Կարապետ Սուքիասյանը (Ա լսարան), Արամայիս Սահակյանը (Գ դասարան), Եղվարդ Ավագյանը (Բ դասարան), Արմենակ Յանդգյանը (Ա դասարան):

Երկրորդ տարին է, որ ձեմարանում չկա երկտարեցի: Դա պայծառ ապացույցն է այն բանի, որ ուսանողությունը սիրում է ձեմարանում ավանդված ուսումնառությունը:

նր և կապված է ձեմարանի նպատակների հետ:

Գերազանց վարժի համար մրցանակի արժանացավ Ա. դասարանի ուսանող Երևմ ժամկոչյանը:

Իմացական ազատ մրցույթումներում առաջնություն շահող ուսանողները ևս արժանացան մրցանակների: Մրցանակի արժանացած ուսանողները Վեհափառ Հայրապետի ձեռքից աջահամբույրով ստացան իրենց նվերները՝ դահլիճում հավաքվածների խանդավառ ծափերի տակ:

Ապա խոսք առավ Վեհափառ Հայրապետը. «Սիրելի՛ ուսանողներ.

Մեծ ուրախությամբ մասնակցեցանք մեր Հոգևոր ձեմարանի ամսվերջի այս հանդեսին: Հանույնով լսեցինք ձեր երգերը, ձեր խոսքը, ու տեսանք ձեր հառաջդիմության բարի արդյունքները: Այս բոլորը քեզ արտահայտվեցան քանի մը ուսանողներու միջոցով, սակայն մենք հավատացած ենք, որ անոնք կբխեն ձեր բոլորի սրտերեն ու միտքեն: Այս առումով, մրցանակները որոնք բաշխվեցան որոշ աշակերտներու, բաշխված կըլլան ձեզ բոլորից հավասարապես:

Սիրո և ուսումի այս սուրբ հարկին տակ, դուք եկած եք մշակելու ձեր հոգիները, պայծառացնելու ձեր մտքերը և ջերմացնելու ձեր սրտերը ապագայի միակ իղեւորով մը, այն է՝ օր մը բոլորանվեր ծառայելու գրեթե երկու հազարամյա Ս. Էջմիածնին, հաւաքաւ մեր ժողովուրդին և վերածնած Մայր Հայրենիքին:

Այսպիսի սուրբ կոչում մը կսպասե ձեզ և գործելու այսպիսի լայն հորիզոն մը, որ սկսելով Մայր Հայրենիքէն, կընդարձակվի մինչև հեռավոր հորիզոնները և արեւը աշխարհի, ուր մեր ժողովուրդը գրված, բայց հոգեպես միասնական, կապրի և կուրախանա ու կհրեմի Ս. Էջմիածնով և Մայր Հայրենիքով:

Ս. Գրիգոր մեջ գրված կա մեծ խոսք մը. «Ոչ միայն հացի կեցցե մարդ, այլև բանի Աստուծոյ»: Մարդը իր բնությամբ, իր էության խորքով միայն կենսաբանական երևույթ չէ: Ան կտարբերի մյուս բոլոր արարածներէն, կենդանական աշխարհէն, անով, որ ան չապրիր միայն «հացի», այլ ներքին պահանջը, մղումը ունի «բանի» ապրելու: Մարդը չի կրնար բավարարվիլ միայն նյութական սնունդի պայմանով: Մարդկային ֆաղափակչության պատմությունը իր հրաշալի բոլոր արժեքներով արտահայտությունն է ոչ քե նյութական

հացի պայմանին, այլ «բանի» ապրելու պահանջին, որ ծնունդն է և միաժամանակ սնունդը հոգեկանին:

Մարդը չափազանց բարդ իրականություն մըն է, երբեք կարելի չէ գայն բնորոշել միայն նյութական և կենդանական աշխարհի տվյալներով կամ ֆորմուլաներով: Չընդունիլ և շտեմել նշմարությունը «բանի» ապրելու իրական պահանջին, պիտի նշանակեր շնանչաւ մարդկային բնությունը, պիտի նշանակեր շնանչաւ մարդը այնպես, ինչպես այն կա իր ներաշխարհով, իր հույզերով, իր խոր ապրումներով, իր հակասություններով, իր երազներով, իր ստեղծվածներով և մանավանդ դեպի հավիտենական կյանք իր հոգեկան խոյանքով:

Կյանքի այսպիսի նախադրեքին, մարդ կհասնի հոգևոր, բարոյական և մշակութային սխանչելի բարձունքներու և կդառնա մասնակից արարչագործության՝ իբրև ստեղծագործող էակ: Նույն մարդը սակայն կարող է գործել նաև հակառակ ուղղությամբ, իբրև ժխտող ու ֆանդող ու: Մարդը կայուն իրականություն չէ, այլ միշտ եերակա և՛ բարձրանալու և՛ սողալու: Պասգալը կրսն իրավամբ. «մարդը բնության քե՛ ամոքն է, քե՛ փառք միաժամանակ»:

Մեզմե ամեն մեկեն կախում ունի, քե ի՛նչ ուղղությամբ պիտի ընթանա: Կրոնական հավատքը, եկեղեցին, մարդուն և ժողովուրդներուն «բանի» ապրելու պահանջի արդյունքներէն մին է և մեր քմրոնումով զըլխավորը: Այլ կարծիք ունենալ կրնի և եկեղեցիի մասին, կխորհրդէ, քե պիտի ըլլար ոչ գիտական մտնցում և մակերեսային ստածումի արդյունք:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին դարերով գործած է այս ոգիով, այսպիսի «ֆունկցիա» առած իր վրա: Դարեր շարունակ Հայաստանյայց Եկեղեցվո և Ս. Էջմիածնի մեջ և անոնց շուրջ, ստեղծված և կուտակված են հոգևոր, բարոյական, մշակութային հիշատակության արժանի վավերական արժեքներ, որոնք մարդկության ֆաղափակչության պատմության մեջ իրենց ուրույն և պատվավոր տեղը գտած են վաղուց ի վեր:

Անշուշտ ժամանակներ կփոխվին: Կփոխվի մարդկային կյանքի պատկերը՝ իբրև ընկերային տնտեսական կառույց, իբրև գիտական, փիլիսոփայական աշխարհայացք, իբրև հոգեբանություն և կենցաղ: Այդ հետևանք է անշուշտ հառաջդիմության և կյանքի դիպեկտիկ հեղաշրջման: Մենք պետք է ֆալենք գիտության հետ, գիտ-

նանք վերանորոգվիլ, միշտ ըլլալ օրվան առաջավոր շարքերուն մեջ, առանց երկյուղ ունենալու կյանքի նոր տարազներեն:

Արդ, մեծ հարց կծագի և կդրվի մեր՝ մասնավորապես հոգևորականներու առաջ: Ինչպե՞ս հաշտեցնել կյանքի նոր կառույցը կրօնական զգացումին հետ: Մեր կարծիքով, մեր սուրբ հավատքին մեջ կան հավիտենական նշմարտություններ, որոնք հավերժ պիտի մնան: Այդ հավիտենական նշմարտությունը գեղեցիկ կերպով կրկնորդվի «Բան Տեառն մնայ յաիտեան» խոսքով: Ապագան ցույց պիտի տա գոյակցության կերպը հավատքի և կյանքի նոր ձևերու միջև:

Մեր Ս. Եկեղեցին փարացած ըմբռնումներ չէ ունեցած, ոչ ալ վարակված է եկեմիտ ոգիով: Ան միշտ իր հավատացյալներու սիրտն ու միտքը բաց է պահած գիտության առաջ, մտքի ու հոգիի բոլոր նշմարիտ, համամարդկային նվաճումներուն առաջ: Մեր Եկեղեցին գուցե կտարբերի այլ Եկեղեցիներեն իր առավել ազատամտությամբ, լայնախոհությամբ և հառաչդիմասիրությամբ:

Այսօր մեր Եկեղեցին կանգնած է մեծ հարցերու առջև: Ան ունի նաև լուրջ և բախտորոշ պարտականություններ հայ ժողովուրդի նկատմամբ: Նման առաքելություն մեր Եկեղեցին անցյալի մեջ ալ պատվով կատարած է և հավանաբար նույն հաջողությամբ այն պիտի կատարե նաև մեր օրերուն:

Ահա այդ առաքելության այսօրվան ձևերը. ա) Հոգևոր շինության աշխատանք, բ) մշակութային աշխատանք, մանավանդ վերանորոգումը մեր հին նախնապետական կոթողներու, որպիսին են մեր բազմադարյան վանքերը և Եկեղեցիները, գ) ազգային-հայրենասիրական աշխատանք, որ մեր բոլորիս սրտին այնքան փառք կխոսի և ուժգին: Մենք միշտ պիտի գործենք անվարան կերպով, հավատարիմ Մեր ժողովուրդի և մեր վերածնած նոր Հայրենիքի գերագույն շահերուն, իրականացնելով հայ ժողովուրդի, հատկապես սփյուռքահայության միասնությունը Ս. Էջմիածնով և մեր այս ժողովող Մայր Երկրով:

Ահա այն նվիրական գործը, որ մեր կյանքի նպատակն է, որ պիտի ըլլա նաև մեր կյանքի նպատակը, սիրելի ուսանողներ: Գուցե քիչ անգամ տրված կըլլա մարդոց ծառայել այսպիսի վսեմ, ազնիվ նպատակներու: Մենք կմաղթենք ձեզ շնորհք, ուժ և եռանդ, որպեսզի անիք, գո-

րանաք և մեր կյանքը ընծայաբերեք մեր Ս. Եկեղեցիին, Ս. Էջմիածնին:

Շնորհակալության և գոհունակության խոսք ունինք ուղղալ Մայր Աթոռի Հոգևոր ձեռնարանի ղեկավարության՝ վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանին, հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետին և ամբողջ պատվական դասախոսական կազմին, որոնք իրենց իմացական, հոգեկան բոլոր ուժերը, ի սպաս դրին ուսումնական բովանդակ տարվան ընթացքին: Մխիթարական է նշել ու շեշտել այն սերն ու նվիրումը, որով վերատեսուչ սրբազանը եկավ մեզ մոտ և մնաց մեզ մոտ, այնքան ջերմությամբ, վերջնականապես կապվելով Ս. Էջմիածնին և Հայրենի Հողին:

Կշնորհավորենք ուսանողությունը իր ձեռք բերած հաջողություններուն համար: Կրկնող ուսանող չունենալը, Մենք համոզված ենք, ձեռնադրություն կամ պատանակություն չէ երբեք, այլ արդյունքը նշմարտապես մխիթարական վիճակի մը: Մեր ուսանողները բազում շնորհներ ունին և իրավ կամեցողություն՝ մշակելու իրենց հոգիները և միտքը և ծաղկեցնելու զանոնք, ապագային դառնալու համար լիարժեք հայ Եկեղեցական սպասավորներ:

Կշնորհավորենք ի մասնավորի ավարտական դասարանը՝ երեք սարկավագներ և երկու ամուսնացյալ ֆահանայացուներ, որոնք Մեր կաթողիկոսական շրջանի առաջին շրջանավարտներն են: Վստան ենք, թե անոնք, սուրբ առաքելության գիտակցությամբ լեցված՝ պատրաստ են աշխատանքի անցնելու Տիրոջ այգիին մեջ:

Դնանատանքի խոսք ունինք նաև մեր-ցություններուն մասնակցող մեր սիրելի ուսանողներուն, որոնք արժանավորապես նվաճեցին իրենց մրցանակները:

Վերջին խոսքով մը կուզենք Մեր օրհնությունը բերել այս սուրբ հարկին, անոր ղեկավարներուն, դասախոսներուն, ուսանողներուն և պաշտոնյաներուն, որոնք ուժ և եռանդ չեն խնայեր Հոգևոր ձեռնարանի և Ս. Էջմիածնի հառաչդիմության համար: Հուսով ենք, որ արձակուրդի կազմուրիչ ընդհատումեն հետո սեպտեմբերին կշարունակվի մեր Հոգևոր ձեռնարանի աշխատանքը՝ նոր եռանդով և նոր հաջողություններով:

Թող Աստված օրհնե այս սուրբ հարկը և անսասան պահե՛ զայն աստվածակառույց Մայր Տաճարի կողքին, ի փառս հայ հավատացյալ ժողովուրդին:

Վեհափառ Հայրապետի «հուսկ բանք»-ը ընդունվեց խորունկ ուշադրությամբ և բուռն ծափահարություններով:

Հոգևոր ծեմարանի ամսվերջի հանդիսությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և երգչախմբի երգած «Հայր մեր»-ով:


Ժամը 3-ին, Վեհարանում, ի պատիվ Հոգևոր ծեմարանի վերատեսչության և դասախոսական կազմի, կազմակերպվել էր ընդունելություն, որն անցավ շատ ջերմ և խանդավառ մթնոլորտում: Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը հանդես

եկավ Հոգևոր ծեմարանի և դասախոսական կազմի առաջ կանգնած հայրենասիրական, կրթական, ուսումնա-դաստիարակչական պատասխանատու աշխատանքի մասին ոգեշունչ, իմաստալից ճառով և խրատականով:

Վեհափառ Հայրապետը վերջում բարեհաճեց իր խորունկ գոհունակությունը հայտնել ծեմարանում կատարված ուսումնա-դաստիարակչական, կրթական աշխատանքների համար:


Ընդունելությունը վերջացավ խմբովին երգված «Էջ Միածինն ի Հօրէ» շարականով:





ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՀՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՐՊԵՍ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՕՋԱԽ



Իր եկեղեցու անունն ինքնին ցույց է տալիս, որ նա ի սկզբանե կապված է ժողովրդի և Հայրենիքի գաղափարի հետ։ Նա կոչվում է ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ։ Աշխարհում միակ եկեղեցին է, որ այս յուրահատուկ անունը, բնորոշումը ունի։ Եվ դա պատահական չէ, այլ համապատասխանում է խորքում ճշմարտության, իրականության։ Հայ Եկեղեցու նպատակն է եղել և է՝ ծառայել հայ ժողովրդին և Հայ Հայրենիքին իբրև հավատի աղբյուր, իբրև լուսավորության կենտրոն, իբրև հայրենասիրության օջախ։

Դ դարում քրիստոնեության պետականացումը Հայաստանում պատճառ եղավ զրահվելու համար Ազգային Եկեղեցիով, որ պիտի պահպաներ մեր ժողովրդի ինքնությունը դեմքն ու հոգին՝ որպես հոգևոր և մշակութային միավոր։ Ս. Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Դ-ի առաջին ձեռնարկումն էր լուսատու եկեղեցիների շինությունը, եկեղեցական նվիրապետության կազմակերպումը։ «Եկայք, շինեցուք սուրբ զխորանն լուսոյ, բանգի ի ամա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»։

Քրիստոնեությունն ընդունելուց հետո, ազգային գաղափարը միախառնվեց Եկեղեցու մեջ, այնպես որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու անդամ չլինելը համանիշ էր հայ չլինելուն։ Դրա հետևանքն է մեր Եկեղեցու պատմության մեջ այնքան նախանձախնդիր կերպով պահպանված եկե-

ղեցական անկախությունը, որը հոմանիշ էր նաև հայ հոգու անկախությանը։

Հայ գրերի գյուտը կապված է քրիստոնեական ուսմունքի և գաղափարախոսության տարածման հետ։ Պատահական չէ երբեք, որ այդ գործին ձեռնամուխ եղան մեր Եկեղեցու մեծ գործիչները՝ Ս. Սահակ ու Ս. Մեսրոպ։ Ինչն էր հայ գրերի ստեղծման պատճառը, եթե ոչ Արևմուտքից և Արևելքից սպառնացող հայակույ ոտնձգությունների դեմ պատվար կանգնելու անհրաժեշտությունը, որ իրագործվեց մեր Եկեղեցու այդ խոշորագույն ներկայացուցիչների կողմից։ Միայն քրիստոնեական ուսմունքի տարածման անհրաժեշտությունը չէր, որ պատճառ հանդիսացավ գրերի գյուտին, այլ նաև Հայրենիքի ինքնությունը գոյությունը պահելու գլխավոր մտահոգությունը, որը առաջինը գիտակցեց Հայ Եկեղեցին։ Գրերի գյուտից հետո ստեղծված գրականության բնույթն անգամ, մեղբերում է այն համոզման, որ գրերի գյուտի խթան հանդիսացող պատճառներից հիմնականը հայրենասիրությունն էր, ապացույց՝ ծ դարի մեր ինքնությունը գրականությունը, հատկապես պատմագրությունը, որը հայրենասիրական զգացման ամենավառ արտահայտությունը հանդիսացավ։ Չպետք է մոռանալ, որ գրեթե մեր բոլոր պատմագիրներն էլ եկեղեցական գործիչներ էին։

Առանց հայ գրի և գրականության, հայ ժողովուրդը վաղուց ձուլված կլիներ պարսից, ասորիների և հույների մեջ, թողնելով

պատմութեան մեջ միայն մի տխուր և անփառունակ տապանադիր: Ե դարում եթե Ս. Մեսրոպը հորինեց հայերեն տառերը, ապա իր գործակից աշակերտ վարդապետները այդ հրաշալի գյուտը բազմակողմանի կերպով գործադրեցին, իբրև մի դյուսթական բանալի, որ Ս. Գրքի, եկեղեցական գրականութեան, ազգային պատմութեան և ժամանակակից հոգևոր կյանքի մյուս բոլոր դասձարանները բաց էր անում: Փոխադարձաբար հայ հոգին և միտքը բացվում էին վսեմ խորհուրդների, սրբազան զգացումների և գաղափարական ձգտումների առաջ:

451 թվականին, երբ Պարսկաստանը ուղում էր մեզ իբրև ազգ ձուլել, հայ Եկեղեցին մեկ րոպե իսկ չվարանց սուր ի ձեռին հեթանոսների դեմ կռվելու՝ հանուն կրոնի և Հայ Հայրենիքի՝ ազատութեան: Վարդանանց հետ զոհվեցին նաև Ղևոնդյանք. Հայ Եկեղեցու հայրենասիրութեան մի վառ ապացույցն է այս: Նույնիսկ Վարդանանց պատերազմի նշանաբանը՝ «վասն Յիսուսի, վասն հայրենեաց», ապացուցում է այն ճշմարտությունը, որ քրիստոնեության ուսմունքը մոռացության չմատնեց Հայրենիքի սերը, ընդհակառակը՝ ավելի բարձրացրեց և ազնվացրեց այն: Այս պատերազմին, ինչպես նաև հետագա մյուս բոլոր պատերազմներում, Հայ Եկեղեցին օրհնել է հայ ժողովրդի հերոսական դիմակալության ոգին, ներշնչել է ազգային անկախության գաղափարը, մշակել է ազգային ինքնագիտակցության զգացումը և խաշն ու Ավետարանը ձեռքին՝ քաջալերել հայ զորքը, առաջնորդել դեպի հաղթություն:

Ո՛վ գլխավորեց մեր ժողովրդի քաղաքական-ազգային կյանքը՝ մեր քաղաքական անկախության կորստից և պետականության վերացումից հետո, եթե ոչ մեր Եկեղեցին, հանձին իր ազգաշեն, հայրենասեր հայրապետների, պատրիարքների ու առաջնորդների, Հայ Եկեղեցու ամբողջ պատմությունը, հայ ժողովրդի գերագույն շահերի պաշտպանության և ի պահանջել հարկին ժողովրդի հետ մեկտեղ նահատակվելու պատմությունն է:

Անցյալում օտարները ձեռք են բարձրացրել մեր ժողովրդի ազատության ու անկախության վրա, փորձել են խոր խոցել նրա հոգին: Այդ դաժան պայքարներում Հայ Եկեղեցին է, որ հայ ժողովրդի գլուխն է անցել և կազմակերպել նրա պայքարը թշնամու դեմ: Այդ դաժան օրերին Հայ Եկեղեցին էր, որ հայ ժողովրդի հոգում վառել է հայրենասիրության ջահը, և հայ ժողովուրդը, իր խոփը վահան դարձրած, հայ Եկեղեցական իր գրիչը՝ սուր, վանքերը

ապաստանարան շինած, խաչքարերը՝ դիրք, տաճարները՝ բերդի վերածած, և խունկը՝ վառողի, դիմադրել է թշնամուն, ազատագրական պայքարի է դուրս եկել թշնամու դեմ, իսկ հայ եկեղեցականը հաջորդ բոլոր հայ սերունդների համար հայրենի դպրոցն էր, որում վիպել ու հավերժացրել է հայ ժողովրդի հերոսական պայքարը:

Մեր միջնադարի բոլոր վանք-դպրոցները եղել են որքան կրոնական-մշակութային կենտրոններ, նույնքան էլ հայրենասիրական օջախներ, Տաթևն ու Գլաձորը, էջմիածինն ու Գանձասարը հանդիսանում էին ազատության ներշնչարան և դարբնոց:

Վերջին շրջանում Արմաշը, Վարազը, Գևորգյան Ճեմարանն ու Ներսիսյան դպրոցը պատրաստեցին այնպիսի հոգևորական և աշխարհական գործիչներ, որոնք աչքի են ընկնում նաև իրենց հայրենասիրական գործունեությամբ և մեծ վաստակով: Նույնիսկ Արմավյան իր հայրենասիրական առաջին դաստիարակությունը ստացել է էջմիածնում, այս նվիրական հարկի տակ և հաղորդակից է եղել մեր պատմության, կարգացել նորենացուն, Եղիշեին, Բյուզանդին և վարակվել ու բոցավառվել նրանց հայրենասիրությամբ: Արմավյանի խոսքերն իսկ են. «Ի՞նչը կարող էր պահել հայ ժողովրդին, եթե չլիներ Եկեղեցին ու հայ լեզուն»: Հայ Եկեղեցու ծոցից դուրս եկած բոլոր նշանավոր եկեղեցական գործիչները մեծ հայրենասերներ են եղել և եթե եղել են ոչ հայրենասերներ էլ, ապա նրանք Հայ Եկեղեցու աչքին եղել են անարժան ու խորթ:

Հայ ժողովրդի փորձության ծանր օրերին, Հայ Եկեղեցին նրան երբեք ու երբեք չի լքել: Դուք մեր պատմությունից շատ օրինակներ կարող եք հիշել, ես մեջ եմ բերում միայն երկուսը մեր օրերից, և շատ թարմ:

Առաջին համաշխարհային պատերազմին, 1918 թվականին, Կարսում, Գարեգին եպիսկոպոսը, իբրև մեր օրերի Ղևոնդ Երեց, իր ժողովրդի հետ խաչը ձեռքին իջավ մարտի դաշտ և փր հայրենաշունչ խոսքերով հերոսական ոգի ներշնչեց հայ բանակին ու ռազմիկներին, նրանց խրախուսելով Հայրենիքի պաշտպանության, և նույնիսկ մարտի դաշտում գերի ընկավ:

Երկրորդ համաշխարհային պատերազմին, Հայ Եկեղեցին, իր գլուխն ունենալով Գևորգ արքեպիսկոպոսի պես խոհուն, անձնդիր քաջ հովիվ, պարզեց դարերով իմաստնացած խոր սրբազան հավատամբը՝ «Հայրենիքի իր սրբազան հավատամբը»՝ «Հայրենիքի» իր սրբազան հավատամբը: Եվ Գևորգ արքեպիսկոպոսի հայրենասիրական կոչերով ոգեշնչված, Սփյուռքի և Մայր Երկրի հայ

հավատացյալները ամենազեղում սիրով տրամադրեցին իրենց նյութական միջոցները, որով կառուցվեցին տանկային շարասյուներ, Հայրենիքի պաշտպանության համար հայ պատմական էպոսի հերոսի՝ Սասունցի Դավթի անունով, որը հայ ժողովրդի քաջության, հայրենասիրության, եկեղեցասիրության մարմնացումն է:

Այսօր էլ Հայ Եկեղեցին, Ս. Էջմիածնի և նրա մեծ, հայրենասեր Հայրապետի գլխավորությամբ, իր պատմական առաքելությունն է շարունակում իբրև հավատի կենտրոն, հայրենասիրության օջախ և մեր

օրերում իբրև հայ ժողովրդի միասնության ախոյան: Ահա այս անփստելի ճշմարտությունն է խտացրել հայրենասեր և խաղաղասեր Հայրապետը պատմական իր մեկ քարոզում հետևյալ տողերի մեջ. Մեր ժողովրդի արդար խիղճը վկա, մեր մշակույթը, մեր պատմությունը վկա և մեր նոր կյանքը վկա, մենք, բոլոր հայերս, մեկ Ազգ ենք և մեկ եկեղեցի՝ անխախտ, անբաժան, այժմ և հավիտյան, Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնով և Մայր Հայրենիքով:

Հայ Եկեղեցին եղել է ու կմնա միշտ օջախը ճշմարիտ հայրենասիրության:



ՆՈՒՊԱՐ ՊԱԼՅԱՆ

(Հոգևոր ճեմարանի
7 դասարանի ուսանող)

Դ Ե Պ Ի Ա Ր Ե Վ


Որքա՛ն երազ ու որքա՛ն սեր,
Ու որքա՛ն խիճկ կա մեր սրտում,
Ու ձգտումներ բյուր բյուրավոր,
Որ ամեն օր,
Մեր պողպատյա ձեռքերի տակ
Շունչ առնելով,
Կյանք են վազում գետի նման,
Դառնում օվկիան:
Մեկս այստեղ հաստոցի մոտ,
Մյուսս դաշտերում լայնատարած,
Եվ ամենուր՝ օդում, ծովում,
Եվ ցամաքում,
Մի սիրտ դարձած,
Մարգարտակոտ փառն ենք դնում
Խաղաղության սեզ փառոսի
Պատվանդանին՝ խնդությամբ լի:
Ու դեռ փանի մեր ջիղերում,
Հայկա տոհմի արյունը կա,
Ու դեռ փանի ծերունագարդ,
Մեր Մասիսն է կանգնած վկա,
Բյուրերի հետ պիտ պսակենք
Փառքերով ճոր,
Մենք ամեն օր,
Մեր երկնահաս Հայրենիքի
Ճակատը վես,
Նոր հարսի պես,
Ու պիտ գոչենք աշխարհով մեկ՝
«Խաղա՛ղ եղբ»:
Ու թե հանկարծ կիսատ մնան,
Եթազները մեր բյուրավոր,
Որ հույզերն են մարդկանց բոլոր,
Չենք տխրի մենք,
Զի լավ գիտենք,


Որ մանուկը Ոսկեդարի
Մեր նույն իղձով պիտի ծնվի:
Եվ արքած ճոր կյանքի ոգով,
Ազգերի հետ եղբայրական,
Իր բյուրեղյա շփեղ փառքով,
Հանճարներով անմահական,
Դեպ իր երազն է ընթանում
Ժողովուրդն իմ հազարամյա,
Վաղուց փշրած կապանքներն հին,
Դարձած կյանքին,
Հաստատ բռնած եղբայրության
Անմար ջանք գլխից վերև
Որպես արև,
Ու հաղթական այս շփերի
Անփակտելի կոտ շարքերում,
Դեղածիծաղ Ոսկեդարի
Նոր հայի հետ նույն դիրքերում,
Հաղթ փայլում է փառ նվաճում,
Սուրբ երգիչը Ավարայրի,
Ու Պատմահայր Խորենացիին,
Քերթողը մեծ Հայոց Ազգի:
Ահա տեսե՛ք նրանց կողմին,
Մատյաններով մեծապատան,
Հանճարներն են մեր բյուրավոր,
Աստղերի պես ջինջ ու անմար,
Որոնք դարեր Հայրենիքիս
Վես ճակատն են փառքով օծել,
Ու շողացրել ինչպես Մասիս,
Ճամբարներում մութ ու անել,
Սահակը սուրբ, Ներսեսը մեծ,
Ու Մաշտոցը, մեծ ուսուցիչ,

Որ լույս տվեց հայու հոգուն
 Ու երա կոշտ ձեռքին՝ գրիչ,
 Որ եա խավար մղձավանջում,
 Հոգու լույսով հարթի ուղին,
 Ճիւղաններում բիրտ ազգերի,
 Չմեա հայն երբեք գերի:
 Տե՛ս, Վարդանը լայնաբիկուն,
 Ճախրող արծիվն Ավարայրի,
 Ու Վասակը հայրենադավ,
 Գրուխը կախ ու թախծալի,
 Իր զոջանքի երգն է երգում,
 Զարթնած իր սին երազներից...
 Ու դեռ անմահ Նարեկացին,
 Ու Քուչակը՝ փառքի գագաթ,
 Սայաթ-Նովան՝ սիրո փնար,
 Իր երգերով վեհ ու անհաղթ,
 Արուսյանը՝ «Վերս»-ի երգիչ
 Ու հիմնադար մեր նոր լեզվի,
 Սիամանթոն՝ կայծերի խուրձ,
 Ու Դուրյանը՝ լիվուծ հոգի,
 Մեծարենցը՝ հոգու թրթիռ,

Վարուժանը՝ հանճարամիտ,
 Ու վերջապես ձայնի արհան՝
 Կոմիտասը՝ անկրկնելի:
 Ու ֆայլում են, ֆայլում կրկին,
 Հանճարներն մեր բազմաբեղուն,
 Դեպի առաջ, դեպի նոր կյանք,
 Դեպի արևն հազարանուն:

Փա՛նք ֆեզ հավենտ, դու տառապած,
 Բայց միշտ ջանել Հայրենիք իմ.
 Քո գարունքի այս վեհ պահին,
 Մաղթում ենք ֆեզ, ամբողջ հոգով,
 Միշտ Մասսի պես դարեր շողաս,
 Ու փառքերով քո նորանոր,
 Լինես միշտ վեհ ու երկնահաս,
 Շեփորների զիլ կանչի տակ,
 Բռնած ջանք գլխիդ վերև,
 Ազատասեր մարդկության հետ,
 Հաղթ ֆայլերով հասնես արև:





Ա Ր Շ Ա Կ Ա Լ Պ Ո Յ Ա Հ Յ Ա Ն

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Հունիսի 17-ին լրացավ սփյուռքահայ բազմահմուտ բանասեր, անվանի հայագետ և բազմավաստակ պատմաբան Արշակ Ալպոյաճյանի ծննդյան 80 և գիտական-մանկավարժական գործունեության 60-ամյակը:

Վեհափառ Հայրապետը, այս բարերաստիկ առիթով, իր սրբատառ կոնդակով, մեծանուն հորեկարին շնորհեց Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ադամանդակուռ շքանշան, ի վարձատրություն հորեկարի «երկարամյա բեղուն, գրական արժեքավոր գործերու, որոնցմով հորեկարը հարստացուցած է մեր ազգային մշակույթի գանձարանը»:

Արշակ Ալպոյաճյանը մեր մշակույթի արդունաշատ և մեծավաստակ մշակներից մեկն է, որպես ներհուն բանասեր, հայրենասեր պատմաբան, անձնվեր մանկավարժ և հասարակական անխոնջ գործիչ:

Հարգելի հորեկարը ծնվել է 1879 թվականի հունիսի 17-ին Կոստանդնուպոլսի Սկյուտար թաղում, կեսարացի ծնողներից, և արդեն 60 տարի է, ինչ նա իր հմտությունը, գիտությունը, գրիչն ու հոանդը ի սպաս է դրել հայ բանասիրության, մատենագրության, պատմության ուսումնասիրության դժվարին, բայց շնորհակալ աշխատանքներին:

Հարգելի գիտնականի բեղուն գրչին են պատկանում արտասահմանում տպված ավելի քան 30 արժեքավոր, բովանդակալից և լուրջ ուսումնասիրություններ, ինչպիսիք են՝ «Արքունի Տյուսապ» (Վենետիկ, 1901), «Ընդհանակ օրացույց Ս. Փրկչյան հիվանդանոցի հայոց» (Կոստանդնուպոլիս, 1908—1910), «Բուդաբուստ պատմություն» (Վառնա, 1910), «Գրիգոր Զոհրապ, իր կյանքը և իր գործերը» (Կոստանդնուպոլիս, 1919), Միլաս Զեռագ, իր կյանքը և իր գործերը» (Կահիրե, 1927), «Գրիգոր Կեսարացի պատ-



րիարք և իր ժամանակը» (Երուսաղեմ, 1936), «Պատմություն հայ Կեսարի», Ա և Բ հատոր (Կահիրե, 1937), «Թորգոմ պատրիարք Գուշակյան», (Կահիրե, 1940), «Պատմություն հայ գաղթականության» հռահատոր գործի Ա և Բ հատորները (Կահիրե, 1941—1955), «Հայ եկեղեցվո Սահմանադրության հարցը» (Կահիրե, 1945), «Առաքելություն ի Հաբեշտան ժե դարուն» (Կահիրե, 1946), «Պատմություն հայոց դըպ-

րոցի» եռահատոր գործի Ա հատորը, (Կահիրե, 1947), «Պատմություն Եգիպտոսի» (Կահիրե, 1952), «Պատմական Հայաստանի արտաքին և ներքին սահմանները» (Կահիրե, 1953), ինչպես նաև «Հայոց պատմություն»-ը և այլ արժեքավոր աշխատություններ: Ավելի քան 20 պատմական, ազգագրական, տեղագրական մեծածավալ աշխատություններ, պատմական հարուստ փաստերով հագեցած և մոտ կես դարի գիտական ըրտնաշնչան պրպտումների արդյունք, մնացել են առանց տպագրության, հեղինակի նյութական սուղ պայմանների պատճառով:

Սփյուռքահայ կրթական և բարեգործական կազմակերպությունների և առանձին կրթասեր անձնավորությունների մեկենասությամբ, արդեն իսկ տպագրության են հանձնվել մեծածավալ հոբելյարի «Պատմություն հայ գաղթականության» աշխատության 9 հատորը, «Եգիպտոսահայոց պատմություն»-ը, «Մայրքիտ հայոց պատմություն»-ը, «Կուտինայի պատմություն»-ը:

Մեծանուն գիտնականի բոլոր աշխատությունները, նրա բազմակողմանի զարգացման, մանկավարժական երկարամյա և արդյունավոր գործունեության, գիտական տեսական և քրտնաշնչան ստեղծագործական աշխատանքի արդյունք են: Արդար և Արշակ Արարչյանը Սփյուռքում հարմարագույն մտավորական էր գլուխ բերելու համար նման պատմական, ազգագրական և տեղագրական կարևոր աշխատություններ: Հարգելի հոբելյարի աշխատությունները խղճամիտ ուսումնասիրություններ են, գրված հայ ժողովրդի դարավոր մշակույթի և կյանքի մասին: Նա հայրենասեր պատմիչ է և հաճախ վշտով է գրում հատկապես հայ գաղթականությունների պատմությունները:

Մեծավաստակ գիտնականի պատմական, տեղագրական և ազգագրական աշխատությունները գիտական լուրջ ավանդ են հայ մշակույթի պատմության ուսումնասիրության բնագավառում և արժեքավոր ավանդ հայագիտության մեջ:

Հարգելի հոբելյարը ունեցել է նաև հասարակական բեղուն գործունեություն Կոստանդնուպոլսում՝ որպես Պատրիարքարանի քարտուղար, պատվիրակ և Ազգային ժողովի


ատենապետ, ինչպես նաև Հունաստանում և Եգիպտոսում:


Հոբելյարը տարիներ շարունակ Սփյուռքում, գլուխը խոնարհած իր գիտական աշխատությունների վրա, սրտում ունեցել է մի սրբազան իղձ որպես հայրենասեր պատմաբանի, այն է՝ «չմեռած Հայաստանը անգամ մը տեսնել»,- ինչպես նա գրում է Վեհափառ Հայրապետին ուղղած իր 1958 թվականի մարտ 18 թվակիր նամակում: Այդ իղձը եղել է նրա տարիների երազը: 1958 թվականի հոկտեմբերին երազը իրականություն դարձավ, նա եկավ ուխտի Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք՝ Վեհափառ Հայրապետի հրավերով, և մխիթարված՝ ազգային հպարտության առողջ ու կենսահորդ զգացումներով, վերադարձավ իր աշխատանքի գլուխը, իրեն հատուկ հոգեկան կորուվով, առույգությամբ՝ շարունակելու իր գիտական աշխատանքները, իր պատմական, բանասիրական, ազգագրական ուսումնասիրությունները:

Մեր հարգելի հոբելյարը իր գիտակցական ողջ կյանքը նվիրել է հայ մշակույթի և հայոց պատմության ուսումնասիրության նվիրական գործին, և այսօր, իր կյանքի 80-ամյակի շնմբին, նա լիովին արժանի է հայրագիտական բարձր գնահատության՝ որպես Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանակիր, և համազգային այն մեծարանքին, որ հայ ժողովրդի երախտագետ զավակները, հոբելյարի գրչի և աշխատանքի ընկերներն ու բարեկամները, թե՛ Սփյուռքում և թե՛ Մայր Հայրենիքում, ցույց են տալիս դեպի մեծավաստակ հոբելյարը, հայրենասեր պատմաբանը, բազմահմուտ բանասերը, անձնվեր մանկավարժը և հասարակական անխուշ գործիչը:

Հանուն Վեհափառ Հայրապետի՝ «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է մեծավաստակ պատմաբան, անվանի հայագետ Ա. Արարչյանի ծննդյան 80 և գիտական-մանկավարժական գործունեության 60-ամյակը և արտագին բարեմաղթում հոբելյարին քաջառողջություն, երկար կյանք և ստեղծագործական նորանոր հաջողություններ՝ ի փառս հայրենի սրբազան մշակույթի:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ





Ա. ԱԼՊՈՅԱՃՅԱՆ

Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԲՐՈՒՍՍՏԻ ԾՐՋԱՆԻ ՀԱՅՆԵՐԸ*

Գրիգոր Դարանաղցի իր ժամանակագրության մեջ (էջ 528) կվկայե, թե ջելալիներու արշավանքին հետևանք երբ Կոստանդնուպոլիս ապաստանող գաղթականները բռնի իրենց տեղերը դարձնելու փորձ եղավ, 1635-ին, անոնցմե շատեր ապաստանեցան Նիկոմիդիո, Ցալովայի և Նիկիո գյուղերը:

Սակայն միևնույն պատմագիրը կհաստատե, թե 1635-են գեթ տասնյակ մը տարիներ առաջ և թերևս ավելի առաջ ալ արդեն այդ գյուղերը գոյութիւն ունեին և ինքն անձամբ այնտեղերը շրջած էր (էջ 5 և 349): Դարանաղցի կվկայե, թե «յորժամ համատարած պատուհասիւ եկանք յայս աշխարհնիս սա թէ մէկ հոգեւտուն կամ մէկ վանք ու անապատ որ շինեալ էին յեղեր նորաշէն գիւղօրէիցն որ շատ եկեղեցւոյ տերրանք կան յանկողմ ծովուն Նիկոմիտացւոց և Նիկիացւոց ժողովեալ էին զվանականս, կամաւ և յակամայ ուղարկեալ էին ի վանս», (էջ 493—494):

Նույն պատմագիրը այլուր կվկայե, թե ավելի ուշ ժամանակներ ալ գաղութներ եկած են: Այսպես ինքն է, որ կհաստատե, թե ջելալիներու արշավանքին հետո առաջ եկած են «յԱնատոլ ի կողմն Նիկոմիտացւոց և Բիւթանացւոց և Ասիացւոց» (էջ 96):

Եվ որովհետև Դարանաղցի կհաստատե, թե Ցալովայի կողմերը և Զենկիլեր հաստատուած

են դիվրիկցիք (էջ 476), իրավունք ունինք ենթադրելու, թե անոնցմե նաև հաստատուած են թերևս Քարսաք, Կյուրլե, Բելլի (այլ անվամբ Կետելե) գյուղերը, որոնք այդ շրջանակին կպատկանին, թեև խնդրական ըլլա այս ենթադրութիւնը:

Բրուսայի առաջնորդութեան ներքե գտնուող այս հին գաղութներն զատ, որոնք 250—300 տարվան հնութիւն ունին, կան նաև ուրիշ մի քանի վայրեր, որոնք ծնունդ առած են այս հին գաղութներն և բաղդատաբար շատ նոր են:

Այսպես Բենլիեն քիչ հեռու մոտավորապես 100 տարի առաջ կկազմվի վաւրի Բենլի գյուղը, որ Բենլիեն բաժնված քանի մը գյուղացիներու կողմն հիմնված էր և գրեթե մինչև վերջը կամար մայր գաղութին կապված:

Նիկիո նոր-Գյուղը հիմնված էր նույնպես միևնույն դար առաջ՝ 1817 թվականի հունվար 6-ին: Գյուղին հիմնադիրներն էին 4 ընտանիքներ, որոնք գաղթած են Բիւլեջիքի Կյոլ Տաղ գյուղէն:

Իսկ բոլորովին նոր գաղութ մըն էր Կեմլեյիկ, ուր հայ գաղութի մը սկզբնավորութիւնը հազիվ 50 տարվան հնութիւն ունի:

Կեմլեյիկի առևտրական դիրքին պատճառով հոն հաստատված են շրջակա զանազան վայրերի և Մարմարայի քաղաքներէն առևտրական հայեր, որոնք բավական կարևոր թիվի մը հասած էին կամաց-կամաց:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1959 թվականի № 2-ից:

Բրուսա, ուրեմն, կենրկայացնե՞ր վիճակի՞ն հնազույն հայաբնակ վայրը՝ Բելլի, Քարսաֆ. Կյուրլե, Սյուրեգ, Մարմարջըզ, Չեքրան և Ենի-ջե հայաբնակ եղած էին ԺԶ դարուն կեսերին մինչև ԺԷ դարուն կեսերը, իսկ Ենի-Շեքիր, Վադի Բենլի և Կեմալեյիկ՝ ԺԹ դարուն մեջ։

Բրուսայի հայ գաղութը, ինչպես տեսնվեցավ, առանձին գաղութ մը չէ, այլ մեկ հատվածն է Անատոլիոյ հայ գաղութներուն, որոնք թրքաց տիրապետության սկիզբը մեծ թիվ մը չէին ներկայացնե՞ր, միայն քանի մը վաճառաշահ և կարևոր կեդրոններու մեջ հայեր հաստատված ըլլալով։ Հետեաբար երկար ատեն չեն ունեցած հոգևոր կազմակերպություն։

Բրուսայի մեջ գործող եկեղեցականներուն հնազույնը, որ կհիշվի, է Աբրահամ Բախսկոպոս, որ ըստ հիշատակարանի մը, 1440-ին քահանայական ձեռնադրություն կատարած է («Բյուզանդիոն», թիվ 4644) Բրուսայի մեջ, ինչ որ ցույց կուտա, թե այդ թվականին Բրուսա ունեւր իր հայ եկեղեցին և իր համայնք կազմակերպությունը, միայն հայտնի չէ Աբրահամ Բախսկոպոսի հանգամանքը. չէ ըսված, թե առաջնորդ է տեղվույն, ինչ որ անհավանական չէ բոլորովին, քանի որ 1445-ին կհիշվի Հովակիմ Բախսկոպոս¹¹ իբր «Բախսկոպոս Կուտինայի», որ, անշուշտ, իր հովուության շրջանակին մեջ ունեւր Բրուսան, ուր իբր թե ծանոթացած էր Ֆաթիհ Սուլթան Մեհմեդի, որ Կոստանդնուպոլսո գրավումեն ետքը զինքը տեղափոխած էր Կոստանդնու-

պոլիս և անոր «պատրիարք» տիտղոսը տված էր 1461-ին, հունական օրինակին վրա¹²։

Հովակիմ Բախսկոպոս այս կերպով կղաւնա թրքական տիրապետության ենթարկված վայրերու մեջ բնակող հայերու հոգևոր առաջնորդ և քաղաքային ներկայացուցիչ։ Իր սեփական վիճակին մասը կկազմէին հետեաբար Կոստանդնուպոլսոն զատ Բրուսայի, Քյոթահայի և Գարամանի շրջանակները, ինչպես նաև եվրոպական Թուրքիո երկիրները, եթե Ամիրդովլաթի հիշատակարանը, Ֆիլիպի մեջ գրված, Կոստանդնուպոլսո պատրիարք Հովակիմին կպատկանի։ Իրականություն մեջ չափազանց խառնակ է Կոստանդնուպոլսո Պատրիարքության հաստատությունը, որ լուսաբանության կկարողի։

Ինչպես կտեսնվի, Հովակիմ Բախսկոպոս մը 1433-են սկսյալ Կոստանդնուպոլսո մեջ գործած է և 1445-ին՝ Աբրահամ¹³ և Մելիքսեթ¹⁴ երկու Բախսկոպոսներ Բրուսա գտնված են, ինչպես 1459—1460-ին Մարտիրոս Բախսկոպոս. 1450-են մինչև 1459 շրջած է և 1460-ին եկած է Բրուսա և, ինչպես կերևի¹⁵, 1460-ին Կոստանդնուպոլսո Բախսկոպոս ալ եղած է. 1461-ին է, որ ուրիշ Հովակիմ Բախսկոպոս մը, տարբեր 1433—1439-ի Հովակիմեն, Կոստանդնուպոլսո պաշտոնավարող Հովակիմ Բախսկոպոսն է։

Կոստանդնուպոլսո առաջնության շրջանային այս ընդարձակությունը ունենալուն փաստը կնկատվի էջմիածնի դիվաններու մեջ պահված նվիրական իրավասության սահմանները ճշտող հիշատակարանները։ Ասոնց մեջ կտեսնվի, թե դեռ մինչև 1765, Կոստանդնուպոլսո նվիրակությունը իր մեջ կպարունակեր Կոստանդնուպոլսոն զատ Եվրոպական Թուրքիո հայաբնակ քաղաքները, ինչպես Բրուսայի, Նիկոմիդիո, Քյոթահայի, Բիւլեջիկի, Բանդրմա-Բալըքսեբի առաջնորդությունները, այսինքն Փոքր Ասիան ամբողջությամբ, բացի էնկյուրիի, Կեսարիո և Իզմիրի վիճակներեն, որոնք ավելի հին են, քան Կոստանդնուպոլսո Պատրիարքությունը և շատ հին գաղութներ են։

Նույնպես, ապացուցանելու համար, թե Կոստանդնուպոլսո առաջնորդությունը մինչև ԺԷ դարուն կեսերը ունեւր ընդարձակությունը, որ կենթադրվի, կա ավելի շոշափելի ապացույց մը՝ նշանավոր տպագրիչ Ոսկան Բախսկոպոս Երևանցիի (+1674) կազմած

11 Հովակիմ Բախսկոպոս Բերայի և ոչ Բերայի, իբր «արհի Բախսկոպոս Կոստանդնուպոլսի» հիշված է 1439-են սկսյալ, իսկ թե Բերայի և Կուտինա-Բրուսայի Հովակիմ Բախսկոպոսները միեւնոյն անձն են Պոլսո առաջին պատրիարքին հետ՝ տարակուսելի կթվի, վասնզի 1438-են մինչև 1478, առնվազն քառասուն (40) տարվան իբր Բախսկոպոս գործունեություն մը ունեցած ըլլա, որ կրնա կասկածելի համարվի։ Նույնպես Կոստանդնուպոլսո Պատրիարքության կոչված Հովակիմ Բախսկոպոսը, եթե երկուք են Հովակիմ Բախսկոպոսները, ո՞րն է։

Եվ իբր Ֆիլիպի Բախսկոպոս 1469-ին հիշված Հովակիմ Բախսկոպոսը առանց պատրիարք տիտղոսին նույնն է արդյոք Կոստանդնուպոլսո պատրիարքին հետ, որուն պաշտոնավարությունը մինչև 1478 երկարած ցույց կտրվի։

Եթե 1438-ին հիշված Կոստանդնուպոլսո Հովակիմ Բախսկոպոսը ինքն է 1461-ին ընտրված պատրիարքը, 1459-ին պետք չէր որ ռէր Մարտիրոսին Կոստանդնուպոլսո վիճակին հայրապետ մը գոյություն ունեցած ըլլար, ինչ որ կհիշատակէ Ամիրդովլաթ Յոզուր ժոշկուքանան գործին մեջ։

Այս բոլորը լուծման կարող խնդիրներ են։

12 Այս պատմությունը, զոր միայն Զամյան ունի, ոչ մեկ հայ կամ օտար աղբյուրի հաստատված է և վաղերականությունը կարելի է կասկածի տակ ձգել։

13 Տե՛ս «Բյուզանդիոն», թիվ 4644։

14 Լ. Ս. Նաչիկյան, «ԺԺ դարի հայերեն գիտագրերի հիշատակարաններ», հատ. Ա, էջ 591։

15 Նույն տեղում, էջ 646։

լատիններեն ցուցակը, որուն մեջ ցույց կուտա հայ վիճակներուն բաժանումները:

Այս ցուցակը Փոքր Ասիո վիճակներին էջ-միածին կապված ցույց կուտա միայն երկու արքեպիսկոպոսություն, որոնք են Կեսարիա և Նիզիդիա, իսկ Կիլիկիո կաթողիկոսության կապված կհամարեն մեկ արքեպիսկոպոսություն, որ է Կոստանդնուպոլիս, որուն համար կրես, թե ԺԳ դարուն հիմնված է և պատրիարքական իրավունք կապահանջ, երեք եպիսկոպոսություն, որոնք են Տրապիզոն, Նեոկեսարիա և Անկյուրիա, որոնք ամենքն ալ ԺԳ դարուն հիմնված ցույց կուտա Ոսկան եպիսկոպոս երևանցի:

Այս բաժանումները ցույց կուտան, թե Ժէ դարին առաջ Արևմտյան Փոքր Ասիո մեջ միայն երկու եկեղեցական վիճակ կար հաստատուն առաջնորդով և անոնք էին Էնկյուրի և Կոստանդնուպոլիս, և Բրուսա, Քյոթհահա, Բիլեջիք, Բանդրմա-Բալքեսներ, Նիկոմիդիա առանձին առաջնորդություններ չէին, ինչպես առաջնորդություններ չէին Էդիրնե և Ռոդոս-տո՝ Ռումելիի կողմը:

Կոստանդնուպոլսո պատրիարք-առաջնորդին իրավասության ենթարկված այս բնորոշակ վիճակը, որուն միայն շատ քիչ քաղաքներուն մեջ սակավաթիվ հայեր կրնակին մինչև Ժէ դարուն սկիզբները, հետո հետզհետե ստորաբաժանված է և նոր առաջնորդություններ կազմված են:

Ասոր պատճառը սա էր, որ Ժէ դարուն սկիզբը մայրաքաղաք և անոր շուրջը խուժող գաղթականներ, որոնք զանազան տեղերի կուգային, շատ անգամ իրարու անհաշտ ու հակառակորդ, կստվարացնեին հայոց թիվը այս շրջանակին մեջ: Այդ գաղութները շատ անգամ իրենց հետ ունեին իրենց սկզբնական հայրենիքին հոգևոր հովիվները, կամ զիրենք հովիվուն համար նոր կուգային եկեղեցականներ:

Այսպես, քեմախցիներու հետ եկած էր Գրիգոր Դարանաղցի, — վկա իր «Ժամանակագրութիւն»-ը, — և խարբերողներու հետ եկած էր Արիստակես Խարբերողի՝ ինչպես իրեն համար գրվածներին կհասկցվի:

Անատոլուն եկած այս գաղթականները տեղացիներու հետ խնդիրներ ունեցան և կուսակցական վիճերը արծարծելու նպատակներ: Մասնավորապես այն ատենները Պատրիարքական Աթոռին շուրջը մի քանի եկեղեցականներու կողմից մղված պայքարին մեջ ո՞նք կատարեցին և այս ու այն կողմին հաճելի չեղան:

Այսպես՝ Գրիգոր Դարանաղցի ինքը կվկայե, թե Էրզրումի նահանգեն գաղթող հայ ժողովուրդը, Գրիգոր Կեսարացի պատրիարքին կողմից հալածված ըլլալուն համար, հակառակ

իր կամքին, գաղթականներին ազդեցիկ անձեր պետության դիմում ըրած էին և 1607-ին ստացած էին սուլթան Ահմեդեն իր անձին համար հրովարտակ մը՝ Էրզրումի նահանգեն գաղթող հայ ժողովուրդը, որ փառախաղա կկոչե ինքը, հովիվելու համար:

Այս վիճակը կտես երկու տարի, և 1609-ին Գրիգոր Դարանաղցի Ռոդոստոյի նորահաստ գաղութը, որ մեծ մասամբ իր երկրացիներին կրաղկանար, հովիվ կոչվելով, այս իրավունքին կզրկվի և ներքին երկպառակությունը կվերնա: Միայն ասով անուղղակի կերպով սկիզբ կառնե Ռոդոստոյի առաջնորդությունը:

1612-ին Պատրիարքական Աթոռին շուրջ մղված կռիվներուն հետևանքը զորավոր մըր-ցակցի մը՝ Գր. Կեսարացիին գեմ երեք ուրիշներ կմիանան և Կոստանդնուպոլսո Պատրիարքությունը երեքի կբաժնեն:

Ա) Զաքարիա Վանեցի կպահի Պատրիարքությունը իր բնական սահմանով:

Բ) Գրիգոր վարդապետ Դարանաղցի կըստանան հովիվությունը Ռոդոստոյի, Նիկոմիդիո և Բրուսայի կողմի գաղութներուն:

Գ) Հովհաննես Խուլ կառնե Ռումելիի բացի Ռոդոստոյին:

1613-ին այս երեքմասնյա Պատրիարքությունը կվերակազմվի սա կերպով.

Ա) Հովհաննես Խուլ, որ Կոստանդնուպոլսեցի էր, կառնե Կոստանդնուպոլիսը, Սերաստիային սկսյալ մինչև Կաֆա և Քյոթհահա:

Բ) Զաքարիա Վանեցի կհաստատվի Սկյուտար, իրեն ենթակա ունենալով Ասիո կողմի գաղթականները:

Գ) Գրիգոր Դարանաղցի կհաստատվի Ղալաթիա, իր հովիվության տակ ունենալով Ռումելիի գաղթականները:

Այս դրությունը, որ Պատրիարքությունը կբաժնե երեք մասի, առաջին սկզբնավորությունը կըլլա պատրիարքական վիճակին բաժանման, որ այս երեք իրարու համախոհ անձերու պարտության մատնվելին և իրենց հակառակորդին նորեն Պատրիարքությունը գրավելին ետքն ալ պահված է:

1615-ին Կեսարացի վերստին պատրիարք դառնալին հոք, Զաքարիա Վանեցի կմնա Սկյուտար և Ասիո կողմի գաղութները իր հովիվության տակ կպահի, ինչպես Սկյուտարի Ս. Կարապետ եկեղեցիին շինությունը, 1617-ին Զաքարիայի ձեռամբ և Նիկոմիդիո մեջ մինչև տեղահանություն պահված Ճաշոցի մը մեջ գրված 1618 փետրվար 26-ին, Զաքարիայի տրված «վերատեսչություն» տիտղոսը բավական են ապացուցելու, թե Վանեցի կպահի այդ իրավունքը:

Նույնպես Դարանաղցի 1616—1619-ին ծրուսադեմ և ալլուր շրջելն հետո կղառնա մոդոստո և յոթը տարի անընդհատ կհովվե ալդ կողմերու գաղթականները, պարբերաբար այցելելով նաև Նիկոմիդիո, Նիկիո և Բրուսայի կողմերը, ուր գլուղներ հիմնած էին Հայաստանի զանազան վայրերեն եկած հայեր:

Ասով նախկին կարգադրությունը կպահվի ոչ պաշտոնապես: 1628-ին երբ Գրիգոր Կեսարացի անգամ մըն ալ կվանվի Աթոռեն, Հովհաննես Խոյ կղառնա պատրիարք, դարձալ երեքմասնյա Պատրիարքությունը կվերափոխատարվի և Զաքարիա Վանեցի, որ դեռ Սկյուտար կմնար, այս անգամ բացի մոդոստոյեն, Եվրոպական Թուրքիո հայերը հովվելու պաշտոն կստանա, իսկ Գրիգոր Դարանաղցի մոդոստոյի և Ասիո կողմի գաղութներու հովվություն կկոչվի, առանց սակայն գործի խառնվելու, ինչպես կըսեն ինքը՝ «և մեք յոչինչ չէաք խառնել յառն և ի տուր պատրիարքական մտիցն, բայց միայն ի վարդապետական իշխանութենէն և այսր և անոր շրջելով և քարոզութեամբ պարապելով»:

Բոլոր ասոնք ցույց կուտան, թե մինչև ժն դարուն առաջին քառորդին վերջերը դեռ Բրուսա, Նիկոմիդիա և էդրեն Կոստանդնուպոլսո Պատրիարքութենեն անշատ առաջնորդություններ չէին կազմեր և ուղղակի անոր իրավասության ենթարկված էին:

1612-են հետո երեքմասնյա Պատրիարքության այս դրությունը պատճառ եղավ Կոստանդնուպոլսո Պատրիարքության ստորադաս նոր հոգևոր հովվությանց կազմակերպության դեպի ժն դարուն կեսերը: Եթե Բրուսա ավելի կանոնի առաջնորդություն կազմած ըլլար, Սիմեոն դպիր Լեհացի, որ 1609-ին Բրուսա այցելած է («Ուղեգրութիւն», էջ 34—35) պիտի հիշեր անոր եպիսկոպոսին անունը: Ան կգրե, թե «Կայսր անդ երեք հարիւր տուն հայի և փայտէ ժամատնակ մի և հինգ երէց» (էջ 34), բայց չի հիշեր եպիսկոպոսի մը գոյությունը, որ ապահովաբար պիտի հիշեր եթե գտնվեր:

Այնպես որ բացարձակապես վստահորեն կրնանք ըսել, թե մինչև ժն դարուն առաջին կեսին վերջերը Բրուսա առանձին առաջնորդություն մը չէր:

Այս տեսութեամբ ոմանց կողմն Բրուսայի իբրև առաջնորդ համարված մի քանի եկեղեցականները, ինչպես 1617-ին գրված Ճաշոցի մը հիշատակարանին մեջ իբրև նորոգող Ս. Աստվածածին եկեղեցիական և այդ Ճաշոցին՝ հիշատակված Աթանաս եպիսկոպոսը, Պատրիարքութենեն անկումեն հետո 1623-ին Բրուսա տարագրված և մեկուսացած ըլլալը հիշատակված Հովհաննես Խոյ պատրիարքը և Պալատի եկեղեցիական շինության

առթիվ 1629-ին Կոստանդնուպոլսո հրավիրված Արիստակես վարդապետ Խարբերդցին¹⁶ Բրուսայի առաջնորդներ չեն, ալ հյուր եկեղեցականներ, որոնք որևէ պաշտոնական հանգամանք չեն ունեցած:

Բրուսայի հայոց առաջնորդությունը սկսած է հավանորեն 1640-ական թվականներուն կամ ավելի 1660-ական թվականներուն:

1640—1649-ին իբր առաջնորդ ցույց կուտան Մինաս եպիսկոպոս, որուն օրով Բրուսա կայցելե Կիրակոս Երևանցի պատրիարք (1641), որ թերևս ինքը կհաստատե այս եպիսկոպոսը իբր առաջնորդ Բրուսայի:

1652-ին Բրուսա կայցելե Փիլոպոս Աղբակեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսը, և այդ թվականեն հետո Բրուսա պարբերաբար կայցելեն Եղիազար Այնթապցի և Մարտիրոս Քենֆեցի, որոնք իբր հակաթոռ կաթողիկոս և Կոստանդնուպոլսո և Երուսաղեմի Պատրիարքությանց մրցորդներ, հաճախակի երթևեկ ունեցած են այս շրջաններուն մեջ:

Եղիազար Այնթապցի Բրուսայի մեջ թողած է գեղեցիկ անուն մը, իր աշխատությանց համար, ինչպես Ս. Աստվածածին եկեղեցիո նորոգությունը, որոնք մինչև վերջ օրհնությամբ հիշված են բրուսացիներու կողմն:

Եվ երբ Եղիազար Այնթապցի 1664-ին Թուրքիո Հայոց Կաթողիկոսություն մը ստեղծելու փորձ կընե, իր առաջին գործերեն մեկը կըլլա իր աշակերտներեն մին՝ Սուքիաս եպիսկոպոս Եվդոկիացիի առաջնորդ ղրկել Բրուսայի (1664):

¹⁶ Այս հավանորեն այն կողմերը եկած է Խարբերդի կողմերեն եկող հայերը հովվելու Դարանաղցի առանց որոշելու կըսեն, թե Բալաթի եկեղեցիին շինության ավարտումեն հետո «գեղացի կողմն Բիթանիոյ», իսկ էջմիածնի մեջ պահված Ակնցի Հակոբի հիշատակարանը ավելի բացորոշ կերպով կհաստատեն, թե Արիստակես վարդապետ որևէ մնայուն պաշտոն չունեց Բրուսա, վասնզի «մերայինքն... լսեալ ղեկարբերդցի Արիստակես վարդապետեն, թէ ի Բրուսայ է, և առաքեցին առ նա արս ոմանս՝ զի եկեալ օգնական լիցի գործոյն, քանզի և նա յառաջ (անշուշտ Պոլսո եղած ատեն) ուխտ արարեալ էր ընդ մեզ, թէ յորժամ առաջումն լիցի բանիդ, ազգադարէք ինձ, զի եկեալ և ես օգնեցիք ձեզ տրօք քրիստոնէից», և սոքա փոյթ ընդ փոյթ, ազդ արարին: Ուրիշ ժամանակակից մը՝ Առաքել Դավրիթեցի ալ Նիկիո Թրոսոպոլի Գրիգոր Կեսարացիին ներում խնդրելու մտադրությամբ Բրուսա գալը կհիշե, «յաւուրն յայնորիկ անդ էր և Խարբերդցի Արիստակես վարդապետն: Բացատրելու այս ձեռ ցույց կուտա, թե անիկա մնայուն հանգամանք ու պաշտոն չունեց Բրուսայի մեջ, ալ պատահորեն այն օրերը հոն կգտնվեր Առաջնորդի մը համար, որ մնայուն է, այլ ձեռով պիտի չգրեք պատմագիրը:

եղիազար անոր պաշտոնավարության ատեն մի քանի անգամ Բրուսա կայցելե և կիսրախուսե զայն, նույնիսկ պահ մը (1668—1671) չորս տարի անընդհատ հոն կմնա անգրադ հանգստանալու համար:

Սուբիաս եպիսկոպոս, որմե կսկսի իրապես Բրուսայի առաջնորդությունը, մեռած է Բրուսա, և ինչպես իր տապանադրեն կհասկըցվի՝ պաշտոնավարած է 45 տարի (1664—1709)¹⁷, իրմե հետո անընդհատաբար պաշտոնավարած են իբր առաջնորդ հետեյայնները.

1709—1718 հաշատուր եպիսկոպոս
1718—1727+Անտոն եպիսկոպոս Բրուսացի
1727—1741+Ներսես եպիսկոպոս Կոստանդնուպոլսեցի

1749— Հարություն եպիսկոպոս
1749— Հակոբ Նալյան եպիսկոպոս Զմմարացի

1749—1751+Գաբրիել ծայր. վրդ. «Գործապետ»

1752—1756+Գևորգ եպիսկոպոս Ղափանցի
1756—1772 Սամվել եպիսկոպոս Երզնկացի
1773—1776 Հարություն եպիսկոպոս Բասենցի

1778—1780 Սամվել եպիսկոպոս Երզնկացի (կրկին)

1780—1781 Հովհաննես եպիսկոպոս Համադանցի

1781—1782 Զաքարիա եպիսկոպոս Կաղզըրվանցի

1782—1786 Հարություն եպիսկոպոս Կեսարացի

1787—1810 Պողոս արքեպիսկոպոս Ղարախոզ

1810—1811 Կարապետ եպիսկոպոս Եվդոկիացի

1812—1825 Պողոս արքեպիսկոպոս Ղարախոզ (կրկին)

1825—1829 Պետրոս եպիսկոպոս Եփեսոսյան Բրուսացի

1829—1830 Հովակիմ վարդապետ

1830—1834 Հարություն վարդապետ Գապենճանյան Եղեսպցի

1835—1841 Մատթեոս եպիսկոպոս Զուխաճյան Կոստանդնուպոլսեցի (հետո կաթողիկոս)

1841— Եփրեմ վարդապետ Հավլուճյան, Բրուսացի (փոխ.)

1843—1844 Հարություն եպիսկոպոս Գապենճանյան, Եղեսպցի (կրկին)

1844—1867 Գևորգ եպիսկոպոս Քերեստեճյան Կոստանդնուպոլսեցի (հետո կաթողիկոս)

1867—1895 Բարթողիմեոս արքեպիսկոպոս Զամիշյան Կոստանդնուպոլսեցի

1896—1911 Հովհաննես արքեպիսկոպոս Արշարունի Կոստանդնուպոլսեցի

1911—1915 Սահակ վարդապետ Օտապաշյան Սեբաստացի

1915—1916 Պարգև ծայրագույն վարդապետ Դանիելյան Կոստանդնուպոլսեցի

1916—1919 Դիոնիս քահանա Տրեզյան, Պարտիզակցի

1918—1922 Սարգիս վարդապետ (եպիսկոպոս) Տեր-Սարգիսյան

Բրուսայի առաջնորդության վիճակները մինչև 1867—1868 թվականները միայն երեք էին՝ Բրուսա քաղաքը և Յենիճե ու Զերրահ գյուղերը, որոնց առաջնորդարանները «վանք» կկոչեին սովորաբար տեղացիները, որովհետև, ինչպես կերևա Դարանաղցի պատմութենեն, գաղութներու մեջ մասնավոր ջանք մը եղած է վանքեր ստեղծելու, սակայն բացի Արմաշի վանքեն, որ ժէ դարուն սկիզբները շինված էր (1611—1612 թվականներուն) ոչ մեկը կրցած է իսկապես հոգևոր կեդրոն մը դառնալ: Արմաշը իբր վանք, կերպով մը կեդրոն դառնալով ժէ դարուն Արևմտյան Փոքր Ասիա խուժող գաղթականներուն, իր վանահայրերը շարունակ կհովանեին այս շրջանին գաղթականները, որով կամաց-կամաց Արմաշ դարձավ կեդրոն նիկոմիդիո, Ադարազարի, Կելվեի, Բազարի, Սյուլյոզի, Կյուրլիի և իրենց շրջակա մանր գյուղերուն, ինչպես նաև Բանդրմայի, Բալըքեսերի, Քըրմաթիի և Բիզայի հայ բնակչության:

Ասոնց հոգևոր մատակարարությունը կկատարեին ապահովաբար Արմաշի միաբանները, որոնք կհրահրեին ժողովուրդին ոչ միայն բարեպաշտական զգացումները, այլ նաև պտղի ու ժամուց կհավաքեին:

Այս հարաբերություններուն բերմամբ Արմաշ դարձավ կերպով մը հոգևոր կեդրոն մը, որուն կապված էին նաև Բրուսա, Ենիքե և Զերրահ:

1664-ին եղիազար Այնթապցի երբ առաջնորդ մը ձեռնադրեց Բրուսայի, Ենիքեի և Զերրահի միասին, անշատ առաջնորդություն մը դարձան, և այս կերպով այդ միութենեն անջատվեցան:

Արմաշ ալ տակավին մինչև 1780 շարունակ կելով պահել իր գոյությունը իբր սոսկ վանական կազմակերպություն, այդ թվակա նին կդառնա նաև կեդրոն առաջնորդության մը, որմե կբաժնվին Բանդրմա, Բալըքեսեր, Քըրմասթը հեռավոր վայրերը, կազմելով անջատ առաջնորդություն մը:

¹⁷ Մաղաթիա արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատմ», հատ. Բ, էջ 2746:

Բրուսայի առաջնորդությունը այսպես սկիզբը ուներ միայն երեք թեմ: Անգամ մը միայն առաջնորդին անձին վրա միացած է դրացի վիճակի մը առաջնորդությունը ևս, այսինքն Պողոս եպիսկոպոս Ղարախոզ երբ կրկին անգամ առաջնորդ եղած է (1812—1825), Արմաշի և Բրուսայի առաջնորդությունները միևնույն ատեն վարած է, սակայն հետո կրկին բաժնված են:

Անցյալ դարու մեջ երբ Կեմլեյիկի մեջ հայոց թիվը կաճի և եկեղեցի մը կունենա, քաղաքականապես Բրուսայի կուսակալության կապված այս թեմը կկապվի Բրուսայի:

1867-ին Բարթոլոմեոս եպիսկոպոս Ջամիլյանի Բրուսայի առաջնորդ դառնալի հետո է, որ Բաղարու շրջանին պատկանող կարգ մը գյուղեր, ինչպես Բենլի, Քարսաք և Կյուրլի, ինչպես նաև Սյուլոզ, Մարմարջըզ, Յենի-շեհիր, Նիկիա, իրենց ցանկության համեմատ, կանչատվին Նիկոմիդիո վիճակեն և

կկցվին Բրուսայի առաջնորդության, որուն կապտկանին քաղաքականապես: Սակայն միևնույն պայմաններու մեջ գտնվող Բաղարի շրջանին Մեծ Նոր-գյուղը, Ջենկիլեր, Օրթաքոյ և Քերեմեթ գյուղերը կմնան Նիկոմիդիո վիճակին ենթակա, թեև Պատրիարքարանը շատ անգամներ փորձած է այս երեք գյուղերն ալ Բրուսայի վիճակին կցել, վարչական դյուրության համար, սակայն չէ հաջողած, վասնզի գյուղացիք հնօրյա ավանդության համաձայն միշտ Նիկոմիդիո առաջնորդարանը իրենց հոգևոր կեդրոն ճանչնալ ուզած են:

Բրուսայի վիճակին մաս կկազմեր երբեմն վարչականապես Քյոթահիայի սանջակին ենթակա Յալլա գյուղը, որ Բրուսայի և շրջակայից բնակչության կազմված ըլլալուն Բրուսայի կապված էր, սակայն հետո Քյոթահիայի առաջնորդության ձգվեցավ, տրամաբանական կարգադրությամբ մը:





ԹԻՉԱՐՏ ԲՈՒՐՏՈՆ, ԶՈՆ ԴՈՆԱՏ, ՊՈԼԿՈՐԱԼԵԿ

Ն Ղ Թ Ն Մ Ն Ր

Հայաստանի Բրիտանյա քաղաքագրությունը, որը գտնվում էր Արևելքի և Արևմուտքի առևտրական և ռազմական ճանապարհների միջև, ստեղծել է մի շարք հուշարձաններ, որոնք շատ-ազդված են հարևան մշակույթներից և որոնք սակայն կրում են հայկական ինքնատիպության խորունկ դրոշմը: Այդ հուշարձանների բնօրոշ հատկանիշները առաջին անգամ հայտնաբերված են Ժողեֆ Ստրիգովսկու կողմից 1908 թվականին *Baukunst in Arminian und Europa* աշխատության մեջ, բայց այդ հուշարձանները քննադատվել են մնում են չզնադատված: շատ էջերն են տեսել դրանք և հազվադեպ են լավ լուսանկարված: Այս հոդվածում այդ հուշարձաններից ամենագեղեցիկներից մեկը՝ Աղբամարի Եկեղեցին վաճառվում է, որ միայն լուսանկարված է, այլ նաև առաջին անգամը լինելով իրեն արժանի լուսանկարահանումների է ներառվել, ինչպես կարելի է տեսնել հարավ-արևմտյան անկյունից առնված տեսարանից, իր ճարտարապետական հստակ գծերով, որոնք առաջացնում են եզակի նկարագրական և զարդանկարչական հարթաճանաչանքներ:




այլական լեռնաշխարհում, մի կտրատված և ծառազուրկ բնակար շրջապատում է Աղթամար կղզի-վանքը: Մի խոստաշունչ վայր, որտեղ ամռանը սաստիկ շոգ է, իսկ ձմռանը փչում են սառնաշունչ քամիներ: Վանա լճի ափից մեկ մղոն հեռավորության վրա է գտնվում կղզին, որը դուրս է ցցվում որպես այն լեռների մնացորդ մի գագաթը, որոնք գալիս սուզվում են լճի մեռյալ սև ջրերում: Կղզու մի ծայրում լճից ուղղահայաց բարձրանում են օխրային գորշ խարակներ, որոնց գագաթից մի ժայռոտ զառիվայր տանում է դեպի մի փոքրիկ հարթավայր, որի վրա կառուցվել է եկեղեցին: Եկեղեցին կանգնել է վանական մի շենքի ավերակ պատերի և քանդված գերեզմանաբարերի մեջտեղում, որը մարդկային ճիգի և

ճարտարապետության մի համեստ կենտրոնացում է բնաշխարհի ահագնության դիմաց:

Մեզ իբրև ներխուժողներ էինք զգում կղզում, այնքան ուժեղ էր զգացվում անցյալը և խոր՝ անդորրության և առանձնության մթնոլորտը: Այժմ ոչ մի կենդանություն չի մնացել այնտեղ, բացի ազագույն պտղատու և կաղնի ծառերից, տատրակներից և ծովային թռչուններից, որոնք իրենց ճիչերով խզում են լուռությունը, և մի սպիտակ թափառական կատու: Միայն տաճարն է մնացել, որն ալժմ էլ մեզ թվում է նույնքան տպավորիչ, ինչքան իր նոր կառուցված ժամանակ:


Հայաստանը տարածվում էր Արևելքի և Եվրոպայի առևտրական ուղիների միջև, որի հետևանքով թատերարեն է եղել ան-

ԱՂԲԱՄԱՐԻ Ս. ԽԱՉ ԵՎԵՂԵՑԻՆԻ ՀՏՈՒՍԻՍԻ ԱՐԵՎԱՐԱՆՔԻՑ



թիվ պատերազմների և արշավանքների: Հաջորդաբար նվաճվել է Սասանյան թագավորներից և բյուզանդական կայսրներից և գրավվել է սելջուկներից, արաբներից, հույներից և թուրքերից: Հայաստանը հնագույն բրիստոնյա թագավորություններից մեկն էր, ուր բրիստոնեությունը պետական կրոն էր դարձել մեր թվարկության 301 թվականից և հակառակ նրա խռովահույզ պատմության, նրա բրիստոնեական ավանդությունը մնացել է անխորտակ:

Կղզում եկեղեցին և մի պալատ կառուցվել են Ժ դարի սկզբին, վասպուրականի Գագիկ թագավորի համար, որն այն հեռավոր նահանգի տեղական իշխողն էր, նրա կարճատև անկախության ժամանակաշրջանում: Տաճարն ունի խաչաձև հատակագիծ՝ կենտրոնական զմբեթով և քարե կոնաձև տանիքով, և որի հարուստ քանդակները արտասովոր կերպով արտացոլում են Հայաստանի դիրքը, Ասիայի և Միջերկրականի մշակութային միջև: Մի կողմից ապշեցինք տեսնելով Եվրոպայից այսքան հեռու, Ֆրանսիայի և Անգլիայի ողմանական արվեստի ոգուն այնքան մոտիկ մի բան: Մյուս կողմից, տիպականորեն հայկական ոճը այնքան օտարոտի մի բան է արևմտյան Եվրո-



ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՈՒՏՔԻՑ

պայի համար, և քանդակների բազմաթիվ մանրամասնությունները՝ մոնղոլական դեմքեր, ծալապատիկ նստած ֆիգուրաներ և ուրիշներ՝ արևելյան տարազներով՝ մեղ հիշեցնում էին, որ մենք գտնվում ենք Ասիայում և թե բրիստոնեությունը ծնվեց Միջին Արևելքում և տարածվեց դեպի արևելք և արևմուտք:

Աղթամարի մի շարք ալլաբանական թրոշունների և զագանների տարօրինակ քանդակները ուժեղ կերպով հիշեցնում են դրադաշտականության սիմվոլիզմը, հատկապես առուծի և ցուլի կոիլը, որ ճշգրիտ մեկ նմանակն է Պերսեպոլիսի Աքեմենյան պալատի մի քանդակի: Հավանական է, որ այս նախաբրիստոնեական խորհրդանիշները ներմուծվել են Սասանյանների կողմից, երբ նրանք Ե դարում նվաճեցին Հայաստանը:

Հետագայում ԺԲ դարում Սելջուկյան արշավանքը ուժեղ ազդեցություն ունեցավ հայկական արվեստի վրա: Աղթամարի մի շարք գերեզմանաբարիքի քանդակները հրատակորեն այդ են ցույց տալիս: Նրանց դուտերկրաչափական զարդաքանդակները, որոնք բոլորովին տարբերվում են տաճարի քանդակներից, բնորոշ են Սելջուկյան շրջանի իսլամական ճարտարապետության:

Եկեղեցու քառաթև հատակագիծը առաջ է բերում անկանոն պարագիծ և մակերեսներ և քարային խունացած, դարձնագույն հողի



ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՐԱՎԻՑ



ԱՂԹԱՄԱՐԻ ՏԻՐԱՄԱՅՐԸ


գույնի պարզ պատեր, որոնք բարձրանում են մինչև շորս երկթեք ճակատները, և պսակվում 16-անիստ թմբուկով և կոնաձև քարի տանիքով: Ներսի տարածությունը նեղ է և վերասլաց, ուր զմբեթները, կիսագմբեթները և կամարները առաջացնում են նրբորեն դաշնավորված ծավալներ: Սպիտակ պատերը ծածկված են դժգունող որմանկարներով, որոնք ներկայացնում են Քրիստոսի կյանքից տեսարաններ և տասերկու առաքյալների ու սուրբերի նկարներ:

Նկեղեցու ամենաբնորոշ հատկանիշն է զորեղ քանդակազարդումը, որը հարստացնում է ամբողջ արտաքինը: Ֆիգուրները քանդակված են արտակարգ խորը ռելիեֆով, քանդակազարդման ամբողջ պլանը դուրս է ցցվում պատի մակերեսից: Մի շարք կենդանիների և գլուխների քանդակներ համարձակ կերպով դուրս են պոռթկում պատից և հիշեցնում են գոթական ալյաբանական ջրհորդան արձաններին: Այնուամենայնիվ կոմպոզիցիաները ղեկավարվում են հստակորեն սահմանված մի օրինաչափությամբ, մանրամասնության մեջ ծայրահեղորեն անկանոն են և թվում են պատահականորեն դասավորված:

Ջարդարանքի հորիզոնական գոտեղրվագները եկեղեցին բաժանում են հարթությունների: Ստորին հարթությունը բաղկանում է մի անզարդ շարվածքից, որի հարթ մակերեսը հատկանշականորեն հակադրվում է վերի քանդակների պլաստիկ աշխուժության հետ: Երկու հարթությունները անջատվում են խաղողի որթատունկ ներկայացնող ղեկորատիվ հյուսվածքով, որը շենքի շուրջը կազմում է մի շարունակական գոտեղրվագ:

Երկրորդ տարածությունը բովանդակում է քանդակների մեծ մասը: Դրանք տեսարաններ են գլխավորապես Հին Կտակարանից՝ Ադամը և Եվան, Դավիթը և Գողիաթը, Ս. Գևորգը և Վիշապը, Սամսոնը և փղշտացիները, Արարհամը և Իսահակը, Դանիելը առյուծների հետ, երեք մանուկները հնոցում, ինչպես նաև խորհրդանշական թռչուններ և կենդանիներ հաճախ իրենց զույգերով: Այս տեսարաններից շատերը ներկայացնում են երկու հակադիր ուժեր, որոնք թվում են իրար են առնչվում երկվության և պայքարի գաղափարով: Քանդակների մեջ առանձին ուշադրության են արժանի Քրիստոսի, Աստվածամոր, սուրբերի, հրեշտակների և պատմական այլ դեմքերի նկարները:

Ջարդարանքի հաջորդ գոտեղրվագը ալյաբանության և աշխուժության մի հոսանք է, միմյանց ազդեցված, ուրթմիկ արարեսկներով: Դա որթատունկերի և նռնենիների մի անտառ է, որի մեջ ցույց են տրվում մար-




ԴԱՎԻԹ ԵՎ ԳՈՂԻԱԹ

դիվ և կենդանիներ՝ որսի, խնջուքի, կովի, հունձքի ժամանակ՝ կարծես ներկայացնելու ամբողջ կյանքը երկրի վրա:

Պատերի եռանկյունաձև գլխամասերում կանգնած են ավետարանիչները, գրքերը ձեռքներին և դիտում են տաճարից՝ աշխարհի շուրջ ծագերը: Այստեղ չկա կոնֆլիկտ: Խաղաղասեր կենդանիներ և մարդկային խուլիաներ զարդարում են քիվերը և թմբուկի հարթ մակերեսները, վեր են ցցվում մասսիվ ծավալների և քանդակների հարթ հարաբերակցությունից և ավարտվում կոնաձև գրմբեթով:

Տաճարը իսկապես մի պարզ ու անմիջական հորինվածք լինելով, քանդակների և կառուցվածքի փոխհարաբերությունը հանդես է գալիս ակնբախ կերպով: Այս քանդակները պետք է դիտել երկու տարբեր ծավալներով. մանրամասնությունից մեջ քանդակները անկանոն և հաճախ անսովոր կոմպոզիցիայով դասավորված, ինքնին ամբողջական պատկերներ են: Ավելի լայն մասշտաբով բոլոր այս կոմպոզիցիաները, երբ դրանք ուսումնասիրվում են իրենց մանրամասնությունից մեջ՝ հստակորեն ենթակա են ձևի գաղափարին կամ շենքի ճարտարապետական կազմակերպվածության և ծառայում են այն շեշտելու: Մեկ ծավալի մյուսի հետ այս հարաբերության մեջ է դրսևորվում նրանց նշանակությունը՝ որպես ճարտարապետական զարդարանքի:

Մենք զգացինք, որ զարդաքանդակների և ճարտարապետական ձևի միջև եղած մեծ ներդաշնակությունը ղուգահեռական է ամբողջ շենքի հիմնական գաղափարի նշանակության հետ, և, ինչպես որ քանդակները մանրամասնում և հարստացնում են շենքի մակերեսը, այնպես էլ ընդլայնում և խո-




ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՄԻ ՄԱՍԸ

րացնում են ներքնապես հիմնական գաղափարի նշանակությունը:

Քանդակների շնորհիվ մենք մոտիկից ծանոթացանք շենքին և է՛լ ավելի լավ ըմբռնեցինք նրա նշանակությունը և նպատակը:

ՂՈՆԴՈՆ, «Ճարտարապետական հանդես», 1958 թ. մարտ)





2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների
բեկնածու, հեռագետ)

ՆՈՐ ԳԵՏԿԱ ՎԱՆՔ ԿԱՄ ԳՈՇԱՎԱՆՔ*

Ե) Ս. Աստվածածին ժամատուն.— Գտնվում է գավթի հյուսիսային կողմում, կառուցել է վանքի առաջնորդ Տ. Մարտիրոսը ԺԳ դարի առաջին քառորդում: Ուղիղ քառանկյունի երկարածիզ հատակագիծ ունեցող մեծ շենք է՝ հյուսիսից հարավ ձգված: Սղել է կրկնահարկ, առաջին հարկի պատերը շարված են դեղնա-կաթնագույն հանքաքարի անմշակ մեծ քարերով, կրաշաղախով: Միակ փոքրիկ մուտքը արևմտյան կողմից է, արևմտյան պատի մեջ բացվում է երեք փոքր լուսամուտ, մեկական նման լուսամուտներ էլ բացվում են հարավային և հյուսիսային պատերից: Վերի հարկը եղել է փայտակերտ, որը կարճ ժամանակից հետո ամբողջապես փլվել է: Այժմ մնում են ստորին հարկի պատերը՝ երկու մետրաչափ բարձրությամբ:

Ինչ նպատակի է ծառայել այդ շենքը, ստույգ հայտնի չէ, ոմանք սեղանատուն են կարծում այն, սակայն, մեր կարծիքով, հավանաբար դա վանքի հոգևոր դպրոցը եղած լինի: Ինչևիցե, նա քաղաքացիական կառուցվածք է, որի պարզ ապացույցը նրա՝ հարավից-հյուսիս ձգված լինելու փաստն է: Վանքերին կից հոգևոր դպրոցների շենքերը սովորաբար, շնչին բացառությամբ, անջատված են լինում եկեղեցական շենքերից և կոչվում են ժամատուն: Այդպես են, օրինակ, Հաղբատի վանքի Համազասպ ժամատունը և ուրիշները:

Զ) Գրատուն.— Գտնվում է Ս. Աստվածածին ժամատան արևելյան կողմում՝ կից: Կառուցել է վանքի առաջնորդ Մարտիրոսը:

ԺԳ դարի կեսերին՝ հյուսն Մխիթարի գործակցությամբ. «Շինեաց և գրատուն մի գեղեցկաշէն յարկօք, արուեստաւոր ունելով զհիւսն Մխիթար, որ ի բազում իրս աշխատեղև եկեղեցեացն և վանիցն»²⁹:

Քառակուսի հատակագիծ ունեցող, փոքրածավալ կառուցվածք է՝ անսյուն դավիթների նմանությամբ: Ներսում, յուրաքանչյուր պատից ձգվող երկուական որմնասյուները միանալով խաչաձև կամարներով, կազմում են թաղապատ ծածկը, կենտրոնում հատուկ լուսանցքով՝ երգիկով: Որմնասյուները շատ մոտ լինելով պատերի ծայրերին, շենքի անկյուններում առաջացել են խորը խորշերի ձևով տարածություններ:

Ներսում, արևելյան, արևմտյան և հյուսիսային պատերի մեջ կան համաչափ դասավորված երեքական խորշեր, հավանաբար գրքեր պահելու համար, ըստ որի կենտրոններում եղած խորշերը համեմատաբար մեծ են: Միակ փոքրիկ մուտքը հարավային կողմից է, որը բացվում է սրահի մեջ: Հարավային, հյուսիսային և արևելյան պատերի մեջ բացվում են երկուական զույգ երկար ու նեղ լուսամուտներ:

Պատերի ստորին մասերը շարված են դեղնա-կաթնագույն հանքաքարի անմշակ մեծ քարերից, կրաշաղախով մածուցված, իսկ պատերի վրայի մասերը, որմնասյուներն ու կամարները՝ սև տուֆի մաքուր տաշված քարերով, կրաշաղախով:

է) Զանգակատուն.— Հիմնված է գրատան վրա՝ երկրորդ հարկի ձևով: Կառուցել են Դասապետ վարդապետը և իր եղբայր Կարա-

* Շարունակված ամսագրի 1959 թվականի № 2-ից:

29 Կիրակոս Դանաևեցի, էջ 209:

պետը 1291 թվականին, Գաբրիել և Միքայել հրեշտակապետների անունով: Դրա կառուցման մասին նրա ներսում, խորանների արևմտյան պատի վրա պահպանվել է կառուցման վերաբերյալ հետևյալ արձանագրությունը. «Կաման ամենակալին Աստուծոյ, ի թվին Հայոց: Ձեռն: Պարոնութեան Իգդիշխալքունին և եղբարց իւրոց Արղութին և թաղադամուրին՝ որոց Քարիմդինին՝ որդոյն մեծին Ումեկին, և այլ որոյն խորութիւն: Մեկ : Բ: Եղբարս Դասապետ վարդապետ և Կարապետ Էդաֆ հիմն ի վերայ և եղև հիման և շինեցա՛վ զանկապետուն և եկեղեցի յանուն սուրբ հրեշտակապետացն Գաբրիէլի և Միխայիլի: սակաւ բնշիւմ մերով և բնոյն մերոյն Իգնատ [ի] ասի, արդեամբ՝ բազմա՛վ վերագրեալ պարոնացն դրա՛վ պարսպ շուրջ եկեղեցոյս և այլ աշխատութիւնքս մերով կարի: Եւ Սարգիս վարդապետ՝ հայր վանիցս և միաբանս հաստատեցին Ձատկին և ճրագալուցին պատարագ որ յեկեղեցիս Դասապետ վարդապետին և Կարապետին սահմանեցին: Արդ, աղաչեմ զամենայն ժառանգաւորսդ յիշման արժանի արեւել զամենայն աշխատեալսն ի սմա, առաւել ջախոսն և գրեթեզոն:»

Այդ արձանագրությունը հետաքրքիր ու արժեքավոր է ոչ միայն նրանով, որ ցույց են տրված հուշարձանի կառուցման ճիշտ ժամանակը, կառուցողներն ու շինությունն օժանդակող անձինք, այլև կարևոր է նրանով, որ այնտեղ որոշակի կերպով ասվում է, որ հիմնադրվում է մի այլ շենքի վրա. «եղաք հիմն ի վերայ [ի] եղյալ հիմանս». բացի դրանից, մատնացույց է անում վանքի պարսպի կառուցումը և, որ նշանակալից է՝ շենքի վրա աշխատողներին, հատկապես Ջաքիոսին և Գրիգորին, որոնք անկասկած շինության վրա աշխատող վարպետներ պետք է լինեն:

Ջանգակատունը կենտրոնագմբեթ ձևի կառուցվածք է, խաչաձև հատակագծով՝ ուղղանկյուն խաչքենքով: Արևելյան խաչքենքում շինված են իրար կից երկու փոքրիկ խորաններ, որոնք արևելյան կողմից ունեն շատ փոքր աբսիդներ: Մյուս խաչքենքը կարճ են՝ խորշերի ձևով: Ծածկը թաղակապ է՝ երկթեք տանիքով, խաչքենքը կամարող աղեղները տանիքի կենտրոնում կազմում են գմբեթի բացվածքը՝ ութակող, եռաշերտ, ներսից պատած ստալակտիտ զարդաքանդակներով, որի վրա բարձրացել է երբեմն սյունազարդ գմբեթը:

Միակ մուտքը արևմտյան կողմից է, որը, ըստ երևույթին պետք է բացված լինի Աստվածածին ժամատան տանիքի վրա, ուր բարձրանում են քարե քառասյուղձան սանդուղքներով: Հարավային և հյուսիսային

պատերի մեջ բացվում են զույգ երկար ու նեղ լուսամուտներ՝ գեղեցիկ շրջանակներով. երեք հատ շատ նեղ ու փոքր լուսամուտներ էլ բացվում են արևելյան պատից:

Շարված է սև տուֆից, սրբատաշ քարերով, կրաշաղախով. սալահատակված է, տանիքը պատած է սալաքարերով: Կանգուն է, որոշ քանդումներով. քանդված է գմբեթը, թափված են տանիքի սալաքարերը և քիվերի մեծագույն մասը. քայքայված են տանիքը և սալահատակը: Նախատեսվում է 1959 թվականին ամբողջովին վերականգնել այդ քանդված մասերը: Ջանգակատունը կառուցելիս որոշ փոփոխության է ենթարկվել գրատան տանիքը, հարմարացնելով զանգակատունը նրա վրա հիմնելու հետ:


Ը) Մրահը՝ նեղ ու երկարավուն, ձգվում է արևելքից արևմուտք գավթի ու գրատան արանքում, միացնելով այդ երկու կառուցվածքներն իրար հետ: Նրա կառուցման մասին պատմական աղբյուրներում և ոչ էլ վիճագրություններում հիշատակություն չկա, ուստի նրա կառուցման ճիշտ ժամանակը որոշ չէ: Անկասկած է, որ այն կառուցվել է գրատանից հետո՝ ԺԳ դարի երկրորդ կեսին:

Գավթի և գրատան պատերին կից ձգվող չորսական որմնասյուները միանալով որմնակամարներով, յուրաքանչյուր պատի վրա առաջացնում են երեքական կամարակապ յայն խորշեր: Թաղակապ ծածկի եզրերը անմիջապես հենվում են որմնակամարների վրա: Շարված է գորշագույն տուֆի սրբատաշ քարերով, կրաշաղախով. տանիքը պատած է եղև սալաքարերով: Քանդված է գավթին կից արևելյան որմնասյունը՝ կից ծածկի ու որմնակամարների հետ միասին, թափված են տանիքի սալաքարերը:

Թ) Առաքելոց մատուռներ. — Գտնվում են Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևելյան կողմում, գավթի հարավային պատին կից: Կառուցել է Մխիթար Գռըր ԺԳ դարի սկզբներին, ինչպես այդ մասին տեղեկացնում են պատմական աղբյուրները:

Երկու իրար կից փոքր մատուռներ են, որոնք իրարից անջատվում են ընդհանուր միջնորմներով: Երկուսի ծածկերն էլ թաղակապ են, արևելյան կողմից ունեն կիսակլոր, փոքրիկ աբսիդներ՝ ցածրիկ բեմերով: Երկու մուտքերն էլ արևմտյան կողմից են, կիսակլոր ճակատաքարերով ու քանդակազարդ պարակալներով: Մեկական փոքրիկ, կամարակապ լուսամուտներ բացվում են արևելյան աբսիդներից: Շարված են վարդագույն հանքաքարի սրբատաշ քարերով, կրկնաշաղախով: Սալահատակված են, տանիքները պատած են սալաքարերով:

Յուրաքանչյուր խորանի տանիքի վրա կանգնեցված է մի-մի խաչքար՝ ամբողջա-



ԳՈՇԱՎԱՆՔ.— Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԻՑ ԱՌԱՋ

կան մեծ քարի պատվանդանների վրա. հարավային խորանի խաչքարն ընկած ու անհայտացած է: Կանգուն մնացած խաչքարը կարմրագույն, ամուր քարից է, շքեղորեն զարդարված բուսական ու երկրաչափական ձևերի քանդակներով, որոնք մշակված են վերին աստիճանի նուրբ ձեռքով: Խաչքարի ձևերի գոյությունը տանիքների վրա վկայում է, որ այդ խորանները ծառայած պետք է լինեն որպես դամբարաններ:

Կանգուն վիճակում են, մասնակի քանդումներով. թափված են հարավային խորանի տանիքի սալաքարերը և արևելյան պատի երեսապատ քարերը. քանդված են հյուսիսային մատուռի սալահատակը, արևմտյան պատի ճակատի մասը՝ մուտքի ճակատաքարի հետ միասին, հարավային պատի ներսի երեսապատը և բեմը: Այդ մատուռ-մահարձանների քանդված մասերի վերականգնումը նույնպես նախատեսված է վանքի 1959 թվականի վերանորոգումների ծրագրի մեջ:

Ժ) Ս. Հռիփսիմե մատուռ.— Գտնվում է Ս. Գրիգոր Եկեղեցու արևելյան կողմում. կանոնի է Մխիթար Գոշը 1208 թվականին:

Սրա կառուցման մասին, բացի մատենագրական տեղեկություններից, պահպանվել է նաև կառուցման վերաբերյալ արձանագրությունը՝ մուտքի ճակատաքարի վրա, որը հետևյալն է. «Սուրբ Հռիփսիմէ. Ի Թլիս ՈՍԷ շինեց [ցախ] զեկեղեցիս Սերոբուս [քա] Ովասաբս Ի ձեռն [սուր վարդապետին] Մխիթարա [յ] Ի բարեխալ [սուրբ] և մեզ և ձեռնդաց մերոց, և ետուն Ա. ար պատարագ Ի տանի Սրբոյն Սարգսի. և քէ ոք խափանէ, դատի յԱստուծոյ»³⁰:

Սովորական ձևով կառուցված փոքրիկ մատուռ է, շարված վարդապետն տուֆի սրբատաշ քարերով, կրաշաղախով: Մուտքը արևմտյան կողմից է, արևելյան կողմից ունի կիսակլոր, փոքր արսիդ: Ավերակ վիճակում է՝ մնում են պատերի ստորին մասերը:

ԺԱ) Ս. Գևորգ Եկեղեցի.— Գտնվում է վանքի հուշարձանների հիմնական խմբից դեպի հարավ-արևմուտք, ձորակի մյուս ափին: Կառուցել են խաչատուր վարդապետը և Բարսեղը 1255 թվականին: Եկեղեցու կառուցման մասին, բացի Կիրակոս Գանձակեցուց վերը մեջ բերված տեղեկությունից, գմբեթի թմբուկի վրա պահպանվել է նաև կառուցման վերաբերյալ հետևյալ արձանագրությունը. «[Ի քվին Հայոց] ՉԳ: Տէր Աստուած ռդուրմեա խաչատուր վար [դապետ] Ին և Բարսեղին՝ շինողաց Եկեղեց [այս] և ամենայն աշխատողացն Ի սմա: Ամէն»:

Ս. Գևորգ Եկեղեցին կենտրոնագմբեթ մի կառուցվածք է, արտաքուստ ուղիղ քառանկյունի, ներսից խաչաձև հատակագծով՝ ուղղանկյուն խաչքերով: Խաչքերի միացման անկյուններից ձգվող կիսասյուները միասնակով կամարներով, իրենց վրա են կրում կլոր ու բարձր թմբուկ և սրածայր վեղար ունեցող գմբեթը: Արևելյան խաչքեր կիսակլոր է, արսիդային, ցածրիկ բեմով, որի երկու կողքերին կա մի-մի խորան. վերջիններս արևելյան ծայրում ունեն կիսակլոր փոքրիկ արսիդներ:

Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ կիսակլոր մեծ ճակատաքարով ու զարդարուն պարակալով: Յուրաքանչյուր պատի մեջ և զբանց համապատասխան թմբուկի շրոս կողմերում բացվում են մեկական երկար ու նեղ լուսամուտ: Նույնաձև երկու շատ փոքր լուսամուտներ էլ բացվում են խորանների արսիդներից: Ներսում, պատերի մեջ նկատվում են տարբեր մեծությունների բազմաթիվ խորշեր՝ դարակների ձևով: Արևելյան պատի մեջ, արտաքուստ, կան երկու եռանկյունաձև, կա-

³⁰ Այդ արձանագրությունը այժմ տեղում չլինելու պատճառով մեջ ենք բերում Բ. Հաբուրյանցից, «Անգագրական հանդես», գիրք Ժ, էջ. 33:

մարակապ գագաթով մեծ խորշեր: Շարվածքը սրբատաշ քարերից է, կրաշաղախով. սալահատակված է, տանիքը պատած է սալաքարերով:

Այդ հուշարձանը գտնվում էր կիսավեր ու խարխուլ վիճակում, 1958 թվականին ամբողջապես վերականգնվել են բոլոր քանդված մասերը, տանիքը և գմբեթի վեղարը պատած են նոր սալաքարերով, ինչպես այդ ցույց են տալիս լուսանկարները:

ԺԲ) Ս. Հովհաննու Կարապետի եկեղեցի.— Գտնվում է Ս. Գևորգ եկեղեցուց քիչ դեպի արևմուտք, սարալանջի փոքրիկ հարթակի վրա: Սա Գոշի կողմից շինված անդրանիկ շենքն է նոր Գետկա վանքում: Ինչպես պատմում է Կիրակոս Գանձակեցին, Գոշը, ձեռնամուխ լինելով նոր Գետկա վանքի կառուցմանը, նախ շինում է մի փայտակերտ եկեղեցի և ապա կառուցում Ս. Հովհաննու Կարապետի եկեղեցին՝ վանքից, այսինքն փայտակերտ եկեղեցուց՝ վերև. «Սկսաւ այնուհետեւ վարդապետն սքանչելի հանդերձ միաբանօք իւրովք ձեռն ի գործ արկանել շինության վանիցն և եկեղեցւոյ ի վերասացեալ ձորն Տանձուտայ՝ հրամանաւ մեծ իշխանին Իւանէի. և շինեցին եկեղեցի մի գեղեցկաշէն փայտակերտ, և օծեալ կնքեցաւ յանուն Սուրբ Լուսաւորչին Գրիգորի... Շինեցին ի նոր Գետիկ ևս փոքրագոյն եկեղեցի մի յանուն Սուրբ Կարապետին Յովհաննու ի գլուխ վանիցն»³¹:

Հետագայում, երբ առիթ կուսենանք խոսելու Գոշի դամբարանի կառուցման և Գոշի թաղման հանգամանքների մասին, ավելի պարզ ու հասկանալի կդառնա, որ տվյալ եկեղեցին, որի մասին խոսում ենք, իրոք Գոշի կողմից նոր Գետկա վանքում կառուցված անդրանիկ շենքն է՝ Հովհաննու Կարապետի անունով:

Եկեղեցին շատ փոքր է, սովորական մատուռի ձևով՝ հատակագիծը ուղիղ քառանկյունի է, ծածկը թաղակապ, արևելյան կողմից ունի կիսակլոր փոքր աբսիդ: Մուտքը արևմտյան կողմից է, որը բացվում է Գոշի դամբարանի մեջ, արևելյան կողմից ունի մի փոքրիկ լուսամուտ: Շարված է եղել սև տուֆ մաքուր տաշված քարերով, կրաշաղախով: Ավերակ վիճակումն էր՝ քանդված էր ծածկը և պատերի վերի մեծ մասը:

Առաջին անգամ վերանորոգել է Երևանի բնակիչ Սմբատ Փարսադանյանը՝ Գոշ գյուղի սահմաններում եղած էջմիածնի վանքի կալվածների կառավարիչ Վախտանգ Փարսադանյանի եղբայրը՝ ԺԹ դարի իննսունական թվականներին: Այդ վերանորոգման ընթացքում պատերի քանդված մասերը լրացված



ԳՈՇԱՎԱՆՔ.— Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԻՑ ՀՆՏՈ

են եղել մանր, անտաշ քարերով, ցեխաշաղախով և պատրաստված է եղել փայտյա ծածկ. այդ վերջինս նույնպես քանդվել է:

1958 թվականին կատարված ընդհանուր վերանորոգումների ժամանակ հին պատերի բոլոր քանդված մասերը վերականգնվել են և կառուցվել թաղակապ նոր ծածկ՝ նույն սև տուֆի սրբատաշ քարերով, կրաշաղախով:

ԺԳ) Քրիստոսի Համբարձման եկեղեցի կամ Գոշի դամբարան.— Գտնվում է Ս. Հովհաննու Կարապետի եկեղեցու արևմտյան կողմում՝ կից: Կառուցել է Գոշը իր կենդանության ժամանակ, ինչպես այդ մասին տեղեկացնում է Գանձակեցին. «... և ի ժամանակի ծերութեան, ի գլուխ վանիցն յաջմէ կողմանէ շինեաց եկեղեցի մի շիրիմ գերեզմանի իւրոյ, կրով և վիմօք մածուցեալ սրբագործ: յանուն համբարձմանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ»³²:

Ապա խոսելով Գոշի մահվան ու թաղման հանգամանքների մասին, Գանձակեցին ավել-

31 Կիրակոս Գանձակեցի, էջ. 199—200:

32 Նույն տեղում, էջ. 205:

լացնում է. «Եւ վերակացու վանացն Մարտիրոս հանդերձ միաբանօքն գեղեցկապէս յարդարեաց զպատշաճս թաղմանն նորա հոգեկան և մարմնական պիտոյիւք. և տարեալ հանգուցին զնա առաջին դրան եկեղեցւոյն փոքրագունի, որ կայ ի գլուխ վանացն յարեմտից կողմանէ»³³:


Գանձակեցու վերը մեջ բերած տեղեկություններէց միանգամայն պարզ է դառնում, որ Գոշի դամբարանը, որ նույն իր կառուցած Քրիստոսի Համբարձման եկեղեցին է, գտնվում է «ի գլուխ վանացն յաջմէ կողմանէ», փոքր եկեղեցու դռան առջևում, որը նույնպէս գտնվում է «ի գլուխ վանացն», որը, ինչպէս ասվեց վերևում, Ս. Հովհաննու Կարապետի նախակառույց եկեղեցին է:

Գոշի դամբարանը, որը Գանձակեցին եկեղեցի է անվանում, գուրկ է եկեղեցու հատկանիշերից, սովորական տապանատուն է: Բայց մյուս դեպքերում էլ նման կառույցները եկեղեցի անունով են կոչվել:

Սա քառակուսի հատակագիծ ունեցող կառուցվածք է եղել, շարված մաքուր տաշված քարերով, կրաշաղախով. ամբողջապէս ավերակ է, մնում են միայն հիմնապատերը: Ներսում պահպանվել են երկու հատ հարթ երեսով մեծ տապանաքարեր, որոնցից հյուսիսայինի վրա փորագրված է «ԱԹԱՆ», իսկ հարավայինի վրա՝ «Գրիգոր քահանայ[յ]»: Ի. Հարությունյանը («Ազգագրական հանդէս», Ժ) «ԱԹԱՆ»-ը կարդացել է «Աղան», իսկ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը («Արցախ», Բաքու, 1895 թ.)՝ «Մխիթար»: Կարող է պատահել, որ Բարխուդարյանի Գոշավանք այցելած ժամանակ գոյութիւն է ունեցել մի երրորդ տապանաքար, որն ունեցել է «Մխիթար» տապանագրութիւնը, որը, սակայն, ներկայումս գոյութիւն չունի: Բայց դա քիչ հավանական է, որովհետեւ դրանից մի քանի տարի առաջ Գոշավանք է այցելել Ի. Հարությունյանը, որը Աթան անունը կարդացել է Աղան, իսկ Մխիթար բոլորովին չի հիշատակում:

ԺԴ) Գերեզմանոցներ և մանրաձանձեռ.— Ամենամեծ գերեզմանոցը տարածվում է Գոշի դամբարանի և Հովհաննու Կարապետի եկեղեցու շուրջը, ուր մինչև այժմ էլ շարունակվում են թաղումները: Հին գերեզմանաքարերը սալաքարերի ձևով են և մեծ մասամբ թաղված են գետնի մեջ, շատերը ծածկված հողով: Ամենուրեք նկատելի են խաչարձան-մահարձանների պատվանդաններ, գեղաքանդակ խաչքարերի բեկորներ՝ բնորոշ ԺԳ—ԺԴ դարերին: Մի խաչարձան կանգուն է, եկեղեցու հարավային պատին կից և ունի ԺԳ դարի տապանագրութիւն:

³³ Կիրակոս Գանձակեցի, էջ 207:



ԳՈՇԱՎԱՆՔ.— ՎԱՐՊԵՏ ՊՈՂՈՍԻ ԽԱՉԱՐԶԱՆԸ

Մյուս գերեզմանոցը, որ համեմատաբար փոքր է, գտնվում է Ս. Գևորգ եկեղեցու շուրջը, ձորակի լանջին. պահպանվել է մի փոքրիկ մասը՝ հարթ երեսով տապանաքարերով և մի քանի խաչարձանների պատվանդաններ: Գերեզմանոցի մեծ մասը ձորալանջի սահելու հետևանքով ամբողջապէս քանդվել ու ոչնչացել է:

Մի քանի գերեզմաններ էլ կան վանքի շուրջը: Այստեղ աչքի են ընկնում խաչարձան-մահարձաններ, որոնցից երկուսը Ս. Գրիգոր եկեղեցու արևմտյան պատի տակ, երկու հատ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևմտյան պատի տակ, որոնցից մեկը փոխադրված է Երեւանի Պատմական թանգարանը, իսկ տեղում մնացածը պատկանում է վարպետ Պողոսին: Հուշարձանների պատերի տակ, ամենուրեք դարձված են գեղաքանդակ խաչքարերի բազմաթիվ բեկորներ. երկու ամբողջական մեծ ու շքեղազարդ խաչքարեր դրված են գավթի հարավային պատի տակ, Առաքելոց մատուռների առջևում, որոնք բերված են եղել այլ տեղից:

Առանձնապես հետաքրքիր ու արժեքավոր են վարպետ Պողոսի և Բարգրոծ Հովհաննեսի խաչարձանները: Առաջինը գտնվում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևմտյան պատին կից՝ մուտքի հյուսիսային կողմում: Կառուցել է վարպետ Պողոսը իր ծնողների, եղբայրների և իր գերեզմանի վրա, 1291 թվականին, ինչպես այդ մասին վկայում է խաչարձանի վրա փորագրված հետևյալ արձանագրությունը. «[Խամաւն Աստուծոյ եւ Պաղոս վարդապետ կանգն] եցի զխաչս ի վերա [յ] շիրմի ծնողաց իմոց [և եղբ]աց և ինձ, թէ Տեւ կամեսցի որ և սոցա ողորմեսցի [Աստուած ք]արեխաւսութեամբ ամենայն սրբոց: Ի Բւ. Չե: Պաղոս»:

Պողոսի այդ մանրամասն բաղկացած է պատվանդանից ու խաչքարից: Պատվանդանը քառաստիճան է, առջևի երեսը զարդարված է գլանաձև որմնասյուների ու որմնակամարների քանդակներով: Շատ հիասթափ ու զմայլելի են մեծ խաչքարի զարդաքանդակները, որոնք բուսական և երկրաչափական ձևեր են և մշակված են վերին աստիճանի նուրբ ձևով: Խաչքարի վրա, բարձրաքանդակ ձևով, ծաղկեհյուս զարդաքանդակներով գրված է նրա քանդակող Պողոս վարպետի անունը:

Հովհաննես Բարգրոծի խաչարձանը գրտնրվում է վանքի հյուսիսային կողմում, ձորանդրին, բարձրադիր վայրում: Այդ խաչարձանը նույնպես բաղկացած է պատվանդանից ու խաչքարից՝ պատած շքեղ զարդաքանդակներով: Խաչքարի վրա եղած արձանագրությունն ասում է, որ քարգործ Հովհաննեսը և իր եղբայրները կանգնեցրին Առաքարի Ս. Գրիգորը: Արձանագրության վերին մասը խիստ վնասված լինելու պատճառով անբնթոնելի է, ուստի արձանագրության ժամանակը պարզ չէ. «Եւ Յովանէս Բարգրոծս և եղբարս կանգնեցաք Սուրբ Գրիգորս Առաքալէ...»:

Ս. Հովհաննու Կարապետի եկեղեցու հարավային պատի տակ կանգնեցրած խաչարձանի պատվանդանի վրա եղած արձանագրության մեջ ասվում է, որ հարազատ եղբայրներ Պողոսն ու Հովհաննեսն են կանգնեցրել այս խաչքարը: Դրանից հավանական է դուռնում, որ վերը հիշատակված վարպետ Պողոսն ու քարգործ Հովհաննեսը եղբայրներ են, ըստ որի Հովհաննեսը եղել է քառասուն-որմնադիր, իսկ Պողոսը քանդակագործ, որոնք միասին կերտել են թվածս հույակապ խաչքար-մահարձանները և մյուս ճարտարապետական կոթողները:

Ի դեպ պետք է նկատել, որ հայկական ճարտարապետության պատմության մեջ, ընդհանրապես շատ սակավ են այն դեպքերը, երբ կառուցվող հուշարձանի վրա արձանագրվում են այն կառուցող վարպետների անունները: Այդ տեսակետից Գոշավանքը առանձնահատուկ տեղ է գրավում: Բացի վերը նշված վարպետ Պողոսից և քարգործ Հովհաննեսից, Գոշավանքի կառուցման վրա մենք հանդիպում ենք նաև ուրիշ վարպետների, Սեբոբին ու Հովասափին՝ Հոփսիմե մատուռի կառուցման արձանագրության մեջ, Զաքիոսին ու Գրիգորին՝ զանգակատան կառուցման արձանագրության մեջ, հյուսն Մխիթարին և իր հոգեորդի Հովհաննեսին՝ գավթի վրա եղած հետևյալ արձանագրության մեջ և ուրիշները. «Եւ Մխիթար հիւսն միայրան և աշխատող այս եկեղեցոյ ի մանկութենէ մինչ ի ծերութիւն շինեցի զտունս աղաքից... որ դիպցելովս Յոհանիսի և ստացայ ինձ յիշատակ հոգեւոր Բ աւր պատարագ...»:

Հյուսն Մխիթարի մասին հիշատակում են նաև ժամանակի պատմական աղբյուրները. «Շինեաց և դրատուն մի,— պատմում է Կիրակոս Գանձակեցին,— գեղեցիկաշեն յարկօք, արուեստաւոր ունելով զհիւսն Մխիթար, որ ի բազում իրս աշխատ եղև եկեղեցեաց և վանիցն»³⁴:

ԺԵ) Պարիսպ.— Գոշավանքը շրջապատված է եղել պարսպով, որի մասին հիշատակվում է Ս. Աստվածածին եկեղեցու վերանորոգման և զանգակատան կառուցման արձանագրությունների մեջ, որոնք հետևյալներն են.

«Մեկ Խցնատիւս վարդապետ և որ մերն նորոգեցաք գեկեղեցիս և եղաք զպատուարս, տեկեցաք այգի եկեղեցոյ...»

«Կամաւն ամենակային Աստուծոյ ի քվին Հայոց: Չե: (1291) . . . դրանք պարիսպ շուրջ եկեղեցոյս և այլ աշխատութիւնս...»:

Առաջին արձանագրությունը տարեթիվ չունի, ուստի հայտնի չէ, թե երբ է հիմնվել սկզբնապարիսպը: Երկրորդ արձանագրությունից միանգամայն որոշակի է, որ զանգակատան կառուցմանը զուգընթաց, շինվել է վանքի պարիսպը՝ 1291 թվականին և ուրիշ աշխատանքներ, որոնց անունները չեն հիշատակվում արձանագրության մեջ: Այդ պարսպից այժմ բաքեր անգամ չկան:

Գոշ գյուղում, բացի Գոշավանքից, պահպանվել են նաև ուրիշ հուշարձաններ, որոնց մասին հարկ չհամարեցինք հիշատակել:

34 Կիրակոս Գանձակեցի, էջ 209.





ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԻՆՆՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ



դարում Ս. Էջմիածնի հայագիր առաջին դպրոցի հիմնադիր-ուսուցիչներն են եղել Ս. Սահակ Պարթև հայրապետը և Ս. Մեսրոպ Մաշտոցը: Նրանք են կազմել առաջին հայերեն այբբենարանը: Այդ դպրոցը եղել է մի «մայր ուսումնարան», որտեղ աշակերտների մեծ խմբեր են եկել «ի գաւառաց Հայաստան Աշխարհի, յորդեալք և դրդեալք հասանէին ի բացեալ աղբիւրն գիտութեան Աստուծոյ, քանզի յԱյրարատեան գաւառին բղխեցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ» (Կորյուն): Այդ դպրոցի սաները քրիստոնեւոթյան, գիտութեան և հայրենասիրութեան լուսար առնելով իրենց սուրբ ուսուցիչներից, սփռել են հայ ժողովրդի մեջ: Ե դարում Էջմիածնի դպրոցի անդրանիկ սաներն են Հովսեփ կաթողիկոս Վայացձորեցին և Ղևոնդ Երեց Վանանդեցին, մեր թարգմանիչ վարդապետների անդրանիկ և կրտսեր խումբը՝ Եղնիկ Կողբացի, Կորյուն, Եղիշե, Խորենացի, Հովսեփ Պաղնացի, Հովհան Եկեղեցացի, Դավիթ Անհաղթ փիլիսոփա, Ղազար Փարպեցի և այլն:

Մեր հայրապետները իրենց գործունեության ընթացքում մեծ կարևորություն են տվել ազգային կրթությանն ու գիտությանը, որոնց համար չեն խնայել իրենց ուժն ու իրանդր:

Հայոց Եկեղեցու պատմության մեջ կրթական և մշակութային նվիրական հիշատակներ թողած կաթողիկոսների շարքում նշանակալից տեղ է գրավում ԺԹ դարի մեր

մեծագործ հայրապետ Գևորգ Դ-ը, որը Ս. Լուսավորչի Գահը բարձրացավ 1867 թվականի մայիսի 21-ին: Նրա անվան հետ է կապված Ս. Էջմիածնի Գևորգյան Ճեմարանի հիմնադրումը: Հայ Եկեղեցու ապագան ապահովելու, մեր նախնիների սուրբ ավանդները անկորուստ պահելու և հայ կյանքում մեր մայրենի Ս. Եկեղեցու առաքելությունը հավատով և սիրով արդյունավորելու համար նա կարիք զգաց անձնվեր, ուսյալ, հավատալիք և ազգասեր եկեղեցականների և ուսուցիչների, ազգային գործիչների, որոնք իրենց հմտությամբ ու բարոյական առաքինությամբ կարողանային ըստ արժանվույն առաջնորդել և լուսավորել հայ ժողովրդին: Այս նվիրական նպատակը իրագործելու համար Գևորգ Դ կաթողիկոսը ձեռնարկեց Մայր Աթոռում մի նոր ձեմարանի շինություն: Գևորգյան Ճեմարանը ԺԹ դարի մեր ազգային զարթոնքի մեջ կատարեց վճռական և առաջադիմական մեծ դեր:

90 տարի առաջ, 1869 թվականի մայիսի 25-ին, Գևորգ Դ կաթողիկոսը, իր օծման երկրորդ տարեդարձի օրը, մեծ հանդեսով նոր ձեմարանի հիմքը դրեց և այն կոչեց «Ժառանգավորաց Հոգևոր Ճեմարան Ս. Գեվորգյան», սակայն հասարակության բերանը Գևորգյան անունը տիրեց...» (Օրմանյան, «Ազգապատում», Գ հատ., էջ 4240):

1874 թվականի հուլիսին հոգեւույն Հայրապետը դիմեց հայ ժողովրդին մի շրջաբերական կոնդակով և մեկ առ մեկ բա-

ցատրեց, թե ի՛նչ խորհրդով և ի՛նչ նպատակով է ձեռնամուխ լինում Ճեմարանի կառուցմանը. «... Յաւելով յԱղգիս մերում ղթիւ հոգևոր դաստիարակաց, բանիբուն բարոյչաց, քաղցրուտոյց վարդապետաց, բարեսէր դպրապետաց, արիասիրտ հովուաց, մեծարգոյ իմաստասիրաց, համառօտ ասել ի բարեպաշտ վարս կրթեալ և կարևոր ուս-

ումուցիչներ, հայրապետական կոնդակը առաջ է քաշում և այն պարտականութիւնները, որ ունի Աղգը դեպի այդ սուրբ հաստատութիւնը: Համարելով Ճեմարանը «...իրեւ նորաբողբոջ, ամրապինդ շաղկապ կրօնական և ազգային միութեան իւրոյ ընդ Ս. Աթոռոյս էջմիածնի... Հայել յայս քաղցրագութ աշօք խնամակալութեան որպէս



ԳԵՂՈՐԳ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍ

մամբք պերճացեալ եկեղեցականաց և ուսուցիչ վարդապետաց...» («Արարատ», 1874 թ., էջ 261): Այսպես բանաձեւելով Գեղորգյան Ճեմարանի նպատակը՝ որպէս կրթութեան կարևոր վառարանի, և նրա խընդիրները՝ Աղգին տալ վարդապետներ, քահանաներ և Հայոց եկեղեցու ոգով կրթված

ի ծառ ինչ նորատունկ կենդանացուցիչ զօրութեան ազգային հոգևոր դաստիարակութեան և լրացուցիչ պիտոյից Աղգի և եկեղեցւոյ...»:

Հայ ժողովուրդը իր նյութական և բարոյական օժանդակութիւնը չխնայեց և սիրով բնդառաջեց լուսամիտ հայրապետի այդ

հրավերին: 1874 թվականի սեպտեմբերի 28-ին, Ս. Գևորգի տոնի օրը, կատարվում է հանդիսավոր օրհնությունը կամ նավակատիճը նորաբաց Գևորգյան ձեմարանի և դասերը սկսվում են նույն ամսի 30-ին, 60 աշակերտներով, (աշակերտության թիվը հետագայում հասավ հարյուրների):

Գևորգյան ձեմարանի առաջին տեսուչ է նշանակվում Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանը, փոխ-տեսուչ՝ Սուբիաս վարդապետ Պարզյանցը, ուսուցիչներ՝ Հավհանես վարդապետ Երեմյանը, Արիստակես վարդապետ Սեդրակյանը, Գևորգ վարդապետ

ցուֆյան, վարք սրբոց (ի տոմարի Հայաստանյայց Եկեղեցվո), եկեղեցական իրավաբանություն, ազգային և ընդհանուր դիցաբանություն, փիլիսոփայություն (հոգեբանություն և տրամաբանություն) և պատմություն փիլիսոփայության, ազգային պատմություն և աշխարհագրություն, ընդհանուր և ռուսաց պատմություն և աշխարհագրություն, թվաբանություն, բնագիտություն (ֆիզիկա) և տիեզերագիտություն, բնական պատմություն, հայկաբանություն և մատենագրություն հայոց, ռուսաց լեզու, ֆրանսերեն, լատիներեն, հունարեն, երբայերեն,



ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏՐ ԵՎ Հ. ՄԱՆԱԴՅԱՆԸ ՄԻ ԽՈՒՄԲ ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ
(30 սեպտ. 1904 թ.)

Սուրենյանցը և ուրիշներ: Սկզբում ձեմարանը վեց դասարան է ունենում, հետագայում ավելանում են նաև երեք լսարաններ: Ըստ առաջին տարվա ծրագրի ԺԱ տրամադրության, ավանդվող առարկաներն են՝ կրոնագիտություն (ընդարձակ, ըստ դավանության Հայաստանյայց Եկեղեցվո), պատմություն Հայոց Եկեղեցվո, ընդհանուր եկեղեցական պատմություն, գիտություն և մեկնություն Սուրբ Գրոց, աստվածաբանություն (տեսական, գործնական, բարոյական և բաղդատական), տոմարագիտություն (եկեղեցական, և հմտություն ժամակարգության), կրթություն եկեղեցական բնաբաս-

գժագրություն և նկարչություն (առավելապես եկեղեցական), ձայնագրություն հայոց:


Սրանց հետագայում ավելացվում են մի շարք այլ առարկաներ ևս:

1874 թվականի հոկտեմբերի 16-ին անակրնկալ կերպով հրկիզվեց ձեմարանի շենքի մի մասը՝ հանդիսարանը, երկու ննջարաններ, հանդերձարանը, սեղանատունը, խոհանոցը, տնտեսատունը, տնտեսի սենյակը, վերին և ներքին հարկերի լվացման սենյակները, լվացարանը, վերակացուներին հատկացված երկու սենյակները: Այս դժբախտ դեպքը որքան նյութական մեծ վնաս տվեց Ս. Էջմիածնին, այնքան էլ բարոյապես

մեծ վիրշա սլատճառեց Գեորգ Դ-ի սրտին։ Սակայն ուր որ եռանդուն սեր և հաստատամիտ նպատակ կա, այնտեղ վհատություն չկա և ամեն արգելք և արկած կհաղթահարվեն։ Գեորգ Դ կաթողիկոսը առանց հուսահատվելու ու անմիջապես ձեռնարկում է վերաշինության և գլուխ է բերում այն։ Այնպես որ նորարաց ճեմարանի ընթացքը չի խանգարվում։

Մինչև 1889 թվականը ճեմարանը ոչ մի հոգևորական չի տալիս։ Արևելահայաստանից և Արևմտահայաստանից և հեռավոր

և նույն տարվա սեպտեմբերին նշանակվում է աստվածաբանական գիտությունների ուսուցիչ և քարոզիչ ճեմարանում։ Իր ժամանակի հայ հոգևորականության մեջ ամենից ավելի հայտնի և գիտուն ու աստվածաբան եկեղեցականը իր ուշադրությունը և եռանդը ճեմարանի լսարանների, հատկապես Գ լսարանի վրա է կենտրոնացնում։ Նա ուսանողության մեջ հայրենասիրական-եկեղեցասիրական շարժում է առաջ բերում։ Օրմանյանի ազդեցության տակ ուսանողներից շատերը ուխտում են նվիրվել Հայաս-



Գ Ե Վ Ո Ր Գ Յ Ա Ն Ճ Ե Մ Ա Ր Ա Ն Ը

հայ գաղութներից բաղում ուսանողներ էին գալիս Մայր Աթոռ, ուսում ստանում, հոգով, մարմնով, իմացապես զարգացած՝ ցրվում զանազան կողմեր, մեծ մասամբ մտնում ուսուցչության ասպարեզ։ Չնայած ճեմարան ավարտողների համար հոգևոր կոչումը ընդունել պարտադիր չէր, սակայն Մայր Աթոռի նախկին ժառանգավորաց վարժարանի տեղը բռնած լինելով, սպասվում էր, որ միաբանության շարունակությունը կազմող սերունդը այնտեղից դուրս գա։

1887 թվականին Մակար կաթողիկոսի հատուկ կոնդակով Ս. Էջմիածին է հրավիրվում Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը

տանյայց եկեղեցու ծառայության սուրբ գործին։ Դժբախտաբար այս բարերար ազդեցությունը կարճ է տևում՝ Օրմանյան սերբազանի ցարական կառավարության պահանջով հեռացվելու պատճառով։

Այնուամենայնիվ 1889 թվականին մի խումբ ճեմարանավարտներ սարկավազ են ձեռնադրվում տեսուչ Արշակ Նահապետյանի հետ. «Ամսույս 17-ը և 18-ը հունիս (1889 թ.) նշանավոր օրեր էին։ Այդ օրերը կատարվեցին ի վաղուց ցանկալի ձեռնադրությունը Ս. Գայանեի վանքում՝ սրբազործությամբ գերաշնորհ Ներսես եպիսկոպոսի։ Սուրբ Էջմիածնի ճեմարանը հնգհոսա-

նամյա երկունքից հետք չի վերջոյ տվեց երախայրիքը Հայ եկեղեցուն և Ազգին, 17-ին առաւելական սարկավագութեան աստիճան ստացան Ճեմարանի տեսուչ մեծարգո Արշակ Նահապետյանը և Ճեմարանի ուսումնավարտ պ. պ. Կարապետ Մեր-Մկրտչյանը և Գևորգ Զորեքչյանը և երրորդ լսարանի ուսանող Գարեգին Հովսեփյանը» («Արարատ», 1889 թ., էջ 353): Սրանց վրա ավելանում են Տիգրան սարկավագը (Տիրալը արքեպիսկոպոս) և ուրիշներ: Սարկավագներից Կարապետ Տեր-Մկրտչյանը և Գևորգ Զորեքչյանը ուղարկվում են Գերմանիա՝ առաջինը աստ-

ղգով: Ահա Ճեմարանի բացումից քսան տարի հետո, 1894 թվականի սեպտեմբերի 11-ին, խաչվեցաւ տոնին, առաւելական ժամը 8-ին, Գևորգյան Ճեմարանի երախայրիք սարկավագները համախմբվելով Մայր Տաճարի զանգակատան մոտ, հանգուցալ Գևորգ Դ կաթողիկոսի դամբարանի շուրջը, միաբանութեան, Ճեմարանի ուսուցիչների և սաների հետ, հոգեհանգիստ են կատարում, որտեղ Կարապետ Սարկավագ Տեր-Մկրտչյանը՝ ապագա գիտուն աստվածաբան վարդապետը, սրտառու ձառ է արտասանում և իր ընկերների անունից երախտագի-



ԼՆՈՆ 1906/7 թ. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

Զ ԳԱՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀՆՏ

վածաբանութիւն, իսկ երկրորդը՝ երաժշտութիւն սովորելու:

Մինչև 1894 թվականը, շուրջ քսան տարի, Ճեմարանը տվեց ականաւոր ուսուցիչներ, հայկաբաններ, որոնք հայ ժողովրդի մտավոր վերածնութեանը սատարեցին և զարթեցրին սեր, դեպի մայրենի լեզուն և գրականութիւնը: Եվ իրականացավ նաև հիմնադիր հայրապետի իսկական իղձը, այն է՝ ունենալ Ճեմարանից նշանավոր նոր հոգեւորականներ, զինված Քրիստոսի սուրբ հավատով ու մեր նախնայաց նախանձահույզ

տական սրտագին զգացումներ է հայտնում Գևորգ Դ կաթողիկոսի հիշատակին իրենց մոտաւոր ձեռնադրութեան առթիւ. «...Այժմ, Հայր... փափագներդ լցված են, հեռատես խորհուրդներդ կատարումն ընդունած. քո մեծ գործին արդյունք, բազմապատիկ խնամոցդ տրիտուր, ահա Տիրոջ սեղանի առաջ ենք դնում մեր սրտերը, մեր հոգին, մեր ամբողջ կարողութիւնը, նորան լինի ամենը, նորա տան սպասավորութեան սուրբ գործին նվիրված» («Արարատ», 1894 թ., էջ 291): Նույն օր Ս. Գալանեի վանքում, խրմյան

Հայրիկի հանձնարարությունը ու ներկայությունը, Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը պատարագ է մատուցում և կուսակրոն քահանա ձեռնադրում յոթը սարկավազների, որոնցից վեցը Ճեմարանի շրջանավարտ սաներ էին: Ձեռնադրվածներն են՝ Կարապետ արեղա, Կոմիտաս արեղա, Հուսիկ արեղա, Եղնիկ արեղա, Տիրայր արեղա, Բենիկ արեղա, մյուս ոչ ճեմարանականը՝ Վահան սարկավագ Դադյանն էր, որ կոչվեց խաչիկ արեղա:

Այդ օրվայից սկսվում է Ճեմարանի կյանքում մի նոր շրջան: Այդ թվականից հետո շատ ճեմարանականներ նվիրվում են Ս. Եկեղեցու սպասավորության գործին:

Ճեմարանը տվել է նաև անվանի հայագետների, պատմաբանների, երաժիշտների մի փառավոր սերունդ, օրինակ՝ Սպիրիտոն Մեյիթյանը, Մակար Եկմայանը, Մանուկ Աբեղյանը, Ստեփանոս Մախասյանը և ուրիշներ: Ճեմարանում սովորել են նաև, թեև ոչ լրիվ կերպով, Ավետիք Իսահակյանը, Դեբենիկ Դեմիրճյանը, Ակսել Բակունցը և հայ ժողովրդի արժանավոր զավակ Անաստաս Միկոյանը:

1899 թվականի սեպտեմբերի 25-ին, Ճեմարանը բոլորում է իր գոյություն 25-ամյակը, 1899—1900 ուսումնական շրջանին Ճեմարանը ունենում է 256 աշակերտ: Ուսանողները զանազան շրջաններից էին: Թեմերի համեմատ աշակերտները այսպես էին բաժանվում այդ թվականին. Երևանի թեմից 129 աշակերտ, Տաճկահայերից 60, Պարսկահայերից 12, Վրաստան-Իմերեթի թեմից 25, Արցախու թեմից 21, Բևաթարիի և Նոր-Նախիջևանի թեմից 6, Շամախու թեմից 2, Ասեղախանի թեմից 1, ընդամենը 256 աշակերտ:

Գևորգյան Ճեմարանում դաս են տվել ու տեսչություն արել մի շարք նշանավոր հոգևորականներ, մտավորականներ ու մանկավարժներ, որոնցից են՝ Գարրիկ արքեպիսկոպոս Այվազյանը, Սուբիաս արքեպիսկոպոս Պարզյանցը, Արիստակես արքեպիսկոպոս Սեդրակյանցը, Ա. Նահապետյանը (հետագայում եպիսկոպոս) Ս. Մանդինյանը, Ս. Պալասանյանը, Լեոն, Կարապետ Կոստանյանը, Մանդեն Մանդինյանը, Օրմանյանը, Հրաչյա Աճառյանը, Հակոբ Մանանդյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Ճեմարանի նախկին սաներ՝ Կարապետ եպիսկոպոս Տեր Մկրտչյանը, Կոմիտաս վարդապետը, Մակար Եկմայանը, Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, Մանուկ Աբեղյանը և շատ ուրիշներ:

Ճեմարանը փակվեց 1917 թվականին: Նրա վերջին վերատեսուչն էր Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը:

14 տարի է անցել այն օրից, երբ 1945 թվականի նոյեմբերի 1-ին, երջանկահիշատակ Գևորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք վերաբացվեց Ս. Էջմիածնի Հոգևվոր Ճեմարանը, որի պաշտոնական վերաբացումը տեղի ունեցավ հանդիսավոր և խանդավառ իրադրության մեջ: Այսօրվա Ճեմարանը պատրաստում է հայոց պատմությունը լավ իմացող, լուսամիտ, հավատավոր, հայրենասեր, եկեղեցասեր, բարի վարքով, առողջ մտքի տեր հոգևորականներ, որոնց կյանքի ուղեցույցն է Լուսավորչի, Մեսրոպի, Սահակի, Նարեկացու, Շնորհալու ու Տաթևացու լույսը, հավատը և կենդանի ոգին:

Տարեցտարի համալրվում են Ս. Էջմիածնի միաբանության շարքերը: 14 տարվա ընթացքում վերաբացված Հոգևոր Ճեմարանը տվել է իր մի շարք շրջանավարտներ, որոնք այսօր հոգևոր աշխատանքի են անցել թե՛ Ս. Էջմիածնում և թե՛ հայրենի թեմերում և պատվով են կատարում իրենց պարտականությունները Հայ եկեղեցու և հայ ժողովրդի նկատմամբ:

Նորին Ս. Օծուխյուն Տ. Տ. Վազգեն Ա-Ամենայն Հայոց Հայրապետի օրոք Ճեմարանը բարձրացավ մի նոր աստիճանի և գործում է նրա իմաստուն ցուցմունքներով, անմիջական հսկողության ու ղեկավարության տակ:

Վերաբացված Հոգևոր Ճեմարանի անդրանիկ հոգևորական վերատեսուչն է Երուսաղեմի միաբան և Ժառանգավորաց վարժարանի և Բնծայարանի նախկին վերատեսուչ Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը, որն ունի ավելի քան 30 տարվա մանկավարժական փորձ և նվիրված ու անշահախնդիր եկեղեցական անբասիր անուն: Ճեմարանը ունի որակյալ բարձրագույն կրթության տեր դասախոսական կազմ, որի ջանքերի շնորհիվ Ճեմարանի ուսանողության կրթական մակարդակը գնալով ավելի է բարձրանում:

Նորին Ս. Օծուխյուն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը Հոգևոր Ճեմարանի 1956—1957 ուսումնական նոր տարեշրջանի բացման առթիվ, սեպտեմբերի 17-ին, Իր խոսքի մեջ ասաց. «Մենք այստեղ կենտապնդենք կարեվոր հալատակ մը, դուր պիտի դառնաք Բրիտանիայի ալգիին, Անոր եկեղեցիին նըշ-

մարիտ մշակներ, Հայ Եկեղեցիին հավատարիմ սպասավորներ: Հոգևորականի համեստ սքեմի տակ, դուրս պիտի դառնա հայ հավատացյալ ժողովուրդին հոգևոր մխիթարություն բաշխող անձնավորություններ: Մենք ձեր մտքի, սրտի, հոգիի ուժերը պիտի հավաքենք մասնիկ առ մասնիկ, զորացնելու համար մեր Ս. Եկեղեցին... «Վազգեն Ա Հայրապետ Հայոց», էջ 290): Ահա այս գիտակցությամբ է, որ Հոգևոր Ճեմարանի այս տարվա հինգ շրջանավարտներս ուխտել ենք նվիրվել Հայ Եկեղեցուն, դառնալու համար հայ հավատացյալ ժողովրդի հոգևոր սպասավորներն ու մխիթարիչները մեր համեստ ուժերի ներածի շափ:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի դերը անցյալում հայ ժողովրդի կյանքում մեծ է եղել և շարունակում է մնալ մեծ: Եվ, Վահագն Հայրապետի գեղեցիկ բացատրությամբ ասած՝ «Մայր Աթոռ Ս. Էջմիածինը գլուխն է մեր Ս. Եկեղեցիին, և ան իր զինվորյալ միաբանությամբ և իր Հոգևոր Ճեմարանով պետք է դառնա լուսատու փարոս, օրինակ, առաջնորդ և ներշնչարան համայն հայ հոգևորականության և հայ ժողովրդին...»:

ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՀՐՈՒԹՅԱՆ





ՅՈՒՐԹԱՍ ԱՆԹԻԼԻԱՍ...



որին Ս. Օծուրյուն Ամենայն Հայոց Հայրապետը, կարծեք մարգարեանալով, 1956 թվականի հուլիսի 15-ին Մայր Տաճարում խոսած Իր պատմական Բարոզի մեջ, իրավամբ հարց էր տալիս. «ՅՈՒՐԹԱՍ ԱՆԹԻԼԻԱՍ»:

1956 թվականի փետրվարի 20-ից սկսյալ, երկար և ձիգ եղավ շղթան Անթիլիասի գործած եկեղեցախանդ ու ազգավեհա արարքների: Այդ բոլորը հանրահայտ են և ծանոթ ամենին, ու ժամանակին դատապարտվել են Մայր Աթոռի կողմից, համայն հայ ժողովրդի խղճի առաջ:

Այնուամենայնիվ դժվար էր այդ օրերին երեակայել, թե մինչև ո՞ւր կարող են հասնել մեր օրերի Թորոսովիչների արարքները, իրենց գլուխն ունենալով տխրահուշակ «Մեկ ՄՈՄ»-ը, որը գործում է ապօրինի կերպով՝ Տանն Կիլիկիո կաթողիկոսության անունով, և որի գործերին Հուպան անգամ կարող էր հախանձել:

1959 թվականի մայիսի 28-ին, Խորեն Եպիսկոպոս Բարոյանը, դավադիր ձեռնով բացված մի մուր դռնից, սպրդում է Ամերիկայի Միացյալ Նահանգների ծերակույտի դահլիճից ներս և այնտեղ արտասանում է Բաղախան մի նառ, կոչ անելով Ամերիկային պատերազմի՝... փրկելու համար Սովետական Հայաստանը ընկերվարական կարգերից, կարգեր, որոնք նրան դուր չեն գալիս:

Պետք է ասել և ընդգծել միանգամայն, որ մի հայ Եպիսկոպոսի ներկայությունը և նրա ելույթը օտար պետական հաստատությանց հարկի ներքո, կամ նրա տեսակցությունը պետական բարձր անձնավորությունների հետ, ոչ միայն անբնական և վնասաբեր երևույթներ չեն, այլ, ընդհակառակը, պատվաբեր. ցանկալի և նույնիսկ անհրաժեշտ, սովորաբար լինելով, որ Սփյուռնում մեր եկեղեցին և ժողովուրդը ապրում են պետական տարբեր սխտեմների ներքո և ցրված ողջ աշխարհով մեկ:

Նման այցելություններ անցյալում կատարել են մեր հայրենասեր հայրապետները, ինչպես նաև Նորին Ս. Օծուրյուն Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը, որը 1956 թվականի փետրվար—մայիս ամիսներին, Սփյուռնում կատարած Իր հովվապետական այցելությունների ընթացքում, Իր բարձր

օրինակով ցույց տվեց նման հանդիպումների հայրենասիրական, եկեղեցաշեն և ժողովրդանվեր բնույթը, երբ այցելում էր Լիբանանում, Եգիպտոսում, Ֆրանսիայում և Մոսկվայում հանրապետությանը նախագահներին և պաշտոնական այլ անձնավորություններին:

Վեհափառ Հայրապետը հրահանգել է և ցույց տվել Սփյուռքի մեր բնակավայր առաջնորդներին՝ նման հանդիպումների ճանապարհը, ինչպես օրինակ 1959 թվականի մայիսի 19-ին Հյուսիսային Ամերիկայի նորքնափր առաջնորդ գերապատիվ Տ. Սիոն արհեստագիտության Մանուկյանին հղած Իր նամակում, երբ գրում էր.

«ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՇՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՃԱՌԵՅ ՄԵՁ ՁԵՐ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՇԻՆԳՏՈՆ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐ ԵՐԿՐԻ ՓՈԽ-ՆԱԽԱԳԱՀԻ ՄՈՏ, ԻՆՉՊԵՍ ԵՎ ԾԱՂԿԵՊԱԿԻ ՄԸ ԶԵՏԵՂՈՒՄԸ ԱՆԾԱՆՈՒ ԶԻՆՎՈՐԻ ԳԵՐԵՁ-ՄԱՆԻՆ ՎՐԱ:

ՄԵՁ ՀԱՄԱՐ ՄԻԹԹԱՐԱԿԱՆ է ԵՎ ՀԱՃՆԻ ՏԵՍՆԵԼ, ԹԵ ՄԵՐ Ս. ԵԿԵՂԵՅՎՈ ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ, ՂԵԿԱՎԱՐ ԱԶԳԱՅԻՆՆԵՐԸ ԵՎ ՄԵՐ ՀԱՎԱՏԱՅՅԱԼ ԺՈՂՈՎՈՐԴԸ, ԻԲՐԵՎ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐԸ ԻՐԵՆՅ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ, ՀԱՃԱԽ ԱՌԻԹՆԵՐ ԿՍՏԵՂԾԵՆ ՅՈՒՅՅ ՏԱԼՈՒ ԻՐԵՆՅ ԱՆԿԵՂՄ ՍԵՐԸ ԵՎ ԵՐԱՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՊԻ ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՎՍՏԱՀ ԵՂԵՔ, ԹԵ ՆՄԱՆ ԱՄԵՆ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՄԵՁ Ս. ԷԶՄԻԱՍԵՆ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՁ ՀԵՏ է»:

Մայր Աթոռ օգտակար և կարևոր է համարում Հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների նման հանդիպումները, օտար բարեխնամ կառավարությանը ներկայացուցիչներին, հաստատություններին կամ կանոններին, տալու համար Հայ եկեղեցու ողջույնն ու օրհնությունը, հայաճեղով հայ ժողովրդի երախտագիտությունը և հավատարմությունը հանդիպ հյուրընկալ այդ պետությանը և ժողովուրդներին և խոսելու՝ հայ եկեղեցականության և հավատացյալների հավատարմության, շինարար ոգու և աշխատանքի մասին, որպես տվյալ երկրի և պետության օրինապահ և պարկեշտ ֆաղափացիներին:

Բացառված չէ նաև այն հանգամանքը, որ նման առիթներ օգտագործվեն, խոսելու համար նաև հայ ժողովրդի դարավոր սուրբ հավատի, մշակույթի արժեքների մասին, մեր անցյալ դժբախտությունների և մեր ներկա ազգային վերածննդի, ինչպես նաև հայ ժողովրդի արդար իղձերի մասին:

Խորեն եպիսկոպոս Բարոյանի Ելույթը Ամերիկյան սենատի մեջ, սակայն, կրում է բոլորովին այլ բնույթ և ունի այլ նշանակություն:

Այդ տեսակետից մենք վստահ ենք, որ հուսախար եղած պիտի լինեն ամերիկյան ծերակուտականները, որոնք, անտարակույս, մի հոգևորականի բերնից պիտի ցանկանային լսել խաղաղության խոսքը, համերաշխության խոսքը, ժողովուրդների և պետության միջև բարեկամության խոսքը, որի ծառայել ունեն արդարև մեր երկրագնդի բոլոր ժողովուրդները:

Իգուր է սակայն Բարոյան եպիսկոպոսի խոսքի մեջ փնտռել ավետարանական խաղաղության մի որևէ գաղափար:

Սենատում իր այդ արտասանած ճառի մեջ նա հանդես է գալիս ֆաղափական գործչի և պատերազմի հրձիգի տխուր և դատապարտելի դերի մեջ: Եվ ի՞նչ նպատակով միթե: Արդյո՞ք պահանջելու՞ համար այն երկիրը, որի անունն է կրում Անթիլիասի գահակալի տառագիր Աթոռը: Ո՛չ: Նրա խոսքերի մեջ զգո՞ւմ եմ գոնե մի շոյ «Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա» ֆաղցր ու ար-

յար տեսիլից: Ո՛չ. Այդ հաղի մեջ ակնարկություն կգտնե՞մ հայ ժողովրդը այսօր ամայացած Արևմտյան Հայաստանի և մեր ազգային արդար դատի կապակցությամբ: Ո՛չ. Այդ բոլորը չկան ու չկան, ոչ իսկ իբրև ներքին ապրում:

Բարոյան եպիսկոպոսի հաղթ մեկ նպատակ է հետապնդում, այն է՝ բարոյափշուր անել տալ (?) մեր ներկա Սովետական Հայաստանը, այսինքն եղածն էլ ֆանդված տեսնել, որ արդյունք է դարավոր մեր մահառումների և անվերջ նահատակությանց, արդյունքը հայ ժողովրդի ֆառասուն տարիների հերոսական աշխատանքի և վերընծայված ազգային հանճարի:

Բարոյան եպիսկոպոսը ի՞նչ իրավունքով և ի՞նչ հանգամանքով և ո՞ւմ անունից խոսում է և հառում: Իր կյանքում երբեք տեսել է նա Արարատը, համբուրել է մեր բազմադարյան Իջման Ս. Սեղանը, ոտը դրել է Հայրենիքի սրբազան հողի վրա, խոսքի նստել է Հայաստանի շինականի, բանվորի կամ մտավորականի հետ, տեսել է Նրեանի մանկանց ծիծաղը: Ի՞նչ կապ կա հայոց հայրենի ներկա իրականության և նրա միջև:

Բարոյան եպիսկոպոսը, որպես կիլիկեցի, շատ-շատ կարող էր կիլիկյան երկրի մասին խոսել Ամերիկյան սենատում: Հետաքրքիր է, օրինակ, հարց տալ, քե նա ինչո՞ւ չի խոսել այդ մասին:

Բարոյանը, Լիբանանի ֆաղաֆացի, նստած Անքիլիաս կամ Նյու-Յորք, ֆաղաֆակությունը է խաղում հայ ժողովրդի հաշվին, հայաստանցիների հաշվին, մեր Հայրենիքի հաշվին:

Այսօր հուսախաբություններից, ողբերգություններից, այսօր արյունարցունքից հետո, միքե կարելի՞ է շրջվել ի տես նման խելագար արարների, կատարված հանուն մի ֆիչ փողի և հիվանդագին փառասիրությունների:

Հայաստանցու առողջ բնազդը և համայն հայության գիտակցությունը դատապարտության սյունին առջև կկանգնեցնեն ֆեզ, Բարոյան եպիսկոպոս, և միակամ կգոռան Բո Նրեսն ի վեր՝ ԳԱՎԱՀԱՆ:

«Յո՛ւ երբաս Անքիլիաս...»:

Բայց արդեն պարզ է լույսի նման, քե ո՞ւր է գնում Անքիլիասը: Արդեն արևի լույսի նման պարզ է, քե ո՞ւր է քաֆեված գաղտնիքը Զարեն եպիսկոպոսի 1956 թվականի փետրվար 20-ի միակողմանի ընտրության, սեպտեմբեր 2-ի ոչ կանոնական ձեռնադրության, էջմիածնական քեմերի հափշտակության և Մայր Աթոռիս հաշտության և միության համար արած բազմաթիվ կոչերի մերժման:

«ԱՓ ՄԸ ՈՒՂՆԿՈՐՈՒՅՍ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐ, ՄՈՌՅԱՄ ԻՐԵՆՅ ՈՒԽՏԸ ԵՎ ԻՐԵՆՅ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ, ՀՈԳԵՊԵՍ ԿՏՐՎԱՄ ՄԵՐ ՍՈՒՐԲ ՀԱՎԱՏՔԻ ՄԱՅՐ ԱՐՐՅՈՒՐԵՆ ԵՎ ՀԱՅՈՅ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՅՐ ՀՈԳՆ, ԱՆԳԻՏԱԿԻՅ ԵՒԱՆԴՈՎ ՄԸ ԼԾՎԱՄ ՆՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՄԵՐ ՀՈՏԸ ՅՐՎԵԼՈՒ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՀԱՓՇՏԱԿԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ, — գրում էր Վեհափառ Հայրապետը 1957 թվականի դեկտեմբերի 20-ի Անքիլիասի ռաճգությունների մասին Իր հայրապետական կոնդակի մեջ:

Անքիլիասը այսօր դարձել է արդեն ֆաղաֆական արկածախնդրության մի կենտրոն, միջազգային մի շուկա, որտեղ փորձում են վաճառքի հանել վերածնված հայ ժողովրդին և հայ Հայրենիքը:

Տխուր է անշուշտ, շատ տխուր, հաստատել այս բոլորը, որը խորապես ընդվզեցուցիչ է և դատապարտելի: Բարեբախտաբար սակայն այդ բոլորը միաժամանակ ծիծաղելի է:


Հայրենի երկրում ապրող և աշխատող, շինող և երգող հայ մարդու համար Բարոյան եպիսկոպոսը և նրա տերերը նման են պարզապես հիմար կաշաղակների, անգոր և անհույս: Նրանց մասին վստահ եմ, թե տարբեր չէ նաև կարծիքը ամերիկյան հարգելի ծերակուտականների: Տարբեր հարց թե, մի պահ, նրանք կարող են օգտագործել Բարոյանի և նմանների հիմարությունը, պարզապես որպես մի տեսակ ֆաղափական զվարճախաղ:

Գուցե մենք ևս մի քիչ շատ զբաղվեցինք Բարոյանի տխուր պատմությամբ: Թողնենք ուրեմն մեղյալը՝ բաղված ամերիկյան վիսկիի և պալատների գերեզմանի մեջ:

Այս առթիվ, հաճուն վեհափառ Հայրապետի, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը պետք է զգում Սփյուռքի հայ հոգևորականության և հայ հավատացյալ ժողովրդին հիշեցնելու վեհափառ Հայրապետի պատվերը և հայրական հորդորը, այն է՝ որպես եկեղեցական համայնք և եկեղեցական իշխանություն, Սփյուռքում հեռու մնալ ֆաղափական հորձաններից և փորձություններից և եկեղեցական հոգևոր առաքելությունը շփոթել ֆաղափական գործունեության հետ, ինչպես գրել է վեհափառ Հայրապետը 1959 թվականի մայիսի 19-ի Սիոն արքեպիսկոպոսին ուղղած իր նամակում.

«ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅ ՀԱՎԱՍՏԱՅՑԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ԻՔՐԵՎ ԵԿԵՂԵՑԻ, ՀԵՌՈՒ ՊԵՏՔ Է ՄՆԱ ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԻՐՔԵՐԻ, ՊԱՅԾԱՌ ՊԱՀԵԼՈՎ ԻՐ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԸ, ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂԻՂ ԴԱՎԱՆՈՒԹՅԱՄՔ ԵՎ ԲԱԶՄԱԴԱՐՅԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ԽԱՐՍԽՎԱԾ ԱՍՏՎԱԾԱԿԵՐՏ Ս. ԷԶՄԻԱՍԵՆԻ ՎԵՄԻՆ ՎՐԱ, ՊԱՀԵԼՈՎ ԻՐ ՄԱՅԻՆԻ ՆՎԻՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ ԵՎ ԻՐ ԻՄԱՑԱԿԱՆ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ. ԻՔՐԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԸԼԼԱԼՈՒ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՑՈՒՅՑ»:

«ԷԶՄԻԱՍԵՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Հ Ա Ն Գ Ի Ս Տ


ԱՐԺ. Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
(1884—1959)

1959 թվականի մայիսի 29-ին, կարճատև հիվանդությունից հետո, վախճանվեց Ապարան գյուղի Ս. Խաչ եկեղեցու ծխատեր Հովհաննես ավագ քահանա Հովհաննիսյանը:

Հանգուցյալը ծնված էր 1884 թվականին Ապարանում: Իր նախնական կրթությունն ստանում է իր ծննդավայրի ծխական դպրոցում: Նա իրր հավատալով ծնողքի զավակ, փոքր հասակից հատուկ ջերմեռանդությամբ և սիրով է կապվում Հայ եկեղեցու երաժրչ-տուրքյան և ծեսերի հետ: Հոգևոր ասպարեզի հանդեպ ունեցած սերը 1921 թվականին նրան առաջնորդում է դեպի Հայ եկեղեցու սպասավորության դասը: Երեանի Ս. Սարգիս եկեղեցում Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանից նա քահանա է ձեռնադրվում և մինչև իր մահը հանդիսանում է հավատարիմ և ավանդապահ հոգևորականը Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցու և ազնիվ ու անկաշառ հովիվը իր սիրեցյալ հոտի:

Իր բարվոք ծառայության իրր գնահատանք, հանգուցյալ Գևորգ Զ. Կաթողիկոսից ստանում է լանջախաչ կրելու իրավունք 1950 թվականին, ավագություն՝ 1951 թվականին և ծաղկյա փիղոն՝ 1953 թվականին:

Թաղման տխուր կարգը տեղի ունեցավ մայիսի 31-ին, Ապարանում, նախագահությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետի, մասնակցությամբ արժանապատիվ Տ. Հարություն քահանա Մարկոսյանի և Տ.



Նշան քահանա Հանեսյանի: Մարմինը ամփոփվեց եկեղեցու բակում:

Իր նվիրված և բարի հովվին վերջին հրաժեշտը տալու համար դագաղի շուրջն էր հավաքվել ամբողջ Ապարան գյուղի և շրջանների բնակչությունը:

Հավիտենական հանգիստ իր խոնջած մարմնին:

